

7569

Cap-Quercu 1899

910.4
6-87

910.4(55) 5

~~36~~

910.4
6-87 40.

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Մ.ՌԱԶՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՑ ՊԱՐՍԿ. ԵՒ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ
Տ. ՄԱՂԱՔԻԱ Ս. ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԵՐՈՒՆԵԱՆ

Գրեց

ԴՊԻՐ ՄԿՐՏԻԶ ԵՐԿԱՐԱԿԵՅԵԱՆ

1870
87081



«Մով կենցաղոյն Հանա-
պաղ զիս ալեկոծէ . . .
Նաւապետ ըստի լի՛ր
անձին խոյ ապաւէն»
(Նարայան)

2012

ՆՈՐ—ՋՈՒՂԱ

ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԵԱՆ ՎԱՆՈՒՅ

1899

2004

1335.7

Amey

*"Wunder" Cyper. Auf dem Grunde der me
in der meiste Anzahl:
Linn - Bäume
Nacht 16, 99*

F. W. M. 2/2

ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ
ՆՈՐԻՆ Բ. ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆՈՐ-
ԴԻՆ ՀԱՅՈՑ ՊԱՐՍԿ—ՀՆԴԿԱՍՏԱՆԻ



Յարգելի Պարոն .

Մարտիրոս Ս. Մ. Տէր Ոսկանեան

Մեծ. Տէր.

Կան մարդիկ՝ որ ապրում են միայն իրենց համար ,
այսպիսիների հայեցակէտն է անձնական գծուծ շահեր եւ
ոչ այլ ինչ . մարդկութիւնն , ընկերութիւնն , ազգը եւ այլն
ու իրենց շահերը՝ այս տեսակ մարդկանց մտքերը խռովող
հակահաշիւներ են : Կան էլ մարդիկ՝ որոնց մտքի սահմանը
այս տեսակ հակամարդկային նեղ գծերով պարփակուած
չլինելով՝ նուիրում են անձնովին հասարակական կեանքի
բարելաւոթեան համար , թէկուզ սեփական շահերի հետ
եւ իրենց կեանքն անգամ վտանգուի : Վերջիններից որ-
քան շատ թուով գտանում են լուսաւորեալ երկրներում ,
այնքան եւ պակաս են հակակրօնութեան շաւղով ընթա-
ցող ժողովրդների միջին :


Մեր նախնիքներից ոմանք նուիրուած զրական աշ-
խատութիւնների ուրիշ ոմանց նիւթական ձեռնտուութեամբ
ուսման լոյսը տարածում էին հասարակական խաւերի մէջ ,
մինչեւ մեր օրերումս էլ պակաս չեն այնպիսիներ՝ որք հա-
ւասարապէս արժանի են յարգանաց :

Այսպէս ուրեմն՝ եւ դուք Յարգելի Տէր , արժանի
էք յարգանաց եւ շնորհակալութեանս միանգամայն , որ իմ

սոյն խոնարհ եւ անդրանիկ աշխատութեանս Ձեր նիւթա-
կան օժանդակութեամբ ՚ի լոյս ածելուն նպաստեցիք Ձերով-
սանն մասամբ իւրիք, թողսւմ որ այս առթիւ սիրտս լցիք
երախտազիտական զղացումներով, ազաւել եւս ուրախ
եմ, որ Ձեր այդպէս հանդէս գալով տալիս էք ուրիշներին
էլ աղնիւ ու բարի օրինակ, մի խօսքով սրանով գրգռում
էք դէպի բարին եւ յօգտակարն ուրիշ շատերի էլ լինել
վեհանձն նմանօրինակ գործերով:

Աստ, 1899,
2 ին Յունվարի.

Ընդունեցէք առ միշտ Ձեզ յար-
գող բարեկամին շնորհակալիք,
Ձերդ Դ. Մ. Ե.





Ս. ՄԱՂԱՔԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՈՒՆԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՅ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՀՆԳԱՍՏԱՆԻ

ԻՒՐԵՒ ՆԱԽԱԲԱՆ

Բարձրապատիւ Տ. Մաղաքիա Ծ. Վարդապետ Տէրունեանը իւր Ամերիկայի Հովուական բարձր պաշտօնավարութեան չորրորդ տարին լրացնելու մօտ 1897 թուի ամրան ժամանեց ի Ս. Էջմիածին, ուր ամենայն Հայոց Հայրապետի յատուկ սիրոյն ու համակրանաց արժանանալով պատուաւոր միաբանների շարքում ընդունուեց : Նա իւր ժամանակը անօգուտ չ'անցկացուց Ս. Էջմիածնում՝ Ներսիսեան գիտնական ճանապարհորդների հետ ունեցած յարաբերութեան միջոցներէն էր դիւրացնում կատարելով թարգմանի գեր, որոնք 1897 թուին աւելի էին յաճախում :

Բացի սորանից Վեհ. Հայրապետը յանձնեց իրեն «Զանազանութիւն Հինգ դարուց» անուն Հայատառ թրջաբարբառ եռահատոր գրքի Հայերէն թարգմանութեան գործը : Մինչ այսպէս պարագում էր Բարձրապատիւ Հայրը, բացուեց 1898 թուի գարունը՝ որի հետ բացուեց և գործելու նոր չրջան և ընդարձակ ասպարէզ իրեն համար : Այս միջոցներին Բ. Ք. Սարաջեան Յովսէփ և Այվատեան Սահակ Ծ. Ծ. Վարդապետները թողլով իրենց թեմերը (Ա.ը Դավրէժն և Բ.ը Թեհրանը.) ժամանեցին ի Մայր Աթոռ : Արդ երեք կարևոր թեմերի (Պարսկ—Հնդկաստան, Ատրըր—պատական և Ամերիկա.) լքեալ դրութիւնը ոչ նուազ մտահոգութիւն էին պատճառում առանց այն էլ բաղմահոգ Վեհ. Հայրապետին, երեք թեմերն էլ Նպիտոսալոս Առաջնորդի էին կարօտ : Ն. Ս. Օծութիւնը խո-

հական իմաստութեամբ այս ամենն ի նկատի ունենալով, առանց յապաղման հրաւիրեց ի կոչումն Նախկողոսական աստիճանի վերոյնշեալ արժանաւոր հայրերը՝ նշանակելով նրանց Առաջնորդ երեք վիճակաց թափուր գահերի վերայ հետեւեալ կարգով՝ Բարձրապատիւ Հ. Տէրունեանը — Առաջնորդ Հայոց Պարսկ — Հնդկաստանի, Բարձրապատիւ Հ. Սարաջեանը — Առաջնորդ Նոր — աշխարհի գաղութին և Բարձրապատիւ Հ. Նշխատանը — Առաջնորդ Հայոց Ատր — պատականի :

Չեռնադրութիւնը տեղի ունեցաւ 21-ին Յունիսի 1898 թ. մեծ աշուք հանդիսաւորութեամբ Ս. Էջմիածնի Մայր տաճարում : Մինչ նորաստեղծ Սրբազաններն իրենց Անդրանիկ պատարագներն էին մատուցանում՝ Վ. հ. Հայրապետն իրենց կոնգակների և պաշտօնակներ գրութիւնների պատրաստութիւնն էր փութացնում :

Վ. հ. Հայրապետի չըջահայեաց և իմաստուն կարգադրութիւնն ուշադրութեան արժանի է՝ նշանակեալ Սուրբ Հայրերից առաջինը Նախկողոսական Պարսկ — Հնդկաստանի վիճակաց վերայ՝ անշուշտ իւր քարի նպատակն ունի, նա վերահասու եղել էր Բ. Ս. Հօր արդիւնաւոր պաշտօնավարութիւններին, որ ձիւթ տարիների ընթացքում վարած է նա Տաճկաստանի այլ և այլ քաղաքներում ինչպիսի են՝ Կիսլուս, Բաղդադ, Մալաթիա, Հալէպ, Բաղէշ, և (Կ. Պօլսի), Խապէօյ, Սամաթիա, Պալատ և այլ թաղեր և վերջին տարիներս Ամբրիկա. բացի սրանից Վ. հ. Հայրապետը նկատում էր Հ. Տէրունեանի մէջ աշխոյժ և կորով գործունէութեան՝ ինչպէս նաև Մահմէդական երկիրների քաղաքականութեան հմտութիւն, որոնց զուգընթացութեամբ միայն կարելի է բարիք ակնկալել այժմ :

Այսպէս և Սարաջեան Սրբազանի նկատմամբ,

որ երկար տարիներ Ամերիկայում Հովուական պաշտօնով եղել է և որին քաջ ծանօթ են երկրին օբէկները, ժողովրդին խառնուածքն ու ամենատեսակ պահանջները վասնորոյ յարմարագոյն քան զայն՝ Նոր — Աշխարհի Հայոց համար Ն. Ս. Օծութիւնը չէր կարող գտնել Մայր Աթոռում :

Մոյնպէս և Այվատեան Սրբազանին, որը բացի այլ տեղերի արդիւնաւոր պաշտօնավարութիւններից այս վերջին չորս տարիների ընթացքում Պարսկական Մայրաքաղաքում փոխանորդութեան պաշտօնով ապրել է և զիտէ Պարսից դիւանագիտական սկզբունքներով վարուիլ և որ ամենից աւելին է իւր երիտասարդական խանդավառ և միանգամայն եփուն բնաւորութիւնը յուսադրում էր ծերունի Հայրապետին, որ իրեն հաւատայ Ատր — պատականի նշանաւոր թեմը :

Ահա այսպէս երեք բքեալ թեմերի վիճակներն որոշուեցան Վ. հ. Հայրապետի հոգածութեան շնորհիւ յանձին նշանակեալ արժանաւոր Առաջնորդների, որոնց առաջման կարիքներ հոգալուց յետոյ իւրաքանչիւրն իւր վիճակն ուղեորուեց :

Այժմ, որովհետև բարեգիւպօրէն առիթ ներկայացաւ ինձ ուղեկցիլ բարձրաստիճան Հայրերից աւագ զի՝ Գերապատիւ Տ. Մաղաքիա Նախկողոս Տէրունեանի հետ մինչև Ն. Բ. Սրբազնութեան դահլ՝ եթէ չըկամենայի օգտուիլ առիթից ի գիր առնելու համար Սրբազան ուղևորի հետաքրքրական ճանապարհորդութիւնը դատապարտելի կը համարէի զիս, նկատելով որ հասարակ անհատների ճանապարհորդական գլուխածքներն անգամ չատ օգտակար և ախորժախօք ընթեռնելի են՝ ուր է մնում մի Առաջնորդի ուղևորութիւնը, որի ամեն մի քայլը՝ կապ ունի ազգային կեանքի

քի հետ . . . մի անձն որ ստեղծուած չէ միայն իրան համար ապրելու այլ ազգին և հանրային կեանքի բարելաւութեան համար տքնող և խոկացող գործօն մը չափ. ուստի չէ թէ միայն աւելորդ չեմ համարի իբրեւ արձան կանգնել ի յիշատակ ուղեորութեան Սրբազան ուղեորին այլ ուրախ զգում եմ զիս կատարող մի քաղցր պարտականութեան :

Դ. Մկրտիչ Երկարակեցեան.

7 ին Դեկտեմբերի 1898.
 Ե Վանս Ս. Ամենափրկչեան
 Նոր—Ջուղա :



Ս. Էջմիածնի—Յեթնեստ.

Յուլիսի 16 ին 1898 թ. Ն. Սրբազնութիւնք Տ. Տ. Մաղաքիս և Սահակ Եպիսկոպոսներ թողին Ս. Էջմիածինն ուղեորութեամբ դէպի իւրեանց վիճակները : Առաւօտեան ժամի 9 ին Մայր աթոռի միաբանութիւնը համախմբուած էր Նոր—Շինութեան առաջ Սրբազան ուղեորներին ողջերթ մաղթելու համար. Ն. սրբազնութիւնք զգածեալ սրտով տուին իրենց հրաժեշտի սրտագին ողջոյններն ամենքին և համբուրելով վերջին անգամ Ս. Էջմիածնի սրբութիւններն ու վեհավայրը՝ հեռացան Ս. Էջմիածնից արագընթաց կառքով : Կեսօրուան միջոցներին Երևան հասնելով Սրբազանները հանգիստ արին տեղւոյն Առաջնորդարանում : Երևանի Հայոց Առաջնորդարանը շինուած է մի եզակի ու հիասքանչ դիրքի վերայ, որի Պատշգամբի առաջ հաճոյքների անուշահոտ ծաղիկներն են սփռուած, դիտողը գոհում է, հարբենում է և անյուշութեան աշխարհն է գնում . . . հեռուանց փառապանծ, ալեորած Մասիսը, իւր ոտից տակ դրախտաբուրի Արաքսէս և Արարատեան դալարագուարճ դրախտավայրը, հէնց Պատշգամբի տակում անդնդային խորութեան միջից աղմկալից և փրփրերախ՝ ոլորապրտոյտ ընթացող Հրազդանը գերում գերբում են զգայուն Հայի սիրտը . . . Սրբազանները գիշերեցին այս տեղում, այս սիրուն օրօրանում, որ օրօրուում է Մասիս սառնապատ կրճքից փչած հողմով և հրազդանի հեշտալուր երգով . . . : Յուլիսի 17 ին առաւօտեան ժամի 8 ին յետ ճանապարհորդական պիտոյքների պատրաստութեան պօստային զնացքով շարունակեցին իրենց ճանապարհորդութիւնն դէպի Հին—Նախիջևան :

Այսօրուան (Յուլիսի 17) ճանապարհներն ըսկաած Երևանից գրեթէ մինչև Շարուրի սահմաններ՝ մանաւանդ Արտաշատի դաշտն, որ արդի Ղամարլու պէտք է իմանալ, մի երկար գիւղերի շարք է՝ շէնացած ալգիներով և ծառաստաններով, որոց միջից անցկացող իւրեքը հիացումի քնով է թմրում։ Արևմուտքի կողմից նշմարող Մայր կաթուղիկէների փառահնդ տեսքը մշուշից կապուտ հագած չքնադ ու լուռ հոգիների պէս սթափեցնում են մարդուս արթնցնելով լուզող լիշատակներ . . . ո՛չ նուազ և Հարաւում ամպահներձ մեր հսկալ ծերուկ պապը Մասիս, որի ճաղատ գլխից անդրացող փայլը խռովում է դիտողին երբ դպչի նորա տեսողութեան ջղերին :

Յիշատակների այս աշխարհից ուղևորող Սրբա-
զանները՝ տխուր էին հանդէպ այս թէ՛ զուարճալի և
թէ՛ տխրառիթ տեսարանների։ Միշտ մեր Հիւսիսից
Գեղամայ սարերն և Հարաւից Մասիսներն ունենալով
անցկենում ենք թողլով մեր ետեւից կարգով հետեւեալ
ծառազարդ գիւղերը․ Նորա—գաւիթ, Աղ—համգա-
լու, Գարա—համգալու, Իմամշահլու, Սապունջու,
Տօղանշահլու, Զիգամլու, Ղամարլու, Օվա, Շիրակլու,
Աւշահար և Դավալու, առաջին 10 գիւղերը հին
Աստան գաւառի դաշտի վերայ են և վերջին 2ը՝ Ուր-
ծի կամ Սրածի գաւառում, որ այժմ հասարակօրէն՝
Դավալուից իզատ միւսները Ղամարլուին են վերա-
բերուում և ասում են՝ Գեառնի մահալ։ Գեռ Դավա-
բերուում և ասում են՝ Գեառնի վերայ նշմարուում են Խոր-
լու չհասած աջ ձեռքի վերայ նշմարուում են Խոր-
վիրապի Վանքն ու կաթօղիկէն՝ մի ճլլակ քարա-
բլրի վերայ՝ մօտ Երասխի ափին, մեր առաջ ցըց-
ւում է մի ուրիշ քարաբլուր աստամնաձև, Դավալու
գիւղի քամակին կանգնած, որը դաշտի միօրինակ

նորարձութեան տեսքը խանգարում է : Դավալուն
երկրորդ Սթանցին է՝ Երևանից, այստեղ փոքր դա-
դարից լետոյ շարունակեցինք անցնիլ Դավալունի ան-
բեր դաշտից՝ իրիկնապահին Սադաբաք հասանք որ
Շարուրի դաշտում մի գեղեցիկ մաս է գրաւած, անուշ
ջուր, լուռ թի գետին, մեղմ կլիմայ, գիւղի միջից է
անցկենում Չանախչի գետը, գիւղը բնակուած է Պար-
սիկներից՝ մօտ 4—500 տանից բաղկացած :

Միթուլժեան մէջ շարունակելով մեր ճանապարհը երեկոյեան ժամի 11ին կառքերնիս կանգ առաւ Պաշ—նորաշէնու Պատի—սմանցու մօտին, ուր հսկելով գիշերն ի բուն՝ մուլթը փարատեցինք շնորհիւ այստեղի երգիչ մոծակների. այստեղը գիշերով մտնել և գիշերով դուրս գալուն պատճառաւ բան չկարողացայ իմանալ՝ բացի սրանից՝ որ մոծակների աշխարհ է, զայս առանց լոյսի էլ ամեն ուղեորի իմացնում են իրենքը՝ թարգելի մոծակները :

Յուլիսի 18 ի առաւօտեան ժամի 6 ին ուղեգնացող թեան թեւից բռնած յառաջանում ենք Շարուրի պտղաբեր հովտից անցնելով Արփայ—չայ կոչւած գետի վերայ շինուած կամրջից, որը հովտի լեռնաձորովում Հայ նորա—շէն գիւղի մօտի կրճուծն է :

Արփայ—չայ գետն է, որ Շարուրի դաշտին իւր կենսատու ջրով արբուցանելով՝ պտղաբերութեան կողմից թագուհի դաշտաց է հանդիսացնում, առանց որոյ Շարուրը մի անբեր անապատ կալող էր լինել ։ Գնում ենք՝ գէպի Արևելք մեր աջից ունենալով ընկեր Հայաստանի Գանգէսին (Արաքս) և փոքր Մասսի բազուկներին (այժմ Մակուալ լերինք), որոնք գուգրնթաց հասնում են մինչև Փայտակարանի լեռներին որոց հետ միախառնուած վերջինս բարձրանում է Կասպից ծովի վերայ Հարաւային Արևմտեան կողմից, իսկ առաջինը գէպի Հիւսիսում մի քիչ թեքուե-

լուց լետոյ միանում է Կուրի հետ և գնում են ծեծու-
ել Կասպից ծովի ամենի ալեաց հետ: Ձախից սիւնեաց
լեռների պարը՝ որ վերջանում է Սալիանի հովտին
վերայ և Կուրի ու Արաքսի գետախառնունքի մօտին:

Այնպեցած գիւղերի մէջ կարեւորներն են՝ Ծա-
րուրից մինչև Հին Նախ—իջևան հետեւեալները՝ Խա-
լիլար՝ Հայաբնակ, ալտեղի Հայերը շատ միամիտ և գոր
ծունեաց են, Ավրաղ՝ Պարսկաբնակ, Խոք՝ Պարսկաբնակ
և Ալլաբաղ՝ Հայաբնակ ու շէն գիւղ, Հին—Նախիջևա-
նի Արևմտահիւսիսում մի վերստով հեռի նրանից:

Երեկոյեան ժամի 4 ին մօտեցանք Հին—Նախի-
ջևանին, մօտակայ Բարձրաւանգակից գիտելիս քա-
ղաքը նման է բազմաթիւ ծառերով զարդարուած մի
մեծ փունջի, որը դրուած է մի տափարակ բլուրի վե-
րայ՝ որի շուրջ դաշտերի տարածութիւնը միայն կայ՝
արձակ հորիզոններով: Հին—Նախիջևանի Հիւսիսա-
յին Արևմտեան կողմում աչքի ընկնում է Նախիջևանի
ծործորաւոր լեռն. ուստից հանքային աղեր են ստա-
նում այս երկրի բնակիչները՝ այստեղի աղը գերա-
զանցում է Կողբի ու Կաղզուանի աղերին, այս կողմի
թուրքերը գովաբանում հետեւեալ առակով. «Նախ-
ջուանըն գուզի, Ծահ—թախտըն Գարփուզի, Թում-
բուլըն Գըզը . . .», —Նախ—իջևանի աղը, Ծահ—
թախտի ձմերուկը, Թմբուլի աղջիկը սրանով
ուզում են հասկացնել, որ Նախ—իջևանի աղի պէս
աղ. Ծահ—թախտի ձմերուկի պէս ձմերուկ և Թմբու-
լի աղջկան պէս աղջիկ չկայ աշխարհիս վերայ:

Քաղաքը մօտանք ժամի 4 չէին, Ն. Սրբազնութիւնք
տեղւոյն Յաջորդարանում ընդունուեցին Բարձրապա-
տիւ Յաջորդ Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանցի կող-
մից. Հ. Կիւրեղը Ս. Էջմիածնի արժանաւոր վարդա-
պետներից մինն է՝ երիտասարդ հասակաւ, ուսումն
աւարտած է Գէորգեան ձեմարանում, աշխոյժ և գոր-

ծունեայ բնաւորութեան տէր՝ հաւատարիմ իւր կոչ-
ման և ճշմարիտ ազգասէր մի հոգեւորական է: Երե-
կոյեան կիրականամուտին բարեհաճեցան Սրբազան
Հայրերն Եկեղեցի գնալ աղօթելու՝ ժամերգութիւնից
լետոյ Բարձրապատիւ Կիւրեղ վարդապետի խնդրա-
նօք Գեր. Տ. Մաշաքիա Ս. Եպիսկոպոսը բեմին վե-
րայ բարձրանալով՝ ոգևորուած քրիստոնէական ոգով
խօսեց մի քարոզ, որը սովոր է աւետարանի աղով
համեմել՝ ճշմարիտ կեանքի սնունդը:

Հին—Նախիջևանը՝ Հայոց այս սուրբ երկիրը՝
Հայկական հին ուխտերի մի հանդիսավայր է՝ Ս. Հայ-
րերին մեծ ցանկութիւն կար մի առ մի այցելել այս
աշխարհում գտնուող Հայոց պատմական սրբատե-
ղիներին, սակայն իրենց կամքից անկախ պատճառ-
ներով չհասան իրենց ցանկութեանը միայն բաղդ-
ունեցան Յուլիսի 19 ին այցելել Ապրակունեաց ուխ-
տին (Երնջակու Վանք), որի Վանահայր Սմբատեանց
Ս. Եպիսկոպոսի կողմից յարգանք ընդունուելուց
լետոյ ստացան իւր մի երկասիրութիւնից մի մի օրի-
նակ ընծայ և նոյն օրուան իրիկնադէմին վերադար-
ձան Հ. Նախ—իջևանում պատգաստուելով հետեւեալ
օրուան ձանապարհորդութեան: Հ. Նախ—իջևանից
մինչև Դավրէժ երկու կառք ութսուն Ռուբլով վար-
ձուեցին: Յուլիսի 20 ին երկուշաբթի օրում Ն. Սրբ-
բազնութիւնք իրենց շնորհակալութիւն յայտնելով
Բ. Յաջորդին համբոյրներով բաժանուեցին նրանից
և Հ. Սեւրովս Տ. Սովիսեանից՝ վերջինս այն ժամա-
նակ Վեհ. Կաթողիկոսի ու Ս. Օինօգի որոշմամբ
այստեղ էր գտնուում մի ինչ որ գործուած գեղձում-
ների համար քննչական պաշտօնով. երիտասարդ
վարդապետները միխթարութիւն էին Սրբազաննե-
րին ձանապարհի այս կէտին վերայ:

Ժամի 7 ին անցկենում ենք փոքրիկ քաղաքին անշուք նեղ ու անմաքուր փողոցների ու շուկաների միջով, քաղաքին Արևելահարաւի կողմից դուրս գալիս մեր աջ բազկի վերայ է մի պանծալի աւերակ, որի խորդ ու բուրդ շինութիւնների հետքերը Հ. Նախ—իջևանի հարաւային և հարաւային արևելեան պառեկները գրաւում են՝ ասում են թէ այս է բուն Նախ—իջևան քաղաքի տեղը։ Շարունակում ենք մեր ճանապարհը դէպի արևելք՝ ուր ցցւում են մեր աչքի առաջ ատամնաձև մշուշապատ Ագուլեաց ապառաժ լեռներ, որոց մէջ նշանաւորն է Եփրատ—Գաշ (օձասար) անուն սեպածև գագաթով քարալեռը. աջ կողմում կարմիր Վանք և Ս. Նախավկայի Վանքը՝ (վերջինս Արաքսի Պարսկական ափի վերայ) իրենց կաթուղիկէներով վեհութիւն են տալիս այս վայրերին . . . : Որքան մօտենում ենք Հին—Ջուղային այնքան նեղանում է դաշտին ընդարձակութիւնը և վերջապէս ինքզինքնիս գտնում ենք մի կրճում, որի միջից մի փոքրիկ գետակ անցկենալուն համար Ալլան—չալ անունն է ստացել, դուրս գալով կրճից մեր աջ բազկի վերայ փոքր հեռաւորութեան վերայ մի աւելի ահաւոր կիրճի բերանում նշմարուեցին Հին—Ջուղա իւր պարտէզներն ու ծառաստանները Մայր Արաքսու ափի վերայ՝ որը կարծում ես այստեղում կրճին բերանիցն է բխում հեզօրէն . . . Հին Ջուղա նկարուում էր մեր լիշողութեան առաջ ինչպէս մի սգազգեաց չքնաղ կոյս՝ արցունքից խարուած ու ակօսացած այտերով՝ իւր մօրը Արաքսին նայելիս խոր վշտով հառաչում ու հեծկտում էր։ գոգցես ալեաց միջին էր պտրում իւր սիրոյ առարկան . . . :

Ասում էի իւրովի՝ Սրբազաններից մինը (աւագը) փտարանդի եղած քու սիրականիդ առաքելուն է ոհ, կոյս վշտահար . . . : Տեսանք Հինը՝ պէտք է տեսնենք և Նոր—Ջուղա. տարամերժուած մեր քոյրերն ու եղբայրներն . . . :

Երասխի ափի մօտին ենք Ռուսական մաքսային կայարանում, որի մօտերքը հողակերտ նոր շինութիւնների մի շարք կայ, որոց մէջ և սահմանապահ զօրաց համար զինուորանոց, այստեղ բնակողները Ռուսներից, Հայերից և Պարսիկներից մաքսային պաշտօնեաներ են և կամ ճանապարհորդներից օգտուող խեղճ առևտրականներ, որոնք տեղիս ամայութեան կենդանութիւն են տալիս։

Երասխից անց ու դարձը հեշտացնելու համար՝ մետաղէ թելերից ոլորուած մի պարան է երկարւում մէկ եզրից միւսը՝ որին կապուած են լինում գետալին նաւակներ և որի միջոցաւ ապահով երթևեկութիւնը կատարւում է։ Ռուսական մաքսային օրինաց համեմատ այստեղից անցկացած ճանապարհորդների բեռներն ու բոլոր գուքերը քննուում են, մաքսատան կառավարիչը Ն. Սրբազնութեանց ի պատիւ, չքննելը բացառութիւն համարելով անցկացուց բեռները։ Նախ քան գետից անցկենալը՝ Գեր. Տ. Սահակ Եպիսկոպոսը մերձաւոր բլրին վերայ բարձրանալով լուիկ աղօթեց Աղուանեան հանգուցեալ Գրիգորիս Եպիսկոպոսի գերեզմանի վերայ, լուսահոգի Եպիսկոպոսը սրանից չորս տարի առաջ ընտրուելով Առաջնորդ Հայոց Ատր-պատականի՝ Էլի Այվատեան Սրբազանի (այն ժամանակ վարդապետ) ուղեկցութեամբ այստեղ կը հասնի, այստեղից նա ջոկուելով Սահակ Սրբազանից կուղևորի դէպի հանդերձեալ աշխարհը իսկ Սահակ Սրբազանը յետս կը դառնայ Ս. Եջմիածնում։

Ս. Եջմիածնից մինչև Հին—Ջուղա ճանապարհորդական նեղութիւնները շատ աննշան չափով են շնորհիւ պօստային կանոնների ու հաստատութիւնների՝ սակայն Երասխից անցկեցար թէ չէ նեղութիւններն եօթնապիսի գոյներով նկարուում են աչքերիդ առաջ՝ գետին հէնց աջ ափից սկսած : Նեղութիւն՝ դժուարութիւն մաքսատան կապալառու անուն կրող պարկեշտ աւագակների կողմից, նեղութիւն անմաքուր իջևանների, ուտելիքի ու խմելիքի և այլնի կողմից. նեղութիւն ու դարձեալ նեղութիւն, որոց դէմ կռուելու միակ գէնքն է անսահման համբերութիւն : Պարսկական սահմանի վերայ ենք, ամեն բան տգեղ ու տարօրինակ երևոյթով է մեզ դիմաւորում, կարծում ես յանկարծ ու մէկից տեղի ունեցաւ մի զգալի յեղաշրջութիւն՝ ինչպէս մէկի աչքերը շէն ու բարգաւաճ երկրներից մէկում կապեն ու մի խոպան անապատում բաց անեն :

Մաքսատան կապալառու պաշտօնեայն, որ միևնոյն ժամանակ սահմանապահ զօրքերի սպայի պաշտօնն ունի պահանջեց մեզանից անցաթղթի արձանագրութեան փող, Օսմանեան հպատակներից ստացաւ 4 ական Ռուբլի նոյնպէս և Ռուսահպատակներից, Ֆրանսահպատակից 60 կոպէկ և Պարսկահպատակից 20 կոպէկ : Երբ հետաքրքրութեամբ այս տարբերութիւնների պատճառը խնդրեցինք իմանալ՝ պատասխանն այս եղաւ՝ «մեր օրէնքն այս է :», Ս. Եջմիածնից մինչև այստեղ մեր ուղևորութիւնն ըստ վերնոյն Երասխի ձախ եզրից հոսանքն է վար համանուն հովտից միշտ դէպի արևելքն է եղել Սրաքսը շէքելուց յետոյ՝ ուղղուեցինք դէպի հարաւ և հարաւ արևելք երկուքի կիսելով Կարկառ գաւառին դաշտը՝ որ բարձրացած դիրքով բռնում է Սրաքսի աջ ափի երկայնքը մինչև Հին—Ջուղայի

կապանը : Յուլիսի 20 ին՝ իրիկնադէմին այս դաշտի վերայ մի բարձրաւանդակի զագաթը գրաւող Սահաւանուն Պարսկաբնակ գիւղում իջևանեցինք. Ռուսական սահմանի մօտ Պարսկական այս թշուառ երևոյթ ունեցող առաջին գիւղը զգացումն ունեցող ուղևորի սիրտը վեր ու վայր է անում . . : Գիւղում յարմար բնակարան չլինելուն համար Ն. Սրբազնութիւնք նախընտրեցին ննջել կանաչ և չրհնձուած առուոյտի վերայ՝ անկողինները տարածելուց յետոյ : Խեղճուկ գիւղի սև ու տխուր պատկերն աւելի մթագնում էր իւր մելամաղձիկ գիշերային՝ խաւարատանջ մեղեդիներով գեղջկական Մուշան մանաւանդ զիլ ու աշխարհատեաց ձայնի երևէջներով . . :

Յուլիսի 21 ին՝ արևածագին թողլով այս ողորմելի գիւղը՝ շարունակեցինք հարաւային ուղղութեամբ, դեռ հաղիւ 2—3 փարսախ հեռացել էինք Դավրէժից նախընթաց դիմաւորելու եկան Տ. Յակօբ քահանան և իւր կտրիչ հրացանակիրները մօտենալով Սրբազաններին ջերմիւ համբուրեցին նոցա Ս. աջերը՝ բարի գալստեան համար բաժակներ սկսեցին պարպել փոփոխակի : Բարի գալստեան մաղթանքներ արտասանելուց յետոյ ի միասին շարունակեցինք բարձրանալ Գում լեռան վերայ՝ այս լեռը կարկառի հարաւակողմի մասը բռնում է՝ ծովի մակերևոյթից բարձր է 7,500 ոտք, լեռան ճիշդ միջից անցկենում է մի փոքրիկ գետակ Դիզ-գարա ասուած ձորից որը՝ լեռը բաժանում է երկու մասի. այս գետակն է, որ արբուցանում է Կարկառի դաշտն և աղացնում է բնակիչների ալիւրը՝ դարձնելով բազմաթիւ ջրաղացների քարերը. լիշեալ ձորում ջրաղացների թիւը այնքան շատ է՝ որ շատ յարմար է ասել «ջրաղացների ձոր», Կարկառ գաւառի հողը արտադրում է՝ ցորեն, գարի, հաճար, բամբակ, կորեկ, գէրջակ և այլն : Կարկառի գիւղերը

բացի մի քանի ցախացած ուռենիներից ուրիշ տեսակ ծառեր ու պարտեզներ չունին :

Չորից անցկենում ենք վերը մեր գենիթի վերայ միայն մի պատառ երկինք է նշմարում, աջ ու ձախ կողմերում անմատչելի յաւիտենական ժայռեր՝ որոնցից մէկին վերայ տեսնում է հնազարեան մի աւերակ ամարաթ, (ամարանոց) որ ամրացուած է ժայռին չոր կրճքին վերայ : Մեր այս աւուր հոգնեցուցիչ ճանապարհի այս մասը վերջացնելուց յետոյ մեր առաջը բացուեց մի հրաշալի տեսարան Գում լեռան հարաւակողմում, Զիւնիւսի սարահարթին է այս, որը բարձր է ծովի մակերևոյթից 4,000 ոտքից ոչ պակաս : Զիւնիւս գաւառը բնութեան կողմից աւելի լաւ է վարձատրուած քան իւր սահմանակից Կարկառը, բաւական թուով գիւղեր ունի դաշտին զանազան կողմերում և լեռների լանջերում, հողերը լաւ մշակուած են, ունի դալարաւէտ արօտատեղիներ, շրջակայ լեռների հողերը բոլորն էլ մշակելի են՝ եթէ երբէք կայ կորթ գետին այն էլ լաւ արօտատեղի է : Զիւնիւսը հարաւակողմից իւր սահմանակից Մարանդ գաւառից բաժանում է մի բնական թումբ :

*) ՄԱՐԱՆԴԻ ԳԻՒՂԱՔԱՂԱՑ

Անցնում ենք Զիւնիւսի գեղազուարճ լեռնադաշտից՝ Պարսիկ գեղջուկ հնձուորները շտապում են իրենց որաներով դիմաւորել Սրբազան ուղևորներին մի քանի սև փողի ակնկալութեամբ : Կեսօրուական ճաշն ու հանգիստը ճանապարհի վերայ եղող մի գիւղի մէջ արին Ն. Սրբազնութիւնը, որից յետոյ

*) Մայրանդ, ստուգաբանում են շատեր՝ աւանդելով թէ նոյն կինը թաղուած է այնտեղ :

շարունակելով ճանապարհը Մարանդ հասնը երեկոյեան ժամի 9 ին. մի լուսնկայ երեկոյ փոշոտ ու աւազուտ փողոցներից անցկենում ենք՝ աջ ու ձախ ունենալով հողակերտ որմերից շրջապատուած ծառեր ու ծառաստաններ, որոց թաւուտ ոստերի թանձր ստուերների տակից յառաջանում ենք դէպի Մարանդի Դատաւոր—խանի ապարանքը միշտ ճիկ ու անկ խաղալով լուսնի շողերի հետ . . . Կառքերի անսովոր ձայները շատ խորթ էին տեղացի Պարսիկների ականջներին, ուստի չտես հետաքրքրութեամբ նեղ ու մեղ փողոցներից վազվրտելով դուրս էին գալիս ի հանդէս զարմանալեաց . . . : Կառքերի աղմուկն ընդհատուեց Դատաւորի դրան առաջ՝ Խանը շրջապատուած իւր մարդկանցով պատրաստ կանգնած էր՝ իսկոյն Ն. Սրբազնութեանց ձեռները սեղմելով ամենայն քաղաքավարութեամբ առաջնորդեց իւր տանը տեղաւորել տալով Ս. Հայրերի բոլոր պարագայք : Դատաւորի ապարանքն, որ ի հարկէ ամբողջ Մարանդում շքեղութեան կողմից առաջինն է, դա երկրորդ յարկի վերայ բարձրացած քառակուսի մի փոքրը սենեակ է, ներքին պատերը ծեփուած սպիտակ բուով՝ Պարսկական ճաշակի համեմատ մի քանի անարուեստ ձեռքի տգեղ նկարներ է ներկայացնում :

Խանը Ն. Սրբազնութեանց հետ ընթրեց և սուրճ ընդունեց՝ Սրբազան հիւրերին զուարճացնելու համար ածել տուեց երկու Պարսիկ «շուշերի», որոնք Թեհրանից նոր էին եկել այստեղ՝ արևելեան եղանակներից սիրուն կտորներ՝ նուագեցին զրեթէ մինչև գիշերուան կէսին, շատ ազդու էին ածում թշուառականները կեանքի ունայնութիւնը հազարաւոր գոյներով էին պատկերացնում իրենց ունկնդիրներին :

Մարանդը համանուն լեռնադաշտի հարաւային արևելեան կողմը համանուն սարի ստորոտումն

է, որի բարձրութիւնը 4,300 ոտքից պակաս չէ : Գիւղաքաղաքի արտաքինը ենթադրել է տալիս, որ ազգաբնակչութեան թիւը հազար տանից անց է : Մարանդ ունի իւր ողորմելի շուկան ևս բաղկացած 200 ից աւելի խանութներէ, բնակիչները խաղաղասէր էին երևում : Մարանդի հողը պարարտ և աւազախառն լինելուն համար շատ պտղաբեր է՝ այստեղ աճում են հետեւեալ տեսակի ծառերը, ծիրանի, դեղձի, նշենի, ընկուզենի, բարդի, սօսի և այլն. որոցմով Մարանդը մի կատարեալ անտառի է նման. ունի առատ ու անոյշ ջրեր, եթէ Ատր-պատականում կայ լաւ ջուր այն էլ Մարանդումն է եթէ չեմ սխալուում :

Մարանդի սահմաններն են հիւսիսից Զիւնիւսի բլուրներ, հարաւից Մարանդի սարեր, արեւելքից Գաշքա սարը և Բեդախստանի բլուրներ և արեւմտքից Մաշօքի սարը : Մարանդի դատաւորն, որ երիտասարդ և քաղաքավար մի անձնաւորութիւն էր խնդրեց Ս. Հայրերից՝ որ 1-2 օր իրան հիւր մնան սակայն չկարենալով զիջանիլ՝ Յուլիսի 23 ին օրուան կեսին մօտ շարունակելով ճանապարհը՝ Սօփիան անուն մօտ պատմական գիւղը հասանք երեկոյեան ժամի 8 ին, ուր սպասում էին Դավրէթից եկող պատգամաւոր երկու վաճառական Պարոններ : Մարանդից մինչև այս գիւղում մեր ճանապարհը լեռնային էր, մեր արեւելեան կողմի վերայ նշմարւում էին աղահանքի բլուրներն՝ որտեղից է ստացւում Ատր-պատականի աղը : Լեռնական գիւղացիներին թուում էինք տալ օրինակ ուղևորներ. նոքա հիացմամբ էին դիտում կառքերին ու ձիերին՝ նոցա զարմանաց չափ չկար : Այս կողմերում Պարսկահիւսներ մասնակցում են իրենց մարդերին դաշտային աշխատութեանց մէջ : Սօփիան համանուն սարի արեւելեան ստորոտում մի մեծ գիւղ է՝ ուր ճանապարհորդների համար կան բարձրասարներ :

նրանցից մեկում գիշերելուց յետոյ Յուլիսի 23 ին աւրելի հետ շարունակեցինք մեր ուղին դէպի Դավրէթ :


ՀԱՆԳՐԱՅԻՆ ՄԱՐԻՏՔԸ Ի ԳԱՎՐԷԹ

Սօփիանից 2-3 փարսախ դէպի Դավրէթ յառաջացանք թողլով միշտ մեր ձախ թևի վերայ Բէտախստանի լեռների միմեանց յաջորդող շղթաներին և աջին վերայ մի անբեր տարածութիւն՝ որ երկարում է մինչև Որմիոյ լիճը և որ կոչւում է Սօփիանու դաշտ :

Դավրէթից ընդ առաջ եկողները բազմութեամբ շղթայի օղակների պէս միմեանց ետևից շարունակւում էին գալ կառքերով և ձիերով. որքան մօտենում ենք Դավրէթին՝ այնքան թիւը ստուարանում է և բարձրացած աղմուկը կենդանութիւն է տալիս չոր անապատին. օդը պղտորուեց փոշուց բարձրացած ամպերով . . . Այնչափ կոչուած գետին մօտերքը՝ Դավրէթ հասնելուն 1-2 փարսախ մնացած կառքերը կանգնեցին՝ ուրկից Ս. Հայրերը նախաճաշի փոքր դադարից յետոյ շարունակեցին խաղալ դէպի Դավրէթ իրանց հետզհետէ ստուարացող շքախմբով, Սրբազանների կառքը մերթ ընդ մերթ ընթացքը կասեցնում էր ողջունելու և ողջագուրուելու համար նոցա հետ որոնք մատչում էին ի համբոյր : Ամիր-նիզամը, Էմին-դովլէն, Անգլիական և Ռուսական Հիւպատոսները իրանց կողմից Երազնէր էին ուղարկած, Անգլիական Հիւպատոսը իւր անձնական կառքը թարգմանին միջոցաւ ուղարկած էր, որ Առաջնորդ Հայրը նորա մէջ բազմէր :

Դիմաւորողները նորին Բ. Սրբազանութիւն Ս. Մաղաքիա Եպիսկոպոս Տէրունեանի ներկայութեան մասին անտեղեակ էին՝ բայց և այնպէս նկատելիս իրանց

1004
1802



Առաջնորդին հաւասար յարգանքներ էին մատուցանում : Գնալով բազմութեան թիւը խտանում էր՝ էլ տեսնելու էր իրարանցումն կառավարների և ձիաւորների միջև՝ մրցման ասպարէզ էր բացուել նոցա համար, մարդոց ձայների ժխորը, ձիերի հրհռոցը, կառքերի որոտը, ձիարշաւների հրացայտ դոփիւնը մի զարմանալի տեսարան էին ներկայացնում . . . :

Դավրէթեցիք մի մասնախումբ ընտրած էին Ս. Առաջնորդի ընդունելութեան հարկաւոր ծախսերն անելու համար : Մասնախումբը վարձած էր մի այգի քաղաքին արեւմուտքում ամեն յարմարութիւններով՝ ուր խուռն բազմութեան հետ սպասում էին Արամեան Վարժարանի սաները՝ որոնք քաղցրաձայն երգով դիմաւորեցին Ս. Առաջնորդին : Ս. Հայրերը շքով առաջնորդուեցին ընդունելութեան սենեակում ուր անուշեղէններով ու մրգեղէններով մի սեղան էին սարքած. այստեղ Ս. Հայրերը փոքրինչ հանգիստ արին՝ որի ժամանակ քաղցր ու ներդաշնակ երգում էին Դպրոցականները. վերկացին Ս. Հայրերը շրջապատուած հազարաւորներով առաջնորդուեցին դէպի Բերդաթաղի Եկեղեցին ուրտեղն է Դավրէթի Հայոց Առաջնորդարանը : Հայոց թաղը մտնելիս՝ տների կտուրներից և դռներից այլ յայլմէ եղած ուշի ուշով հանգիստտես էին լինում Դավրէթի փափուկ Հայասեւր, փոքրիկ մանուկներն և ծերերը՝ որոնք աւելի հեռի դիմաւորելու կարողութիւն չունէին : Ս. Հայրերն Եկեղեցում աղօթելուց լետոյ արձակեցին ժողովուրդը և իրանք Առաջնորդարանում հանգիստ առին մէկ կողմը ձգելով հնգօրեայ ճանապարհորդութեան ցուպը :

Այսպէս ուրեմն Ս. Հայրերից մինը՝ մէկ կողմ

ձգելով ընդմիջտ իւր ճանապարհորդութեան բեռը Դավրէթում իւր գահին վերայ բազմեցաւ Յուլիսի 23 (1898 թ.) : Ն. Սրբազնութեանց այցելելու կարգն է, խուռներամ զալիս են և մխիթարուած ետ են գնում, շարունակուում է այսպէս մինչև Յուլիսի 26 ի կիրակին յորում կարդացուեց Հայրապետական կոնդակը հանդիսաւոր կերպով Պատարագի ժամուն, որի վերջանալու ժամանակը Սահակ Սրբազանը դառնալով ժողովրդին բացատրեց իւր գալու նպատակը՝ յայտնեց թէ՛ թնչ է իւր և ժողովրդի պարտաւորութիւնները, խօսում էր երիտասարդական եռանդով :

Ն. Բ. Սրբազնութիւնը շարունակում է ընդունել այցելութիւններ և գնալ փոխադարձ այցելութիւնների ընկերակցութեամբ իւր Սրբազան եղբօրը : Տ. Մաղաքիա Ս. Եպիսկոպոս Տէրունեանի Դավրէթի վրայով դէպի իւր աթոռը ճանապարհորդելն աննրպատակ չէր. Վեհ. Հայրապետի կողմից, Դավրէթում վախճանած Նոր—Ջուղայեցի Խաչատուր վարդապետի կտակային հարցի կարգադրութեան գործն իրեն յանձնուած էր, որ անձամբ Դավրէթում լինի և միանգամ ընդմիջտ վերջ տայ հարցին՝ ինչպէս և յաջողուեց Ն. Բ. Սրբազնութեան յարգել տալ կտակին Սրբութիւնը : Այս էր պատճառը թողնելուն Բագուի և Էնգելիի համեմատաբար դիւրին և կարճ զիծը, և յանձն առնուլ աւելի դժուար ու երկար գրեթէ անապատային ուղևորութիւնը . . . :

ԴԱՎՐԷԹ

Կը թողում պահ մի Սրբազան Հայրերին, որ նոքա իրենց գործով պարապին և ես դառնամ մի ակնարկ ձգել Դավրէթի վերայ :

Մի քննարձակ դաշտավայրն որի մի կողմի նեղ մասը զրկուած է աջ ու ձախ կողմերից սարերով, դարեանդներով, բնութեանբարիքներից ճոխացած պարտէզներ, մրգաբեր և հովանաւոր ծառեր իրենց տեսակներով, որք գալիս են լրացնելու այսպիսի մի տեղի փառքը՝ դա Դավրէժն է առանց այլայլութեան: Հիւսիսի կողմից Էջմաշէջ (Բետախանի հարաւային լեռնաշղթան) և հարաւի կողմից Սըհանդ (Սըհանդ սարի հիւսիսային լեռնաշղթան) Դավրէժի աջ ու ձախ բազուկներն են կազմում. արեւմտեան կողմից դաշտին հեռաւոր մշուշապատ հորիզոնում քաղաքին բարձունքներից նշմարուում է Որմիոյ լիճ կամ Կապուտան ծով, արեւելեան կողմից բռնում է մի աւազուտ հեղեղատ: Դավրէժի օդն առողջարար է, աւելի բարերար ազդեցութիւն ունենալու էր եթէ քաղաքին մաքրութեան ինամք տարուէր. օդին տաքութեան աստիճանները Յուլիսի վերջերից մինչև օգոստոսի 7-ն և 8-ը ցոյց էին տալիս 16—17 ըստ Ռէօմբերի:

Խմելու ջուրը շատ անմաքուր է, որովհետև ջրամբարներում անշարժ վիճակում դարձահոտում է՝ բացի սրանից, սատկած մուկերի, կատուների, շների և այլ կենդանիների դիերով համեմուում է. այս կողմից Դավրէժում կեանքը դառն է: Բնակիչները վատառողջ են առհասարակ՝ հակառակ քաղցր օդին ու սիրուն բնութեան, որ ունի Դավրէժը, սակայն պէտք է խոստովանիլ, որ Հայեր առուգութեամբ և կախառութեամբ իրենց դրացի ազգերից բաւական տարբերուում են:

Դավրէժի ազգաբնակչութեան թիւն երբեմն (15—20 տարի առաջ) աշխարհագիրներն 80,000-ի հասուցած են, բայց այժմ 200,000-ից աւելի են ենթադրում, թէ որ աստիճան վերջին թիւը ճշմարտութեան մօտ է՝ չգիտեմ, վասնզի Պարսկական բա-

ղաքներից և ոչ մինը ցարդ ազգահամարի կանոնաւոր ու ճիշդ արձանագրութեան ենթարկուած է՝ որով յայտնի լինի նրանց քանակութեան անսխալ թիւը: Ուստի ուղեգրութեանս մէջ ահամայ պարտաւորուած եմ բաւականաւ ենթադրութիւններով:

Դավրէժում Հայերի թիւն է 6—700 տուն, ունին երկու Եկեղեցիներ ու երկու երկսեռ Ուսումնարաններ, որոնցից յառաջգիւմութեան կողմից առաջին տեղն է բռնում բերդաթաղի Սրամեան Ուսումնարանը, որ կառավարուում է մի խումբ ձեռնհաս Ուսուցիչներով: Դավրէժի Հայոց Կաթողի ծերերը զգենում են Պարսիկ քաղաքացու ճաշակով, իսկ երիտասարդներն Եւրոպական՝ պաթօն ու սիլիտորը հասարակ բաներ են. վերջիններս արտաքուստ թէև եռանդուն բնաւորութեան տէր են երևում սակայն ցուալի է նկատել և սոցա հակումն գէպի անկրօնութիւնն, որ անպատճառ յարգէ գգակի հետ ստացած են...: Կիները Կովկասեան տարազով հագնուում են միայն տանից դուրս եկած պահուն մի կապուտ վերնաշորով պատատուում են: Դավրէժում իւրաքանչիւր Ուսումնարանը ունի իւր թատերական բեմն ու սրահը՝ այս բանը հասարակ է Պարսկաստանի բոլոր այն տեղերում, ուր թէ մեծ և թէ փոքր մի ուսումնական հաստատութիւն ունին Հայերը: Դավրէժեցի Հայեր շատ աւելի թատերասէր են քան Եկեղեցասէր, կուսակցասէր քան միաբանասէր՝ զօրաւոր է այստեղումս «Մշակականներ», ի կուսակցութիւնը, որի խմբին պատկանող ծծկեր մանուկներն անդամ գեղեցիկ դարձուած քներով գիտեն ցեխ շարտելով հայհոյել՝ «Նոր-Դար», ին և ուրիշ թերթերին որոնք «Մշակ», ի սկզբունքով չեն ընթանում...:

Դավրէժեցի Հայերի մեծամասնութեան զբաղմունքն է վաճառականութիւն, մի մասին միրզայու-

Թիւն (գրադրութիւն) և փոքր մասին արհեստներ՝ օրինակ լուսանկարչութիւն, կօշկակարութիւն, դերձակութիւն ոսկերչութիւն և այլն. Դավրիժեցի Հայն Պարսկաստանի Հայերի ամենից հպարտն է բնաւորութեամբ և վեհանձն, վերնշանակուած պատճառներով Եկեղեցասէր չէ՝ բայց գիտէ յարգել Հայ Եկեղեցականին՝ միայն շահաւոր դիտումներով :

Տ. Մաղաքիա Սրբազան Եպիսկոպոս Տէրունեանը նկատելով Դավրիժեցւոյ մի մասին անբարեպաշտ կացութիւնն և սառն վերաբերումն դէպի ազգային կրօնըն ու Եկեղեցին մի ազգու քարոզ խօսեցաւ խիստ նախանձայոյզ շեշտերով ծանրացաւ սոյն հարցի վերայ, ցոյց տալով, որ մեր Ազգի գոյութիւնը կախումն ունի իւր կրօնից և Ազգային նահատակ Եկեղեցուց . . . կըշտամբելով իրենց փտանգաւոր անտարբերութիւնը . . . :

Դավրիժում մեծ դեր է կատարում բարեգործական տեսակէտով, ամենին յայտնի՝ «Դավրէժի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը», , որի պատկառելի անդամուհիներին ամենից գործօնն է Տիկին Մ. Ամատունի՝ որուն համար արժան է բացազանչել «Ահա ճշմարիտ և տիպար Հայուհի յորում նենգութիւն ոչ գոյ», . Տ. Մաղաքիա Ս. Եպիսկոպոս՝ Տիկնանց Խնամակալութեան կողմից ընծայուած մի սիրուն ասեղնագործ բարձ ընդունեց :

ԴԱՎՐԷՅԻ ԱՆԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Յուլիսի 28 ին երեքշաբթի առաւօտեան ժամի 8 ին անձնական գործով շուկայ գնացի առաջնորդութեամբ մի Վանեցի երիտասարդի. Դավրէժի ամենից նշանաւոր կամարակապ Վաճառանոցները մանգալուց լետոյ մի Կարմասարայ գնացի՝ ուր միմիայն մէկ Հայի (Աւագ-խան Աւագեանց) միտերանոց կար, այս

Պարոնի հետ մինչ հազիւ 2-3 րոպէաչափ զրոյց էինք տալիս, յանկարծ մարդկային ձայներից մի ահեղ փոթորիկ բարձրացաւ, Կարմասարայի խոշոր դռները վայրկենապէս շրջիկալէն փակուեցին՝ անսպասելի շփոթն ու իրարանցումն երթալով ծաւալ էր ստանում, մարդկային սահմանից հեռացան կարծես իրանք՝ մարդիկը, քաղցած գայլի պէս որսի էին մանգալիս շտապ շտապ : Այս անակնկալին վերայ շշմլած ինչ անելը չգիտէինք. յարուցուած անկարգութեանց վերայ թեր ու դէմ կարծիքներ էինք փոխանակում Պարոնին հետ, որի վաճառատունը մեզ համար ապաստանաբան և միանգամայն բանտ դարձաւ . . . : Եւ որ սրանից սոսկալին էի տեսել անբաշխալ հայրենիքումս (Բաղէշ) 1895 թ. Հոկտ. 13 ին՝ ինձ համար այս այնքան շատ սարսող աղբեցութիւն չէր անում. ինչ որ էլ լինի ասում էի հացի խնդիր է շուտով կանցկենայ, Հայերի դէմ սարքուած ու է ցոյց չէ : Վերջ խմացուեց ինչ՝ որ մտածում էինք դէպքի մասին ճիշդ է եղել. ժամի 12 ին խաղաղիլ սկսաւ կամաց կամաց, սիրտ արինք մեր բանտից դուրս գալ շուկան. կրպակների դռները բոլոր կղպուած՝ շուկան գրեթէ անմարդացած դտանք, միայն դէս ու դէն խումբեր էին երևում, որոնք խորհրդաւոր կերպով զրոյց էին տալիս միմեանց հետ : Որքան՝ որ գրութիւնը խաղաղ էր երևում ըստ երևոյթին բայց մենք մեր աչքին չէինք հաւատում, ինքզինքնիս վտանգաւոր զրութեան մէջ գտնում էինք ուստի շտապով հեռանալը խոհեմութիւն համարեցինք : Անվնաս բերդաթաղի Եկեղեցին հասանք և Առաջնորդարանում ոգի առնլով խորհում և հետաքրքրուում էինք կատարուած անցքին շարժառիթների վերայ . . . : Այստեղից էլ ուրիշ կերպ ձայներ էին լսում մեր ականջները՝ բազմաձայն աղաղակները սարսափ էին ազգում ամեն լսողին, ձայն

ները Ռուսական Հովանաւորութիւնն էին խնդրում-
Հիւպատոսարանին դուռը խուժած՝ քաղցած ու սովա-
տանջ ամբոխին ձայնն էր այն, որ կը բողոքէր անիրաւ
գրկողութեան դէմ, ձայնը շատ խիստ էր՝ ապառաժներ
էին տրաքուում նորա ուժգնութիւնից, զգայուն
սիրտը չէր կարող երբէք դիմանալ այդ գոճութեան
սղորմութիւնն հայցող սուր ճիշերին . . . :

ԴԱՎՐԵՏԻՑ—ՅԱՐԴԱՐԻՒ

Օգոստոսի 7ին արեւի ծագման հետ՝ Ն. Բ. Սրբազ-
նութիւն Տ. Մաղաքիա Եպսկոպոս Տէրունեանը պատ-
րաստուած էր թողուլ Դավրէժն և ուղևորել գէպի
իւր պաշտօնատեղին՝ Դավրէժում կէս ամիս անցկաց-
նելուց յետոյ։ Ս. Հայրը փորձառու ճանապարհորդներէ
խորհրդով ընտրեց Արդաբիլ քաղաքի գծով հասնիլ
Կասպից ծովեզրն և նաւելով անցկենալ՝ Էնզէլի-Ռաշտ
Ղազուինեան գծով հասնիլ Թեհրանը ուրկից թեքուիլ
գէպի Ասպահան Ղում քաղաքի վրայով։ Վերնշանակ-
ուած ժամին՝ երկու Սրբազան Առաջնորդները համ-
բուրուեցան եղբայրական սուրբ և ջերմ սիրով փոխա-
նակելով միմեանց սրտազին մաղթանքներ. որ կարող
լինին տանել իրենց վերայ դրուած ծանր լուծը . . .
սկսեցինք հեռանալ Առաջնորդարանից՝ ծուռումուռ
և նեղկիկ փողոցներով հետևելով մեր Պարսիկ առաջ-
նորդին՝ որի անունը Հասթի էր կոչուում։ Դավրէժի
շինութեանց արտաքին անշուք տեսքը մարդուս վերայ
թողնում է այն տպաւորութիւնը՝ ինչ որ կարող է թո-
ղուլ մի անխնամ պատնէշ, որը շատ տարբեր ու ան-
կանոն խրամատներ ունի անձրևների և հեղեղների
երեսից, սրանից աւելին ասելն աւելորդ է Դավրէժի
շինութեանց արտաքին համար, այսպէս է և ամբողջ
Պարսկական քաղաքներինը։

Մեր փոքրիկ կարաւանով 1½ ժամից հազիւ քա-
ղաքից դուրս եկանք արևելեան կողմից։ Աչքի ընկ-
նող միակ երևույթը Պարսիկ թշուառ մուրացիկներն
են մեծաւ մասամբ կանանցից բաղկացած, որոնք
ճանապարհի երկու կողմը բռնած՝ ճանապարհորդ-
ներին շռայլում են մաղթանքներ ի գութ շարժե-
լու ողորմելի շեշտերով . . . «Աղալար, Ալլահ սըզա իմ-
տատ օյն բալքիմ» . այս ամէնը մի շահի սև փողի հա-
մար է . . . : Բացի սրանցից պատուաւոր մուրացիկներ
էլ կան, որոնք աղօթել չգիտեն և առաջիններից
տարբերուում են սրանով, որ վերջիններս իրենց
համար իրաւունք են սեպում ուղևորներից ո՛չ թէ
մի շահի այլ մի քանի շահի փող կորզել «Սեւմէթ փուլը»
անունով, սուք պաշտօնական մուրացիկներ են կոչ-
ւում . . . : Դավրէժը մեր ետևից մնում է գէպի
արևմուտքը իսկ մենք շարունակում ենք գէպի ե-
լից կողմը մի անբեր աւազուտ հեղեղատի միջով,
աջ թևի վերայ ունենլով Սեհմեթը և ձախին վերայ
Էյնալ-Էյնալը իրենց յաբակից լեռնաշղթաներով,
այսպէս 3 ժամից հասանք Մահա-Ռաքա գիւղը՝ Դավ-
րէժի հետ համեմատած բարձր գիւղքով՝ անոյշ ջրով
և առողջարար կլիմայով տեղ է զարդարուած գե-
ղեցիկ պարտէզներով, Դավրէժի Ռուսաց Հիւպատո-
սը ամառն այստեղ է անցկացնում օդի և ջրի գե-
րազանցութեան համար։ Մամա-Թաֆայից հեռա-
նում ենք գրեթէ անապատանման երկրներից՝ շէ-
ների կամ գիւղերի թիւը պակասում է հետզհետէ
և եղածներն էլ մի խումբ ծառերով թուում են
այս լերկ երկրում ովասիսներ՝ որպիսին էր Գալլոս-
Միսոս-գիւղը, ուր կէսօրուայ տապից ու խոնջու-
թիւնից դադար առինք ու ճաշեցինք։ Հեծնելով
ձիերնիս յառաջ ենք գնում էլի անբեր, անմշակ
հողերի վերայից, միայն մերթ ընդ մերթ միօրինա-

կուլթեան տեղի էին տալիս խիստ աղքատ ու գձուձ գիւղեր, որոց միջից անցկացած ժամանակ առաջնորդնիս Հասկաբէ իւր դաժան և ահարկու բնաւորութեամբ՝ ահաբեկում էր ծեծուած, տրորուած խեղճ Պարսիկ գեղջուկներին, որոնք առանց այն էլ տանջուած երեւակալութեամբ իրանց թշուառ գրութեան մէջ հիւժժուում են... : Սրանից հասկանալի էր մեզ թէ՛ Պարսիկ ստորագաս սլաշտօնեաներն ու առհասարակ քաղաքացիներն ինչ աստիճանի անխղճութեամբ են վերաբերուում գէպի իրանց գժբաղդ շինականները, որոնք ենթարկուած են իրանց վայրենի քմահաճօյքներին... :

Օգոստոսի 7 ը մեր վերայ երեկոյացաւ Իսուաֆաբադ գիւղում, ուրկից բաժանուելու ենք Թեհրանի ուղիղ գծից, որ գնում է արևելահարաւի ուղղութեամբ և որի հակառակ ուղղութեամբ ընկնում է մեր գիծը գէպի Սրգաբէլ : Իսուաֆաբադ՝ Դավրէժից մերձ 10 փարսախ հեռի գէպի արևելեան կողմ փոքրիկ բլուրներով մի սարահարթի վերայ է՝ որի կողքին ուղեւորի երեսն ի վեր ժպտում է մի սիրուն լճակ՝ Գաւի-գէշ անունով, նման Հայաստանում Արծկէ գաւառի՝ «Առէնայ» լճակին, որ տարածուում է Սիֆան սարի արևելեան ստորոտում մէկ կողմից գրկուած իւր Մայր ծովակից (Բզնունեաց կամ Վանայ ծով) :

«Գաւի-գէշ» լճակի հարաւայի ափում բարձրացած է մի ամառաթ՝ գուցէ լինի այն գաւառիս տիրոջ ամառանային ապարանքը : Իսուաֆաբադ գիւղում վատ չանցկացաւ մեր առաջին գիշերը, գիւղը թէև աղքատիկ բայց ճանապարհորդների հանգրտութեան համար ըստ բաւականին լաւ իջևան ունի : Շինական թշուառներին արտաքոյ կարգի ճանապարհորդներ էինք թուում մեր ամեն բանով, նոքա

ասլշութեամբ դիտում էին մեր մէն մի շարժումը... :

Օգոստոսի 8 ին արևի ծագման հետ՝ ուղեւորութեան թեւից բռնած՝ նշանակեալ լճակին հիւսիսակողմի ափով գնում ենք. գրողս յափշտակուած եմ ի տես հեզասիւզ լճակին, որի միջով շատ հեռի էի գնում՝ լիշողութեանս առաջ ուրիշ բանէր էին նրկարուում... Պարսկաստանում լինելս ինձ ցնորք էր թուում... : Ճանապարհը շարունակելիս անցնում ենք ոչխարաց հօտերի, նախիրների միջով, հովիւ, նախրորդ, հօտաղն ու մշակը՝ իրենց տխուր, մելամաղձոտ և մարդուս հոգւոյ ջղերին ազդող անմեղ երգերով կենդանութիւն են շնչում ամալի վայրերին, անձանթ ուղեւորին պէսպէս գոյներով նկարագրում են թախծութեամբ իրանց ողբալի գրութիւնը... կծղած ցորենի հանդում ողորմելի Պարսիկ գեղջուկը կիզիչ արևի ճառագայթների տակում թորեցնում է իւր դառն քրտուները, ծղրիզի նման ծղօտների տակից ճխում է խեղդուկ ձայնով և շարունակում իւր սփոփիչ մեղեգիւն... :

Իսուաֆաբադից 2-3 փարսախ գէպի արևելք անցնելով ձորերից և նեղ կապաններից հետզհետէ բարձրացանք Բե-բաշի լեռնագօտւոյն վերայ՝ ուստից մեր աչքի առաջ փռուեց Սաբաբ գաւառի լայնատարած սարահարթը ծածկուած չոր մառախուղի կապոյտ ամպերի մէջ, որի հիւսիսային-արևելեան կողմից երկնքին հաւասար նշմարուում է Սաբաբ սարի ձիւնափառ կատարը խեղդուած թանձր մշուշի միջում : Լեռան բարձրութիւնից կամաց կամաց վայր խոնարհելով՝ ստորոտում եղող գետակից անցկացանք, որը «Սի-շա» կոչուած գետի օժանդակներից մինն է : Սի-շա գետը կազմուում է Սաբաբանի հարաւային-արևմտեան ստորոտներից բխած ակներից, որը գէպի արևմուտք ընթանալիս ըն-

դուռնելով մի քանի օժանդակներ ևս, առատանալով Դավրէժի հիւսիսային արեւմտեան կողմից Ումիոյ լիճն է թափուում :

Օրուան տօթագին ժամերին առանց գաղարի գնում ենք լեռնադաշտին ելից ուղղութեամբ, տափաստանին անմշակ տարածութիւնը ծածկուած է երևում բազմաթիւ ուղտերի ջոխրներով : Դաշտագետնին հողը չնայած իւր մշակութեան նպաստող բոլոր հանգամանքներին շատ սակաւ մասը մշակուած է, ջրերն աղի ու լեղի են, ծառ ու ծառաստանն անծանօթ բաներ են այստեղում գրեթէ, դաշտը բնակիչներից գրեթէ թափուր է : Մեր ճանապարհորդութեան երկրորդ օրը (Դավրէժից) երեկոյացաւ Դուրդուրի գիւղում, որ այս դաշտի կեդրոնումն է՝ բորակային թանձր խաւով ծածկուած մի գետնի վերայ, որից անշուշտ ընդունած կլինի իւր անունը՝ «աղոտ», ամեն բան աղոտ է այստեղ բնակիչներն անգամ . . . : Ողորմելի կեանքով անցկացնում են իրանց օրերը խեղճ գեղջուկները. Օգոստոսի 9 ին արշալոյսի հետ՝ կրկին վեր առինք ուղևորութեան կծիկը շարունակելով դէպի Սարաբը՝ (թերևս «Երաբ», որ ցուրտ ջուր ասել է) Սալայան սարի արևմտահարաւի կողմում մի փոքրիկ քաղաք է՝ համանուն դաշտին վերայ : Սարաբի դաշտը կամ հովիտը հիւսիսային-արևելեան կողմից Սալայան հիւսիսային-արևմտեան կողմից Փիւնիշ սարաւի և իրան երկրորդական կողմերից Փիւնիշ սարերն իրանց բազուկներով շրջապատած են կանոնաւոր լարակցութեամբ :



ՍԱՐԱԲ

Յետ կէսօրուայ տօթաժամերի մերձենում ենք Պարսկական մի մեծ գիւղի կամ որ նոյնն է ասել փոքրիկ քաղաքի, որը կոչուում է Սարաբ. Պարսկերէն նշանակում է՝ ջրգլուխ, որ սովորաբար գործածուած է խողովակներով շինուած ջրուղիների և բառանների համար : Սակայն աւելի հաւանական թուեցաւ Սէրաբից (ցուրտ-ջուր) իւր անունը բուտանալ՝ քանզի մի յորդաբուղիս աղբիւր՝ արևելեան կողմն մզկիթի որմի տակից բխում է, որի ջուրը յիրաւի սառնորակ է, որի նման ջուր Մարանդում միայն գտնուեցաւ Պարսկական հողի վերայ :

Սարաբը՝ համանուն հովտում իւր բնական զարդերով գաւառին պերճ թաղուհին կարելի է համարել, ունի արգաւանդ հող՝ առատ ջրեր, (Ալի-չայ գետի Սալայանից բխող օժանդակներից մինն էլ՝ Սարաբի դաշտն է ոռոգում) ծառեր ու ծառաստաններ և այլն :

Սարաբում կայ և հեռագրաթելի կայան, մետաղէ թելերն հաստատուած են բարակ փայտից, ծոռ ու մուռ, դէսուդէն թեքն ընկած ձողերի վերայ՝ շատ անխնամ թողուած : Սարաբի բնակչաց ենթադրական թիւը 1,500 տանից պակաս չէ, ունի իւր առանձին շուկան ու Սարաբաներ. բնակիչներն ըստ երևոյթին շատ անկիրթ են, ունին վայ-

ընհարարոյ արտալատութիւն, ալստեղ Պարսիկներն անխառն են, լեզուն Ստր-պատականի Թուրքերէնն է : Թողնելով Սարսը մեր ետեւի կողմը 1-2 փարսախ նրանից հեռի Փիւսիւշ գիւղը հասանք երեկոյեան ժամի 5: ին, մեր ձիապանի տանը վերնալարիում հիւրասիրուեցինք նրանից՝ ձիապանի հիւրասենեակի որմերը գաճով ծեփուած, առատազը փայտէ տախտակներով ծածկուած, 6 Դէր երկայնք և 2ը լայնք յատակը գորգերով ծածկուած բաւականին լաւ սենեակ է. որի համար Ս. Հայրը իւր զարմանքը չթաքցրեց, «մի խեղճ ձիապան Պարսիկ գիւղացու համար այսքան փառաւոր տուն ունենալն արդարեւ զարմանալի բան է . . » ասաց նա. հարցունք և տանուտէր ձիապանին «դու, որ մի ձիապան մարդ ես և գիւղացի, ինչպէս է սլատահել, որ մի այսպիսի բաւական լաւ սենեակ-ես ունեցել, որի յատակը ծածկուած է թանգազին գորգերով . . » պատասխանեց՝ «Զերդ Բ. Սրբազնութիւն, սենեակին փառաւորութիւն մեզ պէս խեղճ գիւղացիներէ համար չէ՝ ալ Ձերդ Բ. Սրբազնութեան պէս Մեծաշուք, Յարգելի ճանապարհորդ հիւրերի համար . . . » : Փիւսիւշ գիւղի բնական գեղեցկութիւնը Հայ ուղևորին չիշեցնում է Հայաստանի գիւղերին : Օգոստոսի 10 ին արեւածագից յետոյ թողլով Փիւսիւշ գիւղին իւր տեղը բարձրանում ենք Սաւալանի հարաւային դռի վերայ, հետզհետէ նկատելի են լինում հեռուէ հեռի մեր ստորեւ Սարաբի հովտում ցանցառ գիւղեր : Հսկայ Սաւալանի լանջի վերայ ենք՝ հանդիպակաց կողմը մըցում է իւր բարձրութեամբ Փիւսիւշ լեռը Սաւալանի հետ՝ բաց այստեղից տեսնում ենք, որ Փիւսիւշը յաղթութեւնով խոնարհում է հսկային առաջ :

Սաւալան լեռնային ուղևորութիւնը պատ-

կերացնում էր մեր աչքի առաջ Նգեկիէլի՝ «չորացած ոսկրների» դաշտը, զի մէն մի քալափոխում կենդանեաց կմախքների և ոսկրների էինք հանդիպում. մեր այն հարցմանը թէ՛ «ինչ կարող են լինել այսքան կմախքներ և ոսկրներ», պատասխանեցին մեր առաջնորդն ու ձիապանը՝ «սոքա են դժբաղդ զոհեր այս հսկայ, մարգասպան լեռան (Սաւալանին մատնանիշ անելով), տարի չի լինում, որ հարիւրաւոր մարդիկ ու անասուններ այս անոգորմ գէպսւնում չխեղդուին բքից ու ձնից» : Ալստեղ ճանապարհի վերայ կալ մի հաստատուն կամարաշէն քարէնային՝ այս անշէն գէպսւնում անցորդներին իբրեւ պատուարան է շինուած ձիւն ու բուք ժամանակների համար, լուռ ու մոնշ վկայ Շահ-աբասի մեծագործութեանց . . : Շարունակելով այսպէս մեր բնթացքը լեռնային կածանով իրիկնագէտին մօտենում ենք մի գիւղի՝ որը դրխատի է նման և որ կոչուում է Նիւր (թերեւ նաւր՝ լոյս) մերձաւոր բարձրաւանդակից դիտելիս մարդս տալում է իւր ունեցած բնութեան գեղեցկութեան վերայ՝ լանկուցանում է բանաստեղծի սիրտն ու հոգին՝ «Կիւսիւշների վտղանն եղող այս ծաղկատանը :

Սաւալանի սրտից բղխած սառնորակ աղբերակներից կազմուելով մի գետակ խոխոջմամբ զալիս է գիւղին միջից անցկենում, որն աւելայնում է գիւղին հրապուրը՝ թողլով իւր բարբարա ազդեցութիւնը : Գետակին վերայ շինում են բաւականին մի մեծածախս կամուրջ. գիւղը բարձրացած է ամփի թէտորաձև գետակին ձախ եզրում գտանուող պառեկին վերայ : Բացի բնական գեղեցկութիւնից ոչինչ կալ այստեղ՝ շինական Պարսիկները փոխանակ մի բան արուեստով աւելացնելու բնական գեղեցկութեանց վերայ՝ աւելի նսեմացնում են անմաքու-

թեամբ և անճաշակ որջերի նմանող տներով, որոնք բնակութեան ամեն յատկութիւններէից զուրկ են :

ՆԻՐԻՑ—ՍՐԳԵՅԻՆ

Օգոստոսի 11 ին առաւօտեան 6 ժամին լուրի ընկնելով գնում ենք բարձրաւանդակներից ելեէջներով՝ գրեթէ միշտ մեզ ընկերացող Նիքի գետակի հոսանքն ի վայր դէպի արևելա-հիւսիս : Նիքի գետակ Արգաբիլի մօտից անցկենալով գնում է նրա հիւսիսային կողմը քիչ հեռի նրանից խառնուում է «Գարա-ռո» կոչուած գետին հետ՝ վերջինս ընդունելով զանազան օժանդակների՝ Իֆրիկ (չգիտեմ Մասիսի ստորոտում եղող Իֆրիկ հետ) մօտերքը միանում է Երասխին հետ, որ Մուղանի հարաւային—արևմտեան կողմն է : Մեր այս օրուան ճանապարհների հողեր մշակութեան համար շատ լաւ են՝ բայց թէ ինչո՞ւ ամենափոքր մասը մշակուած է տեսնուում չ'գիտեմ : Կէսօրուան ժամանակ բացուեց մեր առաջ Արգաբիլէան պտղաբեր հովիտը՝ որի ճիշդ կեդրոնումն է Արգաբիլը՝ կապուտ մշուշում սևին է տալիս իւր ծառերի ու պարտէզների գոյնը : Գավրէժից մինչև այստեղ մեր անցկացած ընդարձակ հողերը շատ սակաւամարդ էին չնայած, որ Ատր-պատականը Պարսկական նահանգներից բազմամարդն է : Ն. Բ. Սրբազնութիւնը մի անգամ շատ իրաւացի գիտեց թէ՛ «զարմանում եմ, որ Պարսից նախկին Շահերը բազմաթիւ զօրաց բանակներն ուստիք էին կազմում, չէ՞ որ էլի նոյն Պարսկաստանն է սա, որ երբեմն իւր զօրքերի անհամար քանակութեամբ բովանդակ աշխարհն էր սարսափեցնում . . . » : Կտրելով Արգաբիլէան հովտի

հարաւ-արևմտեան մասը՝ կէսօրուանից յետոյ քաղաքը մտանք. գնում ենք անկարգ, անմաքուր, նեղ ու գժուձ, նա մանաւանդ փոշոտ փողոցների և շուկաների միջով դէպի Հայոց թաղը՝ վաճառականապետ Պ. Խաչատուր Շահբազեանի տան դրան առաջ կանգնեցանք, տանից դուրս է գալիս 25-27 տարեկան հասակով, կրակոտ խանդավառ շարժումներով մի երիտասարդ, Պ. Գաբրիէլ Շահբազեանց՝ որդի Պ. Խ. Շահբազեանցի. սա Ն. Բ. Սրբազնութեան անակնկալ բարի գալստեան վերայ այլայլած խնդապատար սրտով մօտենալով համբուրեց Առաջնորդ Հօր Ս. աջը՝ տանը վերնայարկում առաջնորդելով զնա, ուր տակաւին Ս. Հայրն ուղի վերայ էր, ներս մտաւ ծերունի վաճառականապետը դողդոջուն ու երկիւղած քայլերով՝ մօտեցաւ Ս. Հօրը, համբուրեց սրտի բերկրութեամբ Նորա Ս. աջը և գոհացաւ Աստուածանից, որ իրան ծերութեան օրերում մի Հայ Եպիսկոպոսի ուղարկեց Արգաբիլում և զայն հիւրասիրելու պատուին արժանացուց զինքը, այն Արգաբիլում՝ ուր առաջին անգամն է մի բարձրաստիճան Հայ հոգեւորականի ներկայութիւնը . . . : Ծերունուն յաջորդեցին իւր հարսներն ու թոռները և Շահբազեանց տան բոլոր պարագայքը :

Ն. Բ. Սրբազնութեան գալստեան լուրը վայրկենապէս տարածուեց Արգաբիլի փոքրաթիւ Հայերի շրջանում, որոնք խմբուելով իրիկնապահին եկան յայտնելու իրանց բաղդաւորութիւնը Ս. Հօր շնորհաբեր գալստեան առիթովը :

Հայ Եպիսկոպոսի ներկայութիւնը՝ մի անսպասելի նորութիւն էր Արգաբիլի Հայ փոքրիկ հօտին համար՝ վասնորոյ իրենց ուրախութիւնն անսահման էր, չգիտէին թէ՛ ինչպէս արտայայտեն իրենց ուրախութեան զգացումները :

Երեք օրից յետոյ օգոստոսի 14-ին Ս. Հայրը կամենալով օգտուիլ Սափալանի արևելա—հարաւի ստորոտում գտնուող հանքային ջերմուկներից, հետն ունենալով Շահբազեանց երիտասարդին և ուրիշներին այնտեղ գնաց և 24 ժամից վերադարձաւ : Հայրը փափաքում էին տեսնել իրենց քաղաքում Եպիսկոպոսական պատարագը՝ բայց ինչ ինչ անյարմարութիւնների պատճառաւ Ս. Հայրը չ'կարողացաւ իրենց ցանկութիւնը կատարել, միայն Օգոստոսի 16-ին Վերափոխման կիւրակէում մի սփոփիչ քարոզով մխիթարեց ժողովրդին, որ խռնուած էր քաղաքին մատուռում : Նոյն օրուան պատարագիչն էր Տ. Մեսրոպ թահանան Վանեցի, զոր Արդաբիլցի Հայերը տարեթոշակով են պահում իրանց հոգեւոր մատակարարութեան համար :

— Արդաբիլի Հայերը Դավրէժից են գաղթած 70 տարով առաջ, ունին մի անշուք մատուռն յանուն Ս.Աստուածածնի, որոյ հիմնարկութեան թուականն է 1876. ունին անապահով դրութեամբ մի երկսեռ Ուսումնարան, ուսուցիչ նոր բերել էին՝ Ներսիսեան Ուսումնարանում աւարտած մի Արդուիւնցի երիտասարդ, վարժուհու պէտք ունէին՝ աշխատում էին Տփլիսից բերել : Արդաբիլի Հայերի պարապմունքն է ընդհանրապէս վաճառականութիւն և վաճառականի գործակատարութիւն, տիրող ազգից զանազանուում են կոկիկ ու մաքուր տարազով, ճաշակը, ձեւը թէ արանց և կանանց նոյնն է ընդ Դավրիժեցի Հայոց : Գրեթէ առանց բացառութեան բարեկեցիկ են, նորութիւն սիրող, ուսումը յարգող, թատերասէր և ընթերցասէր, ունին Ուսումնարանին կից Ընթերցարան Գրադարան, որ նոր են բացած և թատրոն :

Արդաբիլում Պարսիկներից և փոքրաթիւ Հա-

յերից ի զատ ուրիշ ազգերից և ոչ մի անհատ կայ : Պարսիկներն ու Հայերն այստեղ միմեանց հետ ապրում են եղբայրաբար ու շատ խաղաղ՝ Դավրէժի հետ բաղդատած այստեղի Պարսիկներն անհամեմատ բարի և հանգարտ բնաւորութիւն ունին՝ բարեկամական յարգանք են վերաբերուում դէպի Հայ տարրը՝ անկեղծ խոստովանելով : Հայերի թիւն 30 տուն է՝ ունին բաշանիք. ամբողջ քաղաքիս ենթադրական թիւն է 35-40,000 բնակիչ : Քաղաքը հեռուից դիտելիս՝ մերկ ընդարձակ դաշտի վերայ գտնուող մի խիտ անտառի տեսքն ունի. տեսարանը շատ սքանչելի և ակնապարար է, լեռնադաշտին ամեն կողմ գետակներ, առուներ, առուակներ՝ ցանցի պէս հիւսած են ու մատակարարում են արգաւանդ հողին առատ ջուր, այս հանգամանքների շնորհիւ Արդաբիլեան լեռնադաշտի բուսականութիւնը ցանկացածից լաւ է երևում : Արեւմուտքից Սափալան և Արևելքից Դիլիսի լեռները միմեանց բազուկներով՝ Արդաբիլեան լեռնահովտին պարփակած են աջ ու ձախ կողմերից :

— Արդաբիլում պղնձագործութեան արուեստը լաւ վիճակումն է, նիւթը ստանում են Կովկասից Հայ վաճառականների ձեռքով՝ Արդաբիլն է մատակարարում շրջակայ քաղաքներին ու գաւառներին պղնձեղէններ :

— Սափալանն, որի բարձրութիւնն է 12,200 ոտք՝ Արդաբիլին այն է՝ ինչ որ են Մասիսը՝ Երևանին, Վալազը՝ Վանին և Սիփանն ու Գրգուռ Բզնունեաց ծովին . . . : Սափալանի գագաթում բարձրացող տեղացիների պատմածին նայելով այնտեղ կան լճակներ, որպիսին ունի Հայաստանում Նէֆիս լեռն (Վանայ ծովի արևմտեան ափում հիւսիսային կողմից Գրգուռին յարակեց) ինչպէս նաև Արագածը :

— Արդաբիլում իբրև հնութեան կոթող անա-

ղարտ մնում է 2) Շահ-Խամայիլի ճենապակեայ արքունիքը՝ 700 ամեալ հրաշալի գեղեցկութեամբ մի ապարանք, զոր անձամբ տեսնելու բաղձն ունեցայ Օգոստոսի 16 ին, ընկերակցութեամբ Պ. Շահբաղեանցի։ Պալատին ներքին դրան մօտին մի խումբ աստուծոյն են սպասում, ներս մտնել կամեցողներից մօտից փող ստանալու համար (4—5 ղուան)։ Պալատին արտաքին՝ ներքին դռներն զուտ արծաթից են, ներսը գիտելիս մարդս ապշում է ոչ այնքան պալատին չքնաղ ճարտարապետական կազմուածքին վերայ, որքան ոսկու առատութեան և անխնայ շինութեան ներքին ատաղձի տեղ գործածուելուն վերայ, զի բացի ձեղունից և որմերից, որ համակ զուտ ոսկով ծեփուած են՝ պատուհանների կոշտ վանդակներն անգամ ոսկի են՝ ինչպէս նաև ալլ և ալլ առարկաներ, շէնքը մի յարկանի է՝ կտուրը գոյնզգոյն նկարէն ճենապակիներով ծածկուած է՝ որի մի կողմում բարձրացած է բաւական մեծութեամբ ձուածեղ փայլի չափով թեքուելիս՝ տեսնուում է նրանից փայտէ կոշտ վանդակներով անջատուած մի առանձին մասն՝ որի որմերի վերայ զանազան ձևի խորշիկներ շինուած են մինչև առաստաղի քիւերը, սոյն խորշիկներում գետեղուած են ձևին համեմատ հին յախճապակեայ անօթներ, ինչպէս երևում են նախնի թագաւորական տան անօթներն են,։ Դառնում ենք

2) Եթէ Շահ-Խամայիլի օրէրումն է շինուած, հախառի տեղացւոյ ասածներին հաղիւ թէ 3-400 տարուան հնութիւն համարուի։ Շահ-Խամայիլը Թիւ գարում թագաւորել է Արդաբիլ քաղաքում, Շահ-Սէֆեանց տանից։ Սա որ եղած է Պարսկական ինքնակալութեան նորոգել՝ յօր կողմից Ուզուն-Հասանայ թոռն էր, որի հօր տունը ժառանգական սրբութեան համբաւ էր վայելում, սոյն հարստութեան նախահայրն էր Շէխ-Սէֆիուդէն (Շէխ-Սէֆի)։

կեդրոնից դէպի Արևմուտք այստեղ տեսնում ենք 2 փառաւոր շիրիմներ, որոց վերայ աշխատող արուեստաւորի հիանալի տաղանդն է փայլում, բանուած է ոսկեյեռ ընտիր փղոսկրից խիստ նուրբ ճաշակով։ — Արդաբիլը Պարսկաստանի քսորավայրն է, ուր քսորուում են պալատական և վաճառական յանցաւորներ միայն. քաղաքին արևմտեան կողմն է քսորելոց բերդը՝ ուր անցկացնում են իրանց քաւութեան օրերը։

— Արդաբիլի փոքրաթիւ Հայերը՝ կրօնի, հաւատոյ դաւանութեան՝ բարոյական նկարագրի կողմից Դավրէթի Հայերից ոչինչով չեն զանազանուում, համակիր «Սշակ» լրագրի քարոզած սկզբունքներին՝ Դավրէթեցւոյ պէս կիւրակէ պահելուն հետ բան չունին. . . իբրև անկողմնակալ մէկը ստիպուած եմ այս դառն իրողութիւնները նշանակել ուղևորութեանս Գրքոյկում շատ համառօտ կերպով։

ԱՐԴԱԲԻԼԻՅ—ԱՍՏԱՐԱՅ

Օգոստոսի 17 ին առաւօտեան 7 ժամին երբ պատրաստ էինք թողուլ Արդաբիլն՝ նոյն ժամին Շահբաղեանց տան մօտին համախմբուեցին Հայերը Սրբազան հիւրին ճանապարհ ձգելու համար հանդիսաւոր կերպով։ Ս. Հայրը տալով իւր օրհնութեան ու շնորհակալութեան հետ հրաժեշտի ողջոյնը՝ Շահբաղեանց հիւրասէր՝ Նահապետական գերդաստանին, հեռանում ենք քաղաքամիջից դէպի հիւսիս աջ ու ձախ թողնելով ողորմելի՝ աղոտ շուկաներ ու փողոցներ։ Տեղացի Պարսիկներին արտասովոր երևոյթ էր մեր ջբախումբը, միայն ապշած բերանաբաց նայում էին՝ մանաւանդ շքակիր անձնաւորութիւնն իրան տարազով և վեղարով շատ էր զար-

մայնում խեղճ չտեսներին, նոր օրինակ երևոյթ էր նոցա համար իրաւունք ունէին ապշելու թշուառականները : Հայեր 1-2 փարսախաչափ ընկերանալուց յետոյ համբուրելով Ս. Հօր Ս. աջ վերադարձան. իսկ մենք կտրելով լեռնազաշտին հիւսիս-արեւելեան մասն անցկացանք՝ « Գարասու գետ » ի օժանդակներից մինից՝ հասնելով Գիւանի սարերի ստորոտներում շարունակեցինք զառիվեր բարձրանալ սառնաշունչ մշուշի միջից՝ (Օգոստոսի 17 ին ցրտից դողդողում էինք, վերում իր տեղը մոռացայ ասել, որ Արգաբիլի օդի աստիճանն ըստ Ռ. ի 14ից վեր էր ցոյց տալիս) մինչ շարունակում ենք մեր վերելքը, ինքզինքնիս մի մեծ գիւղում Ա. շահին՝ գտանք լեռան վերայ եղող փոքրիկ սարահարթում, այստեղից երևում են Սափալան և Արգաբիլեան սարահարթն աւելի հրապուրիչ տեսքով . . . : Յիշեալ գիւղը մեր ճանապարհի վերայ լինելուն համար հետաքրքրուեցի բնակչաց որքանութեան մասին՝ ասացին՝ որ 250-300 տան չափ բնակիչ ունի՝ երևում էին և գեղջկական կրպակներ, գիւղին տեղ բանաստեղծական հիանալի դիրք ունի, բնական գեղեցկութիւնը նսեմացնում են կեանքի ճաշակը չիմացող գեղջուկներն իրանց անհեթեթ բնակարաններով ու աղտեղութեամբ :

Սոյն գիւղից գրեթէ՝ սկսում են երևան գալ քնցողիկ թփեր՝ որոնք իսկոյն ևեթ փոխեցին մեր ճանապարհորդութեան միօրինակութիւնը. որքան լեռան կատարին ենք մօտենում՝ այնքան խտանում ու խոշորանում են մինչև վերջապէս կատարը բարձրանալիս գտնում ենք զմեզ մի յաղթ կուսական անտառում, որի տարածութեան վերայ միայն զարմանում ենք :

Լեռան կատարից հեռի հիւսիս-արեւելքի կողմը նշմարուեց կապոյտ անհունութեան կիսի՝ կապոյտ

մակերես Կասպիական ծովի . . . Թողով դալարազուարճ մարմանդներով լերան կատարը և Սափալանն ու Արգաբիլեան հովիտը շրջուում ենք դէպի ծովակողմի երեսը՝ շարունակելով խոնարհիլ զառիվայր այս անգամիս : Յանկարծական այս փոփոխութիւնների և յաջորդող հիասքանչ տեսարանների առաջ շուարած էի, այլալոգ բնութիւնը թուում էր ինձ թատերական խաղ, աճալարաութիւն . . . :

Անտառին խորքերում օրն երեկոյանալով մեր վերայ՝ գիշերեցինք մի փայտաշէն խրճիթում և հետեւալ Օգոստոսի 18 ին արշալոյսին հետ ցած խոնարհիլը շարունակեցինք զգլխիչ տեսարաններից . . . Նախորդ օրուանից տեղացած անձրևներից ճանապարհները ճահիճ էին դառել՝ առանց այն էլ դժուարակոխ լեռնային կածաններ են արդէն, շատ տեղեր երկու կողմից անդնդային խորութիւն ունին որ տեղերից մեծ շառաչմամբ հոսում են դետեր, ուղեւորը ստիպուած է լինում հետի գնալ մէջտեղում բարձրացած բարակ, նեղ և խախուտ թումբերի վրայից՝ ամենաթեթեւ անուշադրութիւնը բաւական է զինքը կորստեան դուռը տանելու . . . : Մինչ մի կողմից այսպիսի վտանգաւոր տեղերից խարխափելով գնում ենք, միւս կողմերից անտառին վայրենի, անարատ գեղեցկութիւնը մեր երեսն ի վեր ծիծաղում է . . . կարծում ես զմեզ զայրացնելու հաճոյքով՝ մեր ուշքն իրան վերայ է դարձնում . . . :

Ուղեւորը չի կարող անուշադիր անցկենալ շրջապատող բնութեան հրաշալիքն եղող՝ դարաւոր հաստաբուն ծառերի մօտից՝ որոնք անտառի վեհութիւնն աւելացնում են շնորհազարդ ծերերի պէս . . . որոց մէջ մի տերեւը՝ մէջ մի ճղիկը՝ ուղեւորին հետ խօսում են իրանց պարզ լեզուով, որ սիրտ է խշխշացնում և հոգի է յուզում . . . : Կամաց կամաց ցա-

ծանուծ էնք անտառին ստորին մասերում, լեռը բարձրանում է մեր ետևից իւր Պուրակային վարսերով ծածկելով մեր աչքերից նախորդ օրուան ուղեւորութեան չոր ու ցամաք տեսարանները. ընկերանում ենք անտառային խոր լուռութիւնն իւր աղմուկով խանգարող մի որոտնգոստ գետի, որի հոսանքն ի վար թաւոստեայ ծառերի, թփերի շուքի տակով միշտ ցածանում ենք, յափշտակուած բնութեան ներդաշնակութեան վերայ՝ սաղարթագեղ ծառերի միջից հազարաւոր թռչնիկների սրտազրաւ գեղգեղանքը մեր հոգու թելերին դպչում էին, անոյշ ու հաճելի հպումով . . . այնպէս՝ որ գոգցես տանում հեռացնում էին մեզ քնափութեան աշխարհում . . . այս հեշտօրօրքով անգգալի էր մեր յառաջգնացութիւնը մինչ այսպէս՝ և ահա յանկարծ նկատուեց մեր առաջ տերևների արանքից մի ինչ որ սպիտակորմեայ քաղաքակիրթ ձևի շինութիւն, որի սագաձև կտուրը ծածկուած է փայտեայ տախտակներով՝ շուրջը հրացաններն ուսերնին սպասում են սպիտակազգեստ զինուորներ, Ռուս սահմանապահ զինուորներ էին՝ որոնց յանկարծական երևնալը այս խոր անտառում քիչ չէր զարմացնում մեզ, շատ բաներ էին անցկենում մեր մտքից այս երևույթի սլաոճառաւ . . . այսպէս թէ այնպէս Աստուած գիտէ օրհնութեամբ յաջողել այն ազգին կամ անհատին որին նա կհաճի . . .

Վերջացնելով մեր վայրէջքը գնում ենք այժմ ծովափնեայ տափարակով մեր ուղեցոյց գետին հետ, որը այստեղ կոչուում է «Աստարայ» և գնում է հեզասահ՝ ոչ առաջուան պէս լիլփան գոռոզութեամբ, նոր հարսի լուռութեամբ՝ օձապտոյտ և յամրընթաց մօտենում է ծովին խոնարհութեամբ համբուրուել փրփրերախ ալիքներին հետ . . . : Ծովափնեայ անտառաբնակ Պարսիկներն անտառին զա-

նազան մառերում ծառերը կտրատած՝ արմատահան արած բրնձի արտերի են վերածել, որ տեղերից արտագրւում է ամենալաւ բրինձ. այս կիսավայրենիները ցրիւ բնակուում են ողորմելի խրճիթներում, որոց որմերը բաղկացած են լինում մի քանի գերաններից՝ որք կամ միմեանց վերայ պարզուած են հորիզոնական գիրքով և կամ ուղղաձիգ տնկուած և ցանցառ հիւսուած ճիպոտներով կամ խոտերով, կտուրն էլ ծածկուած է լինում խոտերով (խոտի առատութեան խօսք չկայ) կամ եղեգնեայ խրճիկներով :

Այստեղի անտառաբնակները պահում են մի տեսակ կով ու եզն, որոց ուսերի վերայ մի թզաչափ բարձրութեամբ սապատներ կան (գիրուց) նաև գէպի առաջ երկարող ոլորուն եղջիւրներ : Այս երկրում ամեն բան Ագամին դարն է յիշեցնում ուղեւորին . . . :



ՈՍՏԱՐՈՅ

Օրուան սոթաժամերին մօտենալով Աստարային՝ գետեզրում ծառերի շուքերի տակում դադար առնելով կէսօրուայ ճաշն էինք անում, այս պահուն երկու Հայ երիտասարդ ձիաւորներ սրարշաւ մեր մօտ հասան և Ս. Հօր ս. աջը համբուրեցին մաղթելով բարի գալուստ . . . խոնջեալ Ս. ուղեւորին իրենց մէջն առնելով մի քանի քալ ընթանալուց յետոյ հանդիպեցինք Աստարայի սակաւաթիւ Հայերի խմբին, որոնք ճանապարհին մէկ կողմի վերայ բացաղուի շարուած էին սպասում Հայ Ենպիս-

կոպոսի օրհնաբեր գալստեանը. Ն. Բ. Սրբազնութիւնը զգաճուած սրտով, ժպտելով ողջունեց ամէնքին մեկնելով նոցա իւր ս. աջ համբուրելու, ապա բերկրալից շրջապատած առաջնորդեցին նաւամատոյցը (Աստարայ). Ռուսաց մաքսատան դրան մօտից անցկենալիս Ս. Հայրը սիրով ողջունեց պաշտօնեաներին : Ս. Հայրն առաջնորդուեց Պ. Մարգար Ահարօնեանցի տանը ('Լաբաբաշից վերաբնակած) ուր հանգիստ արաւ. դիմաւորող Հայերը վերստին Ս. Հօր աջն առնելով հեռացան, որ հանգիստ անէ պահ մի : Հետեւեալ առաւօտն Օգոստոսի 19 ին Ս. Հայրը բարեհաճեցաւ Հայերի հետն ի միասին այցելել տեղւոյն նորակառոյց փայտակերտ եկեղեցին, որ շինուած է 1894 թ. ջանիւք Պ. Մարգար Ահարօնեանցի, դեռ օծուած չէ կառավարութեան անբարեխիղճ նկատողութեան պատճառաւ . . . : Այս մասին Ս. Հօր յայտնեցին իրենց խոր վիշտը, նա խորհուրդ տուեց գրաւոր դիմել Վեհ. Հայրապետին՝ խնդիրը իրան պարզել, որով յուսալի է դժուարութեանց բարձումն : — Աստարայում միայն 12 տուն Հայեր կան, քահանայ չունին՝ հոգեւոր պետքերի համար մօտակայ ծովեզրեայ «Լաբաբաշ» քաղաքից քահանայ բերել են տալիս, վարժարան էլ չունին իրանց մանուկներն ուղարկում են Բագու կրթելու համար : — Աստարաներ կրկին են, մինը Ռուսաց՝ միւսը Պարսից, միմիանցից անջատուում են համանուն գետով, Ռուսաց Աստարայում կան Ռուսներ, Մալախաններ, Հայեր և Պարսիկներ, բացի մաքսատանից կան վաճառականական մթերանոցներ ընկերութիւնների, անհատների. գլխաւոր տեղը բռնում են թումանեանք, Մերկիւրի ընկերութիւն : Մեր Դավրէթից-Աստարայ ուղևորութեան ընթացքում, աչքի էին ընկնում (Յ. Թ.) տառերը գրեթէ ամեն

կարաւաններում՝ Թումանեանց տան վաճառականական պարզ նշանագրերը՝ տեսնելիս այնքան ուրախ էի զգում զիս՝ որքան չէի ուրախանար եթէ իրօք ինձ լինէին այդ հարստութիւնները՝ բաւական է որ Հայ է սրանցով բաղդաւորւողն ասում էի իւրովի . . . : — Երկու Աստարաներն ի միասին ենթագրուում են 2-3,000 տուն : Բնակութիւնները հաստատուած են ծովափնեայ թանձր աւազի վերայ, կլիման տաք և խոնաւ է այնպէս որ անսովոր մարգի համար անտանելի է :

ԱՍՏԱՐԻԾ—ԷՆԶԵԼԻ

Օգոստոսի 20 ին նախ քան արշալոյսը՝ Ռուսական Պօստային շոգենաւը սուլիչով ազդարարեց իւր գալը՝ ձայնից արթնացած պատրաստութիւնը փութացնելով ներկայ եղողներին տուեց իւր հրաժեշտի ողջոյնը Ն. Բ. Սրբազնութիւնը, ճեպով ծովեզրը գնացինք ընկերակցութեամբ Պ. Մ. Ահարօնեանցի և ուրիշ երկու Հայերի, ուր սպասող նաւակով մօտեցանք շոգենաւին, Ն. Բ. Սրբազնութիւնն առանձնացաւ առաջին նստիւում. այժմ ծովի վերայ ենք՝ երկնք, տաղտկալի Պարսկական ցամաքային ուղևորութիւնից յետոյ. ինչ հաճելի և ինչ սիրուն են թուում շրջապատող բնութեան հրաշալիքներ, ով բաղդ է ունեցել ծովի վերայից դիտել կանաչահիւս, ծաղկապսակ ծովափնեայ սարեր, գարեաններ, նա գիտէ միայն ուղևորներին հաճոյից կոպարը հանգէպ այս գմայլեցուցիչ տեսարանների . . . միակ դժբաղդութիւնս այն էր, որ ծովից բռնուեցի՝ որով զուրկ մնացի կուշտ կուշտ գիտելուց : Վեց ժամ նաւարկելուց յետոյ սուլիչն ազ-

դարարեց Եւլի Զասնելը՝ նկատուեցին ծովագրին վերայ շինութիւններ և այն կողմն էլի անհատնում խիտ անտառներ, անտառ և ծով և ոչ այլ ինչ . . . : Ծովագրին վերայ ամեն շինութիւններից անհամեմատ բարձր՝ հսկայ փարոսի նման բարձրանում է Պարսից թագաւորների պալատն, որ երբ նոքա Էնդէլիի վրայով Կովկասն են գնում, օթեւանում են այստեղ : Էնդէլին՝ իւր նաւամատուցով, մակուկավարներով՝ որք ճաճկական կարմիր ֆէսով աչքի են ընկնում և վերջապէս՝ լիմոնի, կիտրոնի, թզենի և նարնջենի պարտեզներով յիշեցնում է Յոպպէին : Այստեղ Ատր-պատականի անհամ Թուրքերէնին յաջորդեց Գիլագերէն, որը Պարսկերէնի մի գաւառաբարբառն է տարածուած Գիլանի և Մաղանդարանի նահանգներում. մակուկավարների աղմկալից խօսակցութեան եղանակն և կոպիտ արտաբերութիւնը Յոպպէի Սրբաներից քիչ է տարբերուում : Ի միջի այլ նաւակների փոնչտալով մօտենում է շոգենաւին մի գեղեցիկ պարկազ (Barque շոգէնաւ), որի մէջ աչքի էին ընկնում մի խումբ Հայեր Եւրոպական ճաշակի հանդերձներով ու յարգէ գլխարկներով, սոքա շոգենաւին վերայ բարձրանալով Ս. Հօրը մօտեցան ուրախ զգացումներով՝ աջն առնելուց յետոյ խնդրեցին բարեհաճի նստիլ Պարկազում, որ իրան համար է սպասում : Ափը հասնելիս սպասում էին այնտեղ Էնդէլիցիները, որք սիրալիւր կերպով ցամաքին վերայ ընդունեցին իրանց Առաջնորդ Հօրը : Ծովափն՝ ուր, դուրս ելանք Պարկազից՝ մի փոքրիկ շուկայ է, այստեղ տեսնուում են Եւրոպական գրգակաւորների մի բազմութիւն, որոց շատերը Ռուսներ են ձկնորսութեամբ պարապող :

Ս. Հայրը շրջապատողներից առաջնորդուեց ուղղակի տեղւոյն Հայկական մատուռում, ուր ծնրա-

դրելուց յետոյ՝ Թումանեանց տան գործակատար Պ. Աւագ Մելիք-Ալլահ-վերդեանցի տանը իջեանեց : Այստեղ Ս. Հայրը ժողովրդի ուշադրութիւնը հրաւիրեց իրանց Եկեղեցւոյ անխնամ դրութեան վերայ, յորդորեց՝ որ Ազգ. Եկեղեցւոյ նիւթական շինութեան՝ մաքրութեան ու բարեգարգութեան համար յատուկ հոգացողութիւն լինի : Ն. Բ. Սրբազնութիւնը այստեղ ոտք կոխեց իւր վիճակի հողին վերայ ուստից և եթ գործելով սկսեց ուղևորել դէպի պաշտօնին կեդրոնավայրը :



ՎԵՑ ՕՐ ԷՆԶԵԼԻՈՒՄ

Օգոստոսի 20 ին Ս. Առաջնորդը հրաւեր կարգաց անմիջապէս սակաւաթիւ Հայերին, որ հաւաքուին յայանելու համար իրանց կարիքները, բարոյական, կրթական և մինչևանգամ նիւթական և այլն : Ըստ հրամանի Ն. Բ. Սրբազնութեան ամսույս 21 ին առաւօտեան 4 է ին հաւաքուեցին ի միասին. թէ ինչ արդիւնք ունեցաւ այդ հաւաքումն՝ ցոյց է տալիս հետեւեալ արձանագրութիւնն, որ կազմուեցաւ նոյն ժողովում : « 1898 թ. Օգոստոսի 21 ին Էնդէլիի Ս. Վարդանանց մի գասեան երկսեռ Դպրոցի » զահլիճում Թեմիս Առաջնորդ Հօր՝ Ս. Մաղաքիա Եպիսկոպոս Տէրունեանի նախագահութեամբ և հրաւիրանօք կայացաւ ընդհանուր ժողով, մի քանի կարևոր խորհրդակցութիւն անել տեղական Ազգ. խնդիրների վերաբերմամբ : Սոյն ժողովին ներկայ էին 12 անձինք միայն, որոնք հաւաքուեցան ժամի 4 է ին :

« 1. Ս. Հայրը նախ և յառաջ առաջարկեց ներկայ եղող հասարակութեանը թէ՛ ինչ ցաւ ինչ խնդիր

ունին թէ կրօնական թէ ուսումնական և մինչև անգամ տնտեսական, ժողովականներն առ ժամ մի լուեցին, Ս. Հայրը ինքնաբերաբար առաջարկեց՝ արդեօք կարևոր չէր լինել Էնգելին համար առանձին քահանայ ունենալ: Այս հարցին ամենեքեան միաձայն սկզբունքով բնդունեցին քահանայ ունենալու անհրաժեշտութիւնը մեր և շրջակայքի (Մազանդարան և այլն) համար. սակայն նորա ռոճիկը՝ հայթայթելու համար մի փոքր կասկածելի համարեցին ոմանք. մի թեթև հաշուից երևաց որ մինակ Էնգելին կարող է տալ 100 թուման և շրջակայքն էլ նոյնպէս 100 թուման այս միջոցների մասին որոշուեցաւ ապագայում խորհիլ և հայթայթել կարողանալը որոշելուց յետոյ հասարակութիւնը դիմէ Ս. Հօրը քահանայ ուղարկելու համար: 2. Պ. Փ. Գիլանցեանը առաջարկեց հարցնել Պ. Ա. Տ. Ս. ին թէ՛ ինչո՞ւ մինչև հիմայ ոչ մի բացատրութիւն չէ տուել երեկոյթից հաւաքած մնացորդ գումարի վճարման մասին: Ս. Հայրը բացատրութիւն պահանջեց այդ հարցի մանրամասնութեանց մասին, ուսուցիչը իբրև նախկին՝ այդ հարցին վերաբերեալ ժողովի ատենադպիր բացատրեց մանրամասնութիւնները. զանազան թեր ուղէմ կարծիքներից յետոյ Սրբազանը առաջարկեց Պ. Ա. ին կամ պէտք է լրացնել պակասորդ գումարը իբրև բարոյական պարտաւորութիւն, կամ մինչև երկու ամիս ժամանակամիջոցում բերել տալ բացակայ անձինքներից նոյն երեկոյեան իրենց նուիրած գումարների քանակութեան մասին նամակներ, որպէսզի դոցանով մեղադրանքից արդարանայ, յիշեալը խոստացաւ նամակներ բերել տալը: Ժողովողի այն թախանձանքին թէ՛ այդ կերպով չի նորոգուել ժողովրդի միջև նախկին համերաշխութիւնը և սիրով կապուելը միմեանց հետ, Սրբազանը ան-

համերաշխութիւնը պակասորդ գումարի մէջ գտնելով խոստացաւ յօգուտ ապագայ համերաշխութեան իւր անձնական միջոցներից լրացնել այդ գումարը. սակայն ժամանակի սղութեան պատճառաւ նախքան այդ անելը առաջարկեց, որ վաղը առաւօտեան ժամի 7 ից մինչև 10 ը անխտիր կերպով բոլորը ժողովին ներկայ լինին առկախ խնդիրները վերջնականապէս լուծելու: Ս. մսի 22 ին էլ նիստ տեղի ունեցաւ, որով տեղական հարցերից մի քանիսը ստացան իրենց բարեյաջող լուծումն: Երկրորդ նիստից յետոյ Սրբազանը հետն առած ժողովականներն Եկեղեցի գնաց ուր Աւետարանի սփոփիչ վարդապետութեամբ քարոզեց և յորդորեց՝ որ հաստատուն մնան սիրոյ, խաղաղութեան կապով միացած . . . : Էնգելիի Հայոց թիւն է 20 տուն. իրանց Եկեղեցւոյ նորոգութեան թիւն է 1874 ը, հիմնարկութեան անյայտ է՝ Ուսումնարանը Եկեղեցւոյ մօտն է, ուսուցիչն և ուսուցչուհին այր և կին են, առաջինը տեղացի է Ս. Էջմիածնայ Գէորգեան ձեմարանում ուսած՝ երկրորդն Ս. գուլեցի է տեղւոյն թաղային օրիորդաց Վարժարանում ուսած: Ռաշտից քահանայ բերում են հարկաւոր պարագաներում: Հայոց առտնին կենցաղավարութիւնն ըստ երևոյթին բաւական լաւ է Էնգելիում. զբաղումնին վաճառականութիւն-վաճառականի գործակատարութիւն և նրման գործեր են, իրենց առօրեայն հայթայթելու խնդրից ի զատ ոչնչով չեն հետաքրքրուում, Էնգելիի և Աստարայի Հայերը ցանկալի նկարագրի կողմից Դավրէթի և Արզաբիի Հայերից աւելի խոնարհաստիճանի վերայ են կանգնած . . . : Էնգելիի ամբողջ ազգաբնակչութեան ենթագրական թիւն է 9-10,000 բնակիչ. տեղացի Պարսիկները շատ խաղաղասէր ու բարի են՝ չէ կայրելի երբէք համեմատել Ս. տր-պա-

տականի վայրենաբարոյ ու անխաղաղասէր բնակիչների հետ : Ինգելին Մուրդ-աբ ծովախորշի արևմտեան-հիւսիսային կողմից նոյն ծովախորշի բերանում երկարած աւազէ լեզուածայրին մասը գրաւած է, որ ծածկուած է նարնջենի, թուրնջենի, թզենի, նռնենի, կիտրոնի, լիմոնի և նման պտղատու ծառերով ու թփերով :

Ալիման վերին աստիճանի խոնաւ և տաք է՝ այս պատճառաւ բուսականութիւնը թարմ վիճակումն է միշտ, հողը սննդաբար հիւթերով պարարտ և բարեբեր է. ինչպէս պատմում են տեղացիներն՝ առաջներ Ինգելիի տեղն և բոլոր լեզուն թաղուած է եղել Կասպից ծովի խռովայուզ ալիքների տակում՝ վերջին դարերումս ցամաքած է ջրերի տեղատուութեամբը : — Ս. Հայրն այցելեց Ռուսաց Հիւպատոսին և ընդունեց փոխ այցելութիւնը. նաև այցելեց Պարսից Վեհ. Շահերի պալատին, որի մասին խօսեցաւ իւր տեղը, Ս. Հայրը բարձրացաւ հինգերորդ և վերջին լարկում, վերում առաստաղին և կողքերում որմերին նայելիս՝ հատուածեալ հայելիների ու ապակիների շաքուղիք փայլը խողտացնում է դիտողի տեսողութեան ջղերին . . . բարձրութեան առաջ տարածում են մի կողմից լայնատարած ծովն և միւս կողմից անհատնում անտառը նաև գոգցես բիւրազան ծաղիկներից հիւսուած պսակի կամ շրջանակի մէջ պարուրուած ծիծաղում է չքնաղ կոյսի պէս դիտողի երեսին Մարդ-աբի ծովախորշը . . . : Մարդս գիւթուում է արգարև, նա մանաւանդ բնութեան գեղեցկութեանց սիրահարը, նրան բնութեան քերթող են դարձնում յաւամայից . . . :

Օգոստ. 26 ին օրուան կէսին Ս. Հայրը պատրաստ էր թողուլ Ինգելին և շարունակել դէպի Ռաշտը. Ինգելիի Հայ համայնքը մի գեղեցիկ շագ-

մակոյի էր վարձած իւր Ս. Առաջնորդին ճանապարհելու համար, Ս. Հայրը Եկեղեցին մտնելով աղօթեց և դէպի նաւամատուցն ուղղուեց շրջապատուած ժողովրդով՝ որոց հետն ի միասին պարկազը նստաւ :

ԻՆԶԵԼԻՆՑ—ՌԱՇՏ

Պարկազը փռնգտալով սուրում, հեռանում է Ինգելիի ծովափից Մուրդ-աբի մեռած ջրերի սիրտը ճեղքելով շտապում է դէպի Փիրա-Բազարի գետաբերանը, օգը թօնուտ՝ և միգամած՝ մաղմաղ անձրև է շաղ տալիս՝ չկարծենք լինել Օգոստոսում : Մերձաւոր ափանց վերայ նշմարում են կանաչագոյն խիտ եղէգնուտներ, ծովային շամբեր, շամբէ կղզեակներ՝ կանաչ թաւիշի վերայ բանուած ոսկեթել փնջակների պէս . . . : Միւս կողմից ծովային թրուչունք իրենց հաճոյական համերգով ու զուարթեքամ պարերով դիտողներին ուշն և ուրուշը գրաւում են, սոքա կարծում են հպարտանում են բնութիւնից իրանց ընկած ամենալաւ բաժնի վերայ՝ ինչպէս մի փեսայ իւր գեղուհուն վերայ . . . : Մինչ այսպէս հիացումների աշխարհում ինքնամոռացութեան մառնում . . . մի ոստումն զգալով՝ Փիրա-Բազարի գետաբերանում հասնելիս ազդարարողին ձայնից, ըոպէական միջոցում տեղափոխուեցինք գետափնաց նաւակում՝ և ի՛նչ, ո՛հ բնութեան գեղեցկութեանց, առաջինից աւելի՛ կախարդիչ մի մոգական աշխարհի մէջ ենք գտանում, կորովի բանաստեղծ պէտք է այստեղ՝ բնութեան գերազանց նկարն իւր իսկութիւնով, կենդանի գոյներով, խօսուն վրձինով պատկերացնէ ճերմակ թղթի վերայ . . . :

Ընթերցողիս այստեղ քիչ բան կարող եմ ասել Փիրա-Բազարի գեղանկար գետափանց վերայ, որով-

Հետեւ շտապում եմ Ռաշտ Հասնել, միայն խնդրում եմ, որ երեւակայութեամբ փոխադրուի մեր նաւակում, որ լողում է մի հեզագնաց գետի երեսին՝ հոսանքն ի վեր, պիտի տեսնէ, որ «փափկութեան դրախտ»ին նմանող բնութեան զարդերով պճնուած մի տափարակ գետնի երեսը փոսացնելով անցկենում է այն՝ դէպի մեռած ջրերի խորշն անդ մեռնելով... : Վարսաւոր ծառերի ճիւղերն երկու կողմից չտեսի պէս խոնարհած ի տես գետոյն՝ հովանաւորում, պահպանում են անցորդներին արևի կիզիչ ճառագայթներից՝ գողցես չկամենան՝ որ ուղեւորը վշտացած հեռանայ... : Վարքան (մակոյկ) կանգնեցաւ մէկ-երկու շինութեանց առաջ, ըստ երևոյթին պէտք է բաւական մաքուր լինին դոքա՝ կղմինտրով ծածկուած կտուրներ, թրծուն աղիւսից շինուած որմերը գոնէ այսպէս ցոյց են տալիս, գետին անունով է կոչւում այստեղ : Ս. Հօր գալստեան սպասում էին այստեղ Ռաշտաբնակ Հայերը, որոնք նաւակում դիմաւորելով՝ շրջապատած առաջնորդեցին շինութիւններից մէկում, ուր տեսակցութեան գործողութիւններից յետոյ թէյով պատուեցին, որից յետոյ Ս. Հայրն իրան յատկացրուած կառքում բազմեց և շքախմբու վր սկսեց յառաջանալ դէպի Ռաշտ, որ հեռի է մի փարսախաչափ կանոնաւոր խճուղով, Պարսկաստանում՝ այստեղ առաջին անգամ խճուղու հանդիպեցինք, այս գիծը գրեթէ կանոնաւոր երկարում է մինչև Թեհրան :

Երեկոյեան ժամի 5 ին Ռաշտ Հասանք, անցկենում ենք ցեխոտ և անկանոն փողոցների միջով, Եկեղեցու փողոցում հասնելիս նկատուում են երկու սեռից խուռն բազմութիւն ժպտուն դիմօք Ս. Առաջնորդին ճանապարհն են պահում. ըստ սովորութեան Եկեղեցին մտնելով ծնրադրեց Ս. Հայրը՝ ժո-

ղովդէին դառնալով գոհունակութեամբ ողջունեց. կարճ յորդորից յետոյ օրհնելով արձակեց ժողովրդին և ինքը Թումանեանց դործակատար Դավրիժեցի Պ. Աղաւել Յովսէփեանցի տանը առաջնորդուեց անդ հանգստանալու համար :

ՎԵՅ ՕՐ ՌԱՇՏՈՒՄ

Ռաշտի ծերունի դատաւորն՝ որ Եփրատ էր ուղարկած Ս. Հօր առաջ յաջորդ օրն ինքն անձամբ այցելեց՝ որի միջոցին մտերմանալով միմեանց հետ ձիգ րոպէներ բարեկամական հաճելի խօսակցութիւններով անցկացուցին :

Ռաշտումն էլ Ս. Հօր առաջին գործն եղաւ հրաւիրել ազգայիններին գալ յայտնելու համար իրենց կարիքներն առանց առիթը կորցնելու :

Շնորհիւ բարեխնամ Առաջնորդի ջանքերին այստեղն ևս լուծուեցին հանրային, ուսումնական և անհատական հարցեր. խաղաղութեամբ կարգադրուեցին մի քանի Հայ անհատների միջև գոյութիւն ունեցող վէճերը :

Ս. Հայրն Օգոստ. 30 ին Կիրակի օրում Եկեղեցու բեմից մի ազգու քարոզ խօսեցաւ, ցաւելով Ռաշտաբնակ Հայերի վնասաբեր անտարբերութեանը առթիւ դէպի Ազգային կրօնն ու Եկեղեցին, ցոյց տուեց որոշ գծերով՝ թէ քնչ աղէտալի հետեւանք կարող է ունենալ այս դրութեան շարունակութիւնը. բնորոշեց որ Հայ ազգի գոյութեան միակ պատճառն է իւր հաւատն և Ազգային սուրբ ուղղափառ Եկեղեցին. սոքա են որ դաբճերի սպաննող, անհետացնող ճանկերից փրկած՝ ազատած և մեր օրերին հասուած են Հայ ազգին... : Ռաշտի Հայերի թիւն է 60-70 տուն, բնակուում են խառն Պարսիկների հետ.

զբաղուում են վաճառականութեամբ և շերամաբուծութեամբ, Ռաշտում սոյն երկու արուեստների նախանձելի ընթացից շնորհիւ Հայերը բարեկեցիկ են, շերամապահութեան արուեստին ղեկավարներն Անադոլի կողմերից եկած Յոյներ են : Թումանեանց տան շերամապահութեան կայանն այցելելիս՝ գործին ընդարձակ ճոխութեան վերայ զարմացած մնացի, բազմաթիւ Պարսիկ գործաւորներ են աշխատում այստեղ. հետաքրքրութիւնս ստիպեց զիս գիտնալ թէ՛ դոցա օրավարձն ինչքան է, իմացայ՝ որ իւրաքանչիւրը ստանում է օրական առ նուազն 2 ղուան և առ առաւելն 5 ղուան : Ռաշտի Հայերն ունին մի կոկիկ Եկեղեցի յանուն Ս. Մեսրոպբայ, որի հարաւահողմումն է առողջութիւնը քայքայող մի յարկանի Ուսումնարանը՝ հիւսիսակողմումը նորակառոյց երկաթականի և գեռ կիսակառար օրիորդաց Ուսումնարանն, որը շինում է Տիկին Մարիամ Ա. Յովսէփեանց իւր ծախքով. ահա հարազատ դուստր Հայաստանեայց Եկեղեցւոյ և անկեղծ Հայուհի, թող յաւերժանայ այսպիսիների լիշատակը . . . :

Ռաշտը կառավարուում է հոգևոր տեսակէտով՝ մի վիճակաւոր քահանայով՝ որն ուղարկուում է Նոր-Ձուղայից, և որ հովուում է Էնզելիի և Մազանդարանի Հայերին ևս, արդի քահանան, որ ուղարկուած է Եսալի Եպիսկոպոսի օրով բնիկ Չարմահալ գաւառից է — Ռաշտի Հայերը սորա մասին դժգոհութիւններ էին յայտնում, միշտ լիշելով իւր նախորդին՝ որը մի ինտելիգենդ քահանայ է եղել . . . Հայ ժողովուրդը հիմա ինտելիգենդներին է սիրում : Ռաշտի ամբողջ ազգաբնակչութեան թիւը 10,000 տանից աւել են ենթադրում, այստեղ գործատէր Եւրոպացիներ էլ են գտնուում : Ռաշտն անտառային քաղաք է Էնզելիի պէս, ամեն բանով

վերջնոյս կը նմանի միայն հողը պակաս աւազային է և խոնաւութիւնն աւել անտանելի է, բարեխառն երկրացիների համար դժոխք է . . . :

Ռաշտն՝ ինչպէս և Էնզելի շատ հարուստ են որսի թռչուններով և ձկներով շնորհիւ ծովին և անտառին, որոնցից «կաթ և մեղր» է բխում . . . : Այս երկու քաղաքներն և ամբողջ Գիլանեան նահանգը շատ սակաւ է ցորեն սպառում, քանզի բնակիչների մեծամասնութիւնը առանց հացի է ապրում՝ բաւականանալով բրնձով, ձկներով և որսական թռչունների մսով : և սոցանից հացին անվարժները պատահմամբ հաց կերած գէպքում հիւանդանում են և շատերն իսկ մեռնում են, սրա համար իրենց մէջ սա անէծքի բանաձևը կայ «հաց կեր, թող հաց ուտէ» զոր մենք՝ «թոյն կեր, թող թոյն ուտէ» բանաձևով ենք բացատրում : Ռաշտի Հայերը պակաս ուսումնասէր, ընթերցասէր են՝ Դավրէժի և Արդաբիլի Հայերից՝ երկրի կլիման և իրենց շահելու անյազ տենչն ազդում են իրանց ուղեղին և թմրեցնում . . . : Ռաշտի շինութիւնների որմերը թրճուն աղիւսից են շինուած, կտուրները սագաձև են կղմիտրով ծածկուած :

Ռաշտում կայ մի բաւականին ճաշակաւոր հիւրանոց (օթէլ)՝ մաքրասէր ճանապարհորդներին յատուկ, Հայոց Եկեղեցու դիմացը՝ տէրն է մի Եւրոպացի (Փրանսացի) : Ռաշտը համեմատած Պարսկական այլ քաղաքաց հետ՝ կենդանի և շարժուն վիճակումն է, աւելի վաճառաշահութեան տեսակէտով : Էնզելիցի Պարսիկների պէս խաղաղասէր և աշխատող բնավորութիւն ունին և Ռաշտի Պարսիկ ազգաբնակչութիւնը, մանաւանդ յարգանք և եղբայրաբար են վարուում Հայերի հետ՝ երանի՛ թէ ճաճկաստանի Մահմետական տարրն էլ սոցա քառորդին չափ լինէին

խաղաղասէր, աշխատող և քաղաքավար, որով Հայաստանի վիճակը թոհ և բոհի այժմեան զրուծելունից ազատ կը լինէր . . . :

— ԵԶ —
ՌԱՇԵՏԻՑ—ՂԱՉՈՒԼԻՆ

Ս. Հայրը Սեպտեմբերի 1 ին առաւօտեան ժամի 8 ին տուեց հրաժեշտի ողջոյնը Ռաշտի Հայերին: Օրուան անձրևային և ցեխոտ զրուծիւնը չարգիլեց Ռաշտի ազգայիններին 2-3 փարսախաչափ ի պատիւ Ս. Առաջնորդին ուղեկցիլ նմա ճանապարհելու համար: Սրբազան Հայրն օրհնելով ետ դարձուց նրանց և միայնակ շարունակեցինք յառաջանալ անձրևների շարունակ տեղալով ճահճացած անտառամուտ ճանապարհներից՝ 3) ամենից աւել տխրեցնող՝ վհատեցուցիչ այս օրուան ճանապարհներն էին, անցկենում ենք չըփ ու չըփով մինեղգծից թաղուած անտառի խիտ ծառերի միջով, որոց ստուերներն աւելի էին մթազնած թօնընկեց սև թուխպերին . . . դժոխսաւարտ մռայլ պատկեր, այս ամենի վերայ երկիւղ էին ազդում և վայրի չազալների ունոցները, բորենիների ահարկու ձայներն, որոցմով անտառը լիքն է:

Աչքից չեն վրիպում անտառին զանազան մասերում բրնձի արտերը դեղնած ոսկեգոյն տեսքով, ատոք հասկերով որոնք հնձող մշակներին են հրաւիրում, աշխարհի ամենալաւ տեսակի բրինձներից է արտադրուած այս անտառից: Նկատուած են ցրիւ և անտառաբնակների խեղճուկ խրճիթներ, մեզ զարմանալին այն է, որ տեղ տեղ ևս Հայեր՝ Ռուսական շաբէյով կամ Տաճկական Ֆէսով, երբ տեսնում են համազգի մի պատկառելի դէմքին այս խուլ ու լռին

3) Սրբաբերեց հեռանալիս Գիւնեւան նահանգի սահմաններում ոտք կոխած օրեց և եթ անամպ ու պայծառ երկինքը, փայլուն արև, յստակ ու չոր օդ, և ցամաք գետին չտեսանք զրեթէ:

վայրերում՝ ալալած սրտաշարժ ժպիտներով՝ խորին երկիւղածութեամբ արտայատում են իրանց զգացումները: Սոցա մասին ունեցածս հետաքրքրութեամբ իմացայ, որ մի մասը Ղարաբաղցիներ են և միւս մասը Գարադաղցիներ՝ որոնցից առաջինները նոր շինուելիք խճուղու գործերով են պարապում և միւսները ածուխի պատրաստութեամբ: Օրուան դժուարութիւններին յաղթելով հասանք մի Պօստի կայարան, երկարկանի զամազան բաժանմունքներով Պարսկական ոճով մի շինութիւն է անտառին խորքում: Հետևեալ Սեպտ. 2 ին մինչև կէսօրուան վերջ տուինք անտառային ուղևորութեան: Կէսօրից քիչ առաջ սկսած մեծն Շահ—Աբասի մեծագործութիւններից մինը համարուող հոյակապ պանդոկի մօտից՝ որ անտառումն է, յուշիկ յուշիկ մէզն ու մառախուղը տեղի տուին՝ ջինջ, պայծառ երկնքի, ցեխն ու տիղմն աւազի, անտառին անդորը լուծիւնը վրդովող Սէֆէր—բա—գետին եզրը հասանք, որը Ռաշտի արևելեան կողմից յորդելով գնում է կլանուիլ անկուշտ Կասպիական ծովից: Մինչ գնում ենք արագընթաց հոսանքն ի վեր անտառաձորից, լեղակարծումն տեսարանը փոխուեց, չրջուեց, քաօսային այդ հոգետանջ զրութեան յաջորդեց մի լոյս աշխարհ, բիւրեղեայ շողշողուն երկնակամարով, գերազանց փայլունութեամբ ոսկեգէս արևովը, գողցես չլինէին սովորական երկինքն ու լուսատուն . . . : Այլ ևս չոր ու ցամաք, աջն ու ձախը լերկ ու մերկ խանձուած՝ մրկուած բուսականութեամբ բարձրաւանդակներ՝ արևի կիզիչ ճառագայթների տակ եռացած սևաթուր ապառաժներ են: Այսպէս 4-5 փարսախաչափ շարունակելուց լետոյ մտնում ենք մի Գիթենեաց անտառում Ռիսէյ—բա—գետի գեղաքաղաքի մօտերը որ ցամաք, ժայռուտ երկրին մի բաւական մեծ մասը բռնած է ուր Պարսիկ գեղջուկները պտղա-

Հաւաքութեամբ էին զբաղուած. անտառից դուրս գալիս Հարաւակողմից անցկենում ենք Քիւսթեմ-աբատի գեղջկական գծով շուկայից և շարունակում գէպի Հարաւ միշտ Սէֆէթ-բաթի հոսանքն ի վեր երկու կողմից պաշարուած ապառաժուտ լեռնաշղթաներից, որք անընդհատ շարունակում են արեւելքից մինչև Տէլֆէթ կամ Տէրֆէթ լեռը՝ որի բարձրութիւնն է Կասպից ծովից 7,600 ոտք, և արեւմուտքից Իշլու լեռնագոտիներին :

Քիւսթեմ-աբատի կապաններից ազատուելով հասանք Մանջիկ կիրճին, ուր մեծն Կահ-Աբասից շինուած է գետին վերայ մի հաստահիմն հսկայ կամուրջ՝ արձան յիշատակի Պարսից շինարար արքային, կամրջին մէկ կողմից փուլ է եկած՝ յետնորդներ նորոգել են կողքից տախտակներով : Կրճում՝ կամրջին վերայ սոսկալի փոթորիկներ են լինում ամենահանգաւոր եղանակներում անգամ, մեր անցկենալու պահուն բքախառն անձրևի պէս ջուրը շարտում էր մեր վերայ և ուժով հրում մեզ գէպի գետն՝ այնպէս, որ վտանգից դժուարաւ ազատուեցինք. օրն երեկոյացաւ մեր վերայ կամրջին մերձակայ Մանջիկ գիւղում, որը Ռաշտի հարաւ-արեւմտեան կողմն է 19 փարսախ հեռի նրանից՝ Տէլֆէթ կամ Տէրֆէթ լեռան ստորոտում հարաւ արեւմտեան կողմից՝ հողմակոծուած վիճակ ունեցող այս գիւղում գիշերեցինք և Սեպտեմբերի 3 ի արշալոյսին հետ թեքուելով գէպի հարաւ-արեւելեան կողմը գնում ենք մի անբեր հովտի միջից Կահ-Աբաս գետի հոսանքն ի վեր աջ եզրով, «Կահ-Աբասը»՝ Մանջիկ մօտ միանում է «Սէֆիդ-րուտ» գետին հետ : Կէսօրուան ճաշն ու հանգիստը Փաշխար կոչուած պօստի կայարանում անելուց յետոյ սկսեցինք բարձրանալ Խարդան սարի վերայ, որն Էլֆրանի նշանաւոր օղակներից մինն է. իրիկնագէմին կատարի վերայից

Չափաբան և գիւղը հասանք, որ լեռան անունով են կոչուում, փոխելով ձիերը շարունակեցինք գէպի Մաշխ կամ Աշաբաթ : Նախքան Աղաբաթ հասնելն մի հայեացք Խարդան սարի և իւր առաջ փռուող անապարար տեսարանների վերայ. Խարդան սարը 2 փարսախից աւելի է զբաղեցնում ուղեւորներին մէկ ստորոտից մինչև միւսը զագաթի վերայ կոխելով. չունի անտառ, ծառ ու թուփ բայց ունի լաւ արօտատեղներ, աղբիւրներ և ծաղիկներ՝ վերջին հանգամանքների շնորհիւ սարին կենդանացնում են Պարսիկ և Գիւրտ վաչկատուններ. (վերջիններս Հայաստանում եղող Գրտերին չեն նմանում ոչ լեզուով և ոչ բնավորութեամբ) :

Գէպի հարաւ-արեւելք նայելիս նշմարում են ընդարձակ տարածութեամբ կապույտ մշուշով քողարկուած Ղազուխեան հովիտը, աւելի հեռի տափաստանին սահմանն որոշող լեռների կապտերանգ կատարները : Երեկոյեան ժամի 6 ին երբ շրջուեցինք սարին՝ Ղազուխի երեսում, արեւն էլ շրջուեց հորիզոնի այն կողմը թողլով մեզ մթութեան մէջ՝ անշէն վայրերում, խաւարն իւր սև շղարշը տարածում է երկրի վերայ . . . մաքաւելով նորա դէմ այսպէս և թէ այնպէս սրարշաւ և քրտնաթաթաւ գիշերասկզբի ժամերին Աղաբաթայի կայարանը հասանք, ուր մեզանից առաջ եկող ուղեւորները տեղաւորուած էին հիւրասենեակներում տեղ չէր մնացել մեզ համար, որով քիչ նեղուեցինք մինչև մի գարիով լիք սենեակ մաքրել տալուց յետոյ նրանում գիշերեցինք, այստեղ իջևանած էր իւր ընտանեօք մի Ռուս ճանապարհորդ՝ սաւնքան քաղաքավարութիւն ունեցաւ՝ որ Ս. Հօրն իւր սենեկում հրաւիրեց թէև չքիջաւ իրան հրաւերին :

4 Սեպտ. առաւօտեան ժամի 8 ին՝ Ղազուխից եկան ընդառաջ Ս. Հօր՝ երկու կառքերով Ղազուխից

Քաճանան և մի քանի Պարոններ : Ս. Ս. աջնորդին իրան համար բերուած յատուկ կառքում բազմեցրին և ճանապարհորդեցինք դէպի Ղազուին, որն Աղաբաբայից հեռի է 5. փարսախաւ. երեկոյեան ժամի 4 ին քաղաքը մտանք ուր նախ ըստ սովորութեան Եկեղեցին գնաց Ս. Ս. աջնորդն և ապա Թումանեանց տանը իջեանեցաւ՝ յետ 33 փարսախ դժուար ուղևորութեան, զի այսչափ է հեռաւորութիւնը Ռաշտից-Ղազուին :

ՀԻՆԳ ՕՐ ՂԱԶՈՒԻՆՈՒՄ

Ինչպէս էնդերիում և Ռաշտում՝ այնպէս և Ղազուինում Ս. Հօրն առաջին գործն եղաւ գրաւոր հրաւեր առ Հայ հասարակութիւն ընդհանուր ժողովի գումարման համար : Ս. Հօր շնորհիւ ժողովին արդիւնքն այն եղաւ, որ Ղազուինն էլ ունեցաւ իւր երկսեռ Ուսումնարան, խօսքին գործը համընթաց անելու համար շատ ջանքեր արեց Սրբազան Հայրը՝ Ղազուինում, յօգուտ բացուելիք Ուսումնարանին հանգանակութիւն բաց արեց, որ գոհացուցիչ արդիւնք ունեցաւ. նաև որպէսզի չյետաձգուի կրթական գործը՝ ստիպեց նորընտիր Հոգաբարձութեանը հրաւիրել ի պաշտօն ուսուցչութեան մի Բաղիշեցի երիտասարդի որի անձնաւորութիւնն և ուսուցչական արժանիքն առաջուց ի վեր ծանօթ էր իրանց՝ բաց ապտի միջամտեց վաճառականների միջև տեղի ունեցած շահու վերաբերմամբ անհամաձայնութեանց՝ կատարելով հաշտարարի դերը. նորակազմ հոգաբարձութեանը պարտաւորացրեց, որ յետ այսու նոքա դպրոցական բոլոր պէտքն ու կարիքը հոգանա՝ Սեպտեմբերի 6ին կիւրակէ պատարագի ժամունա ազգու մի քարոզ խօսեց՝ որով մխիթարեց ժողովը-

դին և օրհնեց . . . : Ղազուինում կան 20 տնուոր Հայեր, գրեթէ առանց բացառութեան վաճառականներ են, մեծաւ մասամբ եկած Ռավրէժից. այստեղ Անգլիական հեռագրչի պաշտօն ունի Տիգրիսից աստ վերաբնակող մի արժանաւոր Հայ : Հայերը խառն են բնակւում Պարսից հետ Ռաշտի պէս. բարքերն և տարազը յար և նման է Ռավրէժեցոց : Եկեղեցին մի փոքրիկ անճաշակ սենեակ է, ուր կանգնեցրած են սեղան և պատկեր, որի վերայ պատարագ է մատուցանւում : Քաճանան Չարմահալցի է, որից դժգոհ են տեղացիք իւր անբաւարար կրթութեան համար :

Ղազուինի ազգաբնակչութեան ենթադրական ընդհանուր թիւն է 20,000 տուն. քաղաքը շինուած է համանուն դաշտավայրին գրեթէ կեդրոնում. հիւսիսային և հիւսիսային-արևելեան կողմերը բռնում են Ելբրուս լեռանց շղթաները : Հայերից և Պարսիկներից ի զատ օտար ազգ չկայ այստեղ, քաղաքը բաւական տարածութիւն է գրաւած : Ղազուինի գլխաւոր բերքերն են, խաղող, նուշ՝ որ մեծ քանակութեամբ արտահանւում են Ռուսիա և այլ տեղեր, այստեղի խաղողն անկուտ և ընտիր տեսակից է. կալ նաև պիստակ, մեծ քանակութեամբ. Ղազուինը՝ դուռն կը համարուի Կասպից ծովի, Ստր-պատականի և Պարսկաստանի ներքին քաղաքների վաճառականութեան : Ղազուինում կայ մի գեղեցիկ հիւրանոց (օթէլ) Պարսկական ոճով շինուած, որի դիմացն է բաւականին կանոնաւոր մի փողոց : Կլիման չոր և առողջարար է, ունի պայծառ և սիրուն երկինք ընդարձակ հորիզոններ : Ղաշտավայրին հօղը տեղտեղ շատ բերրի է տեղտեղ էլ կայ՝ որ անբեր է. բնակիչները խաղաղասէր ու բարի են :

Ղազուինում ինձ տարօրինակ էր թուում ագռաւների ու ճայերի բազմութիւնը, որք կարծում

ես իրանց չարագուշակ կրկնողներով ուզում էին քաղաքին հանգստութիւնը խռովել՝ իրանց երամանորով ծառերին ճղակոտոր էին անում և երկնքին պայծառութիւնը բծաւորում էին կարծում ես . . . : Գեղեցիկ էր Ղազուխի մզկիթներից մինը, Ռաշտի և Թեհրանի դռները, որոնք նկարակերտ ճենապակիներից արևելեան ճաշակի նրբութեամբ շինուած են :

ՂԱԶՈՒԽԻՅ—ԹԵՀՐԱՆ

Սեպտ. 10 ին առաւօտեան ժամի 8 ին Ս. Հայրը տուեց իւր հրաժեշտի ողջոյնը Ղազուխի փոքրաթիւ Հայերին՝ օրհնելով զիրենք, Ղազուխից-Թեհրան վարձուած էր մի ծածկուած կառք 26 թումանի, բաժանուեցանք քաղաքից, ճանապարհ ձգելու համար՝ 3 փարսախ հեռաւորութեան վերայ ընկերանում էին Թումանեանց և Սևան Ընկերութեան ներկայացուցիչները կառքերով, նոքա բաժանուեցին ընդունելով Ս. Հօր օրհնութիւնը, այժմ գնում ենք առանձին ճեպրնթացով դէպի արևելա-հարաւը, հիւսիսի կողմից հետզհետէ ետևից թողնելով Թալան լեռանց օղակներին՝ որոնք միաւորւում են արևմտահիւսիսից Խարզան-դաղի և արևելեան կողմից Շէհ-բէն կամ Շէրան լեռանց հետ, հարաւից Ղազուխեան հովտի միապաղաղ հարթութիւնն, որի հեռաւոր սահմաններում հազիւ նշմարւում են տափարակին վերայ երկրի դերբուկներ կապոյտ ամպերում ծրարուած գոգցես . . . : Ղազուխեան հովիտը սկսում է Զէնջանից և երկարում է մինչև Դեմշէ-դարանի, որ հարեւրաւոր փարսախներով տեղէ, լայնութիւնը 15 փարսախներից աւելի է լինում : Ղազուխից Թեհրանը կանոնաւոր խճուղու վերայ կան և կանոնաւոր սրտի կայարաններ, սոցա մօտ տնկուած ծա-

ռերի խմբերը մի մի ովասիս են թւում ուղևորի աչքին ցամաքած այս վայրերում : Երեկոյեան մթին ժամերին Հեմադէ կոչուած՝ գեղեցիկ պօստի կայարանում հասանք, որն ուղևորներով խճողուած էր, ի մէջ այլ ուղևորների Արգաբելում իրանց մեղք քաւող աքսորուածներից կային, որոնք՝ իրանց ապաշխարանաց օրերը լրացնելով ազատ արձակուած էին : Այստեղ գիշերեցինք մի շնորհալի Հայ երիտասարդի սենեակում, որ խճուղու շինութեան վերակացութեան պաշտօնով այստեղն էր մնում : Հայ բարեկիրթ երիտասարդի ներկայութիւնը սիրելի էր մեզ այս ամալի տեղերում, իւր ցոյց տուած քաղաքավարութիւնը պարտք էր դնում վերաս այստեղ առանց լիշատակելու չանցկենալ : Սեպտ. 11 ին արշալոյսի հետ շարունակեցինք դէպի Թեհրան. քերում ենք Թալքանի լեռնագօտիների ստորոտները Սէրալուի անապատներից դէպի արևելք և արևելքի հարաւը, հասնում ենք Հաջիբեկի կայարանում, ուստից աչքերնիս յառեցան Դէմաշէ կերանց բարձանց՝ Թեհրանին մօտեցել ենք՝ չորս փարսախ ևս և ահա Թեհրան :

Հաջիաբատում կառքին նոր ձիերը վտանգի ենթարկեցին մեզ չկամենալով ուղիղ գծով ընթանալ շեղւում էին դէպի փոսեր և առուներ փորձանքից ազատուած հազիւ մի փարսախ յառաջացած ենք, ահա փոշամուրի միջում արագ արագ դէպի մեզ են գալիս Թեհրանից ընդառաջ եկողներ, մէկը միւսի ետևից, մօտենալով Ս. Առաջնորդին բարի գալուստ էին մաղթում նրա ս. աջը համբուրելիս :

ՀԱՆԴԻՍՍԻՈՐ ՄՈՒՏՔՆ Ի ԹԵՀՐԱՆ

Գնալով եկուորների թիւը ստուարանում է, Ս. Առաջնորդը փոխադրւում է իրան համար բեր-

ուած շքեղ կառքում, շրջապատուած խուռն բազմութեամբ մօտենում ենք Պարսկական ոստանին՝ Մայրաքաղաքին, որի տեսքն առաջին անգամ տեսնող ուղեւորներին զմայլեցնում է, մանկական հասակից գրքերում կարդացած պատմական քաղաքներից մինը տեսնելու հաճոյքից այլ յայլմէ լինելն էլ՝ որքան քնական՝ այնքան և անոյշ է . . . : Հեռուից թուում է լինել մի կանաչադարձ բուրաստան, որին պահպանում է հռչակաւորն՝ Դեմավէնդ տարածելով աջն ու ձախն իւր ապառաժեայ բազուկները։ Եբախումբն առաջնորդեց Ս. Հօրը Ս. Բարաբար կոչուած այգում. որի ժամանակ իմ կամքից անկախ պատճառներով չկարողացայ հետևիլ մինչև նոյն տեղը, ուստի կանխեցի Ս. Գեորգ Եկեղեցին (Ղազուխի թաղում) ուր տեղն է Պարսկ—Հնդկաստանի Հայոց Փոխանորդարանը և ուր պէտք էր ընդունէին Տ. Մաղաքիա Եպիսկոպոս Տէրունեանին՝ Առաջնորդին Պարսկ—Հնդկաստանի Հայոց, անդ կազմ ու պատրաստ՝ շարիշար կանգնած սպասում էին շնորհաբեր գալստեանը Թեհրանի Հայկազեան երկսեռ Աստուծոյն արանի աշակերտք և աշակերտուհիք, նորընծայ քահանան Տ. Խաչատուր Հայրը՝ շուրջառազգեստ՝ խաչով, աւետարանով, բուրվառակիր սարկաւազով, խաչվառներով և սպիտակ կերտներով սոցա զլուխն էր կանգնած ամենքն ևս սպիտակազգեստ ։

Երբ Ն. Բ. Սրբազնութիւնը մօտեցաւ Եկեղեցւոյն՝ զանգը հնչեցին, երգեցիկ խմբերը սկսեցին նուագել հոգեզմայլ երգեր, Եկեղեցւոյ արտաքին դրան մօտենալիս Տ. Խաչատուր Հօր ձեռքումն եղած խաչն ու աւետարանը համբուրեց Ս. Հայրը և շուրջառ զգենով խաչակնքեց ժողովրդին և երգեցողների շարքից կամաց կամաց յառաջացաւ դէպի Տաճարը փառաւոր թափսրով, անդ Ն. Բ. Սրբազնու-

թիւնը ըստ սովորականին բեմին առաջ լուիկ աղօթելուց յետոյ դարձաւ ժողովրդին՝ հաղորդեց ողջոյնն և օրհնութիւն Հայրապետական՝ որ բերած էր Համազգական Մայր Աթոռին վերայ բազմող Հայոց պաշտելի Հայրիկից, կարճ և ազգու կերպով շեշտեց իւր և ժողովրդին պարտաւորութեանց մասին, յետոյ յայտնեց՝ որ յառաջակայ կիւրակէ Խաչ-վերացի Տօնին (13 ին Սեպտեմբերի) պէտք է կարդացուի Հայրապետական սրբատառ Կոնդակը. ժողովրդին օրհնելուց և արձակելուց զինի Հանդիսաւոր թափորով առաջնորդուեց Փոխանորդարանում, աշակերտուհիներն երգելով ազգային գողարիկ երգեր, ծաղիկներ էին սփռում Ս. Հօր ոտքերի տակը։ Ն. Բ. Սրբազնութիւնն առանց հանգիստ առնելու Փոխանորդարանում ընդունեց բազմաթիւ Հայերի, որը տեւեց մինչև երեկոյեան ։

— — — — —

ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԹԵՀՐԱՆՈՒՄ

Ս. Առաջնորդը շաբաթ օրում (Սեպտ. 12 ին) կրկին այցելութիւններ ընդունեց և հետևեալ կիւրակէն Խաչ-վերացի օր՝ պատարագի ժամուն Կոնդակին ընթերցումից յետոյ բեմին վերայից ոգևորուած խօսեց աստ իւր առաջին քարոյցը որին ներկայ էին Թեհրանի ամբողջ Հայ հասարակութիւնն երկու սեռից ևս. երեկոյեան Խաչ-վերացի հանդիսին նախագահելով առանձին շուք էր տալիս նրան ։

Հետևեալ շաբաթուայ օրերում էլի այցելուների էր ընդունում և գնում փոխ այցելութեանց մի քանի կառավարական պաշտօնեաների, ի միջի այլոց Միշիկ-Դուլէի, Միշիկ-Էլ Միշիկ Եմին-Դուլէի, սոցա կողմից Ն. Բ. Սրբազնութեան Թեհրան մուտ գործելու օրում Երազներ էին ուղարկուած ։

Ս. Հօր առաջին գործն եղաւ յայտարարու-

թիւներ հրատարակելն և ընդհանուր ժողովի կոչել թեհրանի Հայ համայնքը՝ նոցանից մի «վարչական մարմին» կազմելու իրանց ազատ քուէարկութեամբ, որը կարող լինի ընդ նախագահութեամբ վիճակաւոր Եպիսկոպոսին, վարել ազգային գործերը՝ վճռել հարցերին և այլն. նոյնն արաւ և Տիկնանց համար՝ որոնցից «Տիկնանց Խնամակալութիւն» անուանով մի Հոգաբարձու մարմին կազմեց, որն օրիորդաց ուսումնական պէտքերը լրացնելու համար պատասխանատու պաշտօնէութեան դերը ստանձնէ : Կարճ ժամանակում գլուխ եկան այս երկու կարեւոր ձեռնարկները՝ կազմուեց «Վարչական մարմին»ը, որը պարտաւոր է հանրային գործերին ազգօգուտ ընթացք տալ՝ նախագահութեամբ Ն. Բ. Սրբազնութեան՝ իրեն վերապահելով Ս. Առաջնորդական անձեռնմխելի իրաւունքները : Կազմուեց և «Տիկնանց Խնամակալութիւն»ը, որ պարտաւոր է աղջկանց դաստիարակութեան համար հարկաւոր խնամքներ տանել : Ըստ պատուիրանի Ս. Հօր՝ հանգանակութիւն բացուեց «Խնամակալուհեաց» և առհասարակ Թեհրանի Հայուհեաց մէջ. քիչ ժամանակում անսպասելի արդիւնք ունեցաւ :

Ս. Առաջնորդն այցելեց Հայկազեան երկսեռ Վարժարանին. գնալու պահուն այնտեղի սրահում երկու կարգի շարուած էին փոքրիկ աշակերտներն ու աշակերտուհիներն, որոնք երգով դիմաւորեցին Ս. Առաջնորդին. տնօրէն դասատու (Տեսուչ) Գ. Պապեանը՝ յառաջելով ի դիմաց ուսուցչական խմբի և ուսանողաց «բարի գալուստ» մ. յղթեց մի քանի բառերով, օրիորդաց շարքից մինը առաջ եկաւ և արտասանեց «Հայ քահանայ»՝ յայտնի բանաստեղծութեան կտորը . Ս. Առաջնորդն օրհնեց և քաջալերեց ուսուցիչներին և ուսանողներին և լետով շրջե-

ցաւ դասարաններում՝ մի առ մի աչքից անցկացնելուց լետով վերադարձաւ Փոխանորդարանում : Մի քանի օրից լետով Ս. Հայրն այցելեց Ռուսաց Դեսպանին իւր ամարանոցում (Շէյխանի կամ Շէյխի լեռնակողմում) :

Եւրոպական Տէրութեանց Դեսպաններին՝ ինչպէս և Թրքաց այցելեց և փոխ այցելութիւններն ընդունեց : Ներկայացաւ նաև Նորին Թագաւորական վեհափառութեան արեգակնափայլ Շահ-Շահին Սաաֆ-Ֆէրէթին թագաւորին. այցելութիւնը հաճելի անցկացաւ, ինչպէս նաև երկրորդ անգամուան այցելութիւնը ևս : Երկիցս և երիցս տեսակցեցաւ Սաաֆ-Ֆէրէթին այցելեց բոլոր կարեւոր պաշտօնեաներին (Պարսից դրան) մի առ մի, ի գուր չէին այսքան այցելութիւններն, որոցմով երկար ժամանակ անցկացաւ. Ն. Բ. Սրբազնութիւնը, իրեն հաւատացուած ժողովրդի օգտին համար և խօսում էր և գործում էր, ի միջի այլոց աւելի զբաղեցրած էր Ս. Հօրը Դպրոցապատկան Զիաա գիւղի հարցը, որը թէև բոլորովին իւր վճռական լծող լուծումը չստացաւ սակայն հասաւ այն վէտին վերայ ուր իրաւունքին ձայնը զօրաւոր է :

Թեհրանի Պարսից արդի ուստանի օգը՝ չոր ու վատտուող է, երկինքը հիանալի պայծառութիւն ունի. ջրերն առատ և անոյշ են եթէ քաղաքից դուրս գտնուող տեղերից առնուին : Թեհրանումն էլ Դավվէթի, Ղազուլինի և այլ Պարսկական քաղաքների հման ջրամբարներում ամիսներով ջուրը պահում և այնպէս գործածում են, ջրերը նախքան ջրամբարներում ածուխը՝ ժահահոտ և ապականուած առուներից, աղբիւրներից անցկենում են, որով իրանց հետքերելով տանում են զանազան աղտեղութիւններ՝ կղկղանքներ ու տիղմերը՝ դրանց վերայ աւելացրու-

սատակած շուքն, կատու մուկ և այլ սատակած կենդանիների հոտած գիականերն՝ ահա այս վիճակին ենթակալ ջրերն են, որ յետոյ ամիսներով բանտարկուում են՝ մթին, օգազուրկ և գարշաբոյր ջրամբարներում և դործ են ածուում խմելու և կերակուրի համար... , այս պատճառաւ հիւանդութիւններն անպակաս են Թեհրանում : Տները՝ շինուած են հարուստներին թրծուն աղիւսից և աղքատներին արեւաթուրծից. շինութեանց որմերի արտաքին տգեղ տեսքը՝ նըսեմացնում, անշքացնում են քաղաքին, Պարսկական բոլոր քաղաքներն էլ գրեթէ այսպէս են. Դավրէթի նկարագրից չի տարբերուում, բացառութիւն են սակայն արքունական շինութիւններ. որոնք շրջեղութեան կողմից Եւրոպական ապարանքների հետ կարող են մրցիլ : Թեհրանի մի քանի փողոցներն թէ և փոշոտ (փոշին Պարսկական քաղաքաց զարդըն է) բայց կանոնաւոր և սիրուն են, կայ և ձիաքարշ երկաթուղի Պեյճիքացի մի ընկերութեան ձեռքումն է մէնաշնորհով. Թեհրանում Պարսկական այլ քաղաքաց պէս ամեն տուն իւր ծառաստան կամ ծաղկաստանն ունի, որի շրջակայքն են կառուցուած տան սենեակներ, որոց լոյսը միայն դրան կողմից է ներս թափանցում. կան կամարալարի՝ շրջեղ կառուցուած վաճառանոցներ, քարվանսարաններ և այլն և այլն :

Թեհրանը՝ շրջապատն ունի բաւական խորութեամբ խրամատ, որը պատերազմի կամ քաղաքին պաշարման ժամանակ ջրով լեցնուում է թըշնամույն ընթացքը կասեցնելու համար : Թեհրանի դարվազաները (դռները) շատ սիրուն են կառուցուած, համակ նկարէն ճենապակուց : Թեհրանը շինուած է Եէմարիւնի կամ Եմրանի հարաւային ըս-

տորոտում մի գոգաւոր դիրքի վերայ, քաղաքին միւս կողմերը հարթ տարածութիւն են : 80 նական թուականներին աշխարհագիրները Թեհրանի բնակչաց թիւը 60,000 ի են հասցրած, սակայն այժմ եռապատիկից աւելի են ենթադրում. Թեհրանի Պարսիկները Գիլանեան նահանգի Պարսից պէս խաղաղ տրամադրութիւն չունին գէպի Քրիստոնեայ տարրը, թէ և անլքան էլ խռովարար չեն ինչպիսի են Դավրէթիցի Պարսիկները : Թեհրանում բացի Հայերից կան և ուրիշ Քրիստոնեաներ ևս ինչպէս նաև Հրեաներ, Հայերի թիւն է մշտական բնակողներին 300 տուն եկուորները լրացւում են 500 տուն : Հայերի մեծամասնութեան արուեստն է Երկաթաւիշն (Գինեգործութիւն), դերձակութիւն և վաճառականութիւն, մի քանի անհատներ էլ կառավարական պաշտօնեաներ են 4) : Առտնին կենցաղավարութիւնն լաւ է, տարազը Դավրէթի Հայերի պէս է երկու սեռին ևս՝ բարքերն և սովորոյթներն էլ նոյնն են գրեթէ :

Առսակցութիւնն այստեղ ևս բուն դրած է, սրա նեղ հայեացքների շնորհիւ է, որ Ուսումնաւաննին աննախանձելի դրութեան մէջ է. 10 և գրեթէ աւելի տարիներ Ուսումնարան յաճախող պատանիներ կան որոց ուսածը համեմատելով ձիգ ժամանակի աշխատութեան հետ մարդս գալիս է մի ողբալի եզրակացութեան : Յարգանաց արժանի ինքնօգնութեան պտուղներ էլ կան Թեհրանում : Տարածուած է Փրանսերէն լեզուն, արդի Թեհրանի երիտասարդութիւնը գրեթէ առանց բացառութեան Փրանսերէն խօսում և գրում են, որի պատճառն է հանգուցեալ

4) Սրանցից նշանաւորերն են Բարձրաստիճան Պարոնայք Վարտերու-խան Դաւիթ-խանեանց և Յովհաննէս-խան Վասէկէանց, որոնք ոչ միայն Թեհրանի Հայերին պատիւ են բերում այլև բոլոր Պարսկա-Հայերին :

Պ. Գասպարեանը ասում են Թեհրանցիներից շատերը, թէեւ հանգուցելոյն անհամակիրները հակառակն են հաստատում, նաեւ ասում են՝ որ Թեհրանում երկպառակութիւն սերմանող և ազգային շահերին վնասող մի անձնաւորութիւն է եղել նա :

Թեհրանցիներն իրանց տղաք արտասահմանն ևս կուղարկեն կրթութեւն համար Գրանսիա և Զուլիցերիա են սիրած Եւրոպական երկիրներից. սակայն ցաւալի է որ արտասահման գնալու չոր մակդիրից ի դատ ուրիշ բան չեն բերում :

Հայերն աստ իրարուց բաժան-բաժան և ցրել են ապրում, բնակարանները միմեանցից ժամերով հեռի են՝ խառն Պարսից հետ. այս տխուր հանգամանքի շնորհիւ չեն կարող իրերաց հետ շփումն ունենալ, ընկերական բարեկամական յարաբերութիւններով կապուած, որով միայն կարելի էր իրանց մըտաւոր կեանքի մակարդակը բարձրացնել, այս մասին Ս. Առաջնորդը խօսեց, յորդորեց՝ որ եթէ կարելիութիւն կալ իրարու մօտենան : Թեհրանցի Հայերը նորաձեւութիւնների սիրահար են, բացի ծերերից առ հասարակ Եւրոպական ձեռնափայտներով են տանից դուրս գալիս, ո՛չ միայն իրանց ձեռնափայտերը, հագուստները, գլխարկները և ակնոցներն Եւրոպականացուցած են այլ և շատերն իրանց միսն ու արիւնն անգամ 5) :

Թեհրանում կան և 25-30 տուն Հայ—բողոքականներ՝ նոյնից քիչ պակաս Կաթողիկէներ : Բողոքական Հայոց և Միսիոնարների միջև ծագած մի անհամաձայնութեան պատճառաւ՝ առաջինները զղջացած Մայրենի Եկեղեցւոյ ծոցն են դիմում, տոյ՛ Աստուած որ անկեղծ լինին . . : Սոքա Ն. Բ. Սը-

5) Իցիւ թէ միայն Եւրոպացիներէ լաւ կողմնն ընդօրինակէին :

բազնութեան խնդրեցին, որ պաշտօնական ձեւերպութեամբ ընդունի գիրենք Մայրենի Եկեղեցւոյ ծոցում, սակայն Ս. Հայրը համոզեց, որ խղճի համոզումն ամեն տեսակ ձեւերպութիւններից բարձր է ճանաչում մեր Ս. Եկեղեցին, որի դռները բաց են ամեն այնպիսիների առաջ, որք աշխարհային նկատումներից գերծ ազատակամ ներս են մտնում լինել անգամ զինուորեալ Եկեղեցւոյն Հայաստանեայց : Նոցանից շատերն արդէն սկսած են Հայ քահանայի խոստովանելով հաղորդուել, ի միջի այլոց Յովհաննէս խան (Սարթիպ) Պարսկական Պօստատան տեսուչը, հիւանդութեան ժամանակ կանչելով Հայ քահանայ՝ խոստովանելով հաղորդուեց և պատուիրեց, որ իւր մահից յետոյ Հայոց Եկեղեցւոյ ծիսով թաղուի, մեռաւ նա և իւր կամեցածի համեմատ կատարուեց մահից յետոյ. Ս. Գէորգայ Եկեղեցւում դիակին վերայ խօսեցաւ մի դամբանական Ս. Առաջնորդն, որին ներկայ էին Հայ-բողոքական հասարակութիւնը : Հայ-Կաթողիկէներ ունին Թեհրանում « Կոյսերի Վարժարան » ուր ձրի դաստիարակում են և այս կերպով սխրագործութիւններ են անում, ինչպէս Հայաստանի զանազան քաղաքներում այս կրիգիքական ժամանակներում անում են Բողոքականներ և իրանք՝ Կաթողիկէներ, Հայ ազգի պղտոր ջրից ձուկ որսալու առիթը չկորցնելով . . . : Ն. Բ. Սրբազնութիւնը նոյն ժամանակ Սալմաստում տեղի ունեցած դէպքի մասին ևս հարկ եղած տեղերին դիմեց չխնայելով իւրովսանն պէտք եղած ջանքերը : — Սրբազան Հայրը Թեհրանցիների թախանձանաց վերայ թղթատարով Եպիսկոպոսական զգեստ բերել տուեց Նոր—Զուղայից, Հոկտեմբերի 11ին պատարագեց և նոյն ժամանակ իւր յատուկ եռանդով քարոզեց : Երկու ամսուայ ընթացքում ամեն

Վերադարձներին և բացառիկ պարագաներին շարունակ քարոզեց անձանձիր՝ աւետարանի ճշմարտութեան սերմերը ցանելով՝ աղօթում էր Աստուծոյ ամենուն անելու համար Հայ ժողովրդի սրտում :

Ծարունակ յանդիմանում էր, որ գէպի Եկեղեցին և Եկեղեցական կարիքներ անպարտաճանաչ են գտնուում, մանաւանդ այն կէտին վերայ, որ Եկեղեցին պէտք է մշտական երգեցիկ խումբ և կանոնաւոր երգեցողութիւն ունենայ, որի բացակայութեան պատճառաւ երբեմն անախորժութիւններ էին յառաջ գալիս պաշտամանց ժամանակներում, այսու հանգերձ խոստովանելու է, որ Հայկազեան Ազգ. վարժարանի ուսուցիչք ջանքեր արին այդ պակասը լրացնելու համար գոնէ Ս. Առաջնորդի ներկայութիւնից ակնածելով, և յուսալի է որ կըշարունակեն իրանց ջանքերը :



ԹԵՀՐԱՆԻՑ Ի ՆՈՐ-ՋՈՒՂՍ

Թեհրանում Ն. Բ. Սրբազնութիւնն, որքան էլ ծանրաբեռնուած էր զանազան գործերով բայց և այնպէս զիջանելով Նոր-Ջուղայից ստեպ գրուած նամակներին, որոնք խնդրում էին, որ իւր գալուստը փութացնէ, պատրաստուեց մեկնել գէպի Նոր-Ջուղայ Նոյեմբեր 12 ին :

Ս. Հայրը նախօրօք արդէն տուած էր Թեհրանի Հայ ժողովրդին իւր հրաժեշտի օրհնութիւնն ու ողջոյնը բեմին վրայից. իւր համար Թումանեանց գործակատարին ձեռամբ 80 թումանի վարձուած փակ կառքում բազմելով առաւօտեան ժամի 8 ին Պարսկական Մայրաքաղաքին մնաս բարով ասացինք : Շարժուում ենք գէպի հարաւը Շահ-Քարէ-Լաշի գեղեցիկ դռնից անցկենալով՝ գնում ենք մի ծառ

առաջիկով՝ ուստից անցկեցած պահուն երեւակայում էի այստեղի ամրան ուղեւորների հաճոյքը . . . այսպէս խճուղին մինչև «Շահ-աբգիւ-աղիմ» կոչուած Պարսից նշանաւոր ուխտատեղին, ուր կան բաւական բնակիչներ և սիրուն շուկայ՝ ինչպէս իւր գեղեցկութեամբ ուշագրաւ մի մեծ դուռն : Դուրս գալով ծառերի, ծառաստանների միջից մտնում ենք մի լերկ ու մերկ անապատում, որի վերայ մի փարսախաչափ ուղեւորուելիս հեռուից նկատուեց շոգենաւի ծխնելոյզի պէս՝ բարդ բարդ՝ թանձր մուխ արձակող Միսրէլի նման մի բարձր աշտարակ. անմարդի անապատում այս երևույթը մեզ զարմացնում էր, հետաքրքրութիւննիս դադարեցաւ՝ երբ մօտենալով անձամբ իմացանք նորա մի շաքարի գործարան լինելը . . . մարդուս մտքից այլ բաներ էին անցկենում . . . Պելճիքացիներ էին գործարանատէրերը, Եւրոպական այդ փոքրիկ տէրութեան գործունեայ և աշխույժ որդիները մարդկային աղմկալից կեանքից զգուած երեւի իրանց գլուխն առած այս կողմն են քաշուած աշխատելու խաղաղ ու լուռ կեանքով, հեռի մարդոց հետ ունեցած յարաբերութիւնից և չարութիւնից անգամ . . . : Այստեղը կոչվում է Վերիլաշ 7 փարսախաւ հեռի Թեհրանից : Բացի ջինջ ու պայծառ երկնքից այստեղում մխիթարական ոչինչ կայ. ջուրն աղի է բուսականութիւնը սմբած ու քոսոտ. արդէն այստեղ սկիզբն է նշանաւոր «աղի մեծ անապատ» ին որ այժմ «Դեաշ-թէ-գարանկ» է կոչուում : Շաքարի գործարանում աշխատողների խմած ջուրն արուեստով քաղցրացնում են, բնակիչները շատ վատաւողջ են : Գործաւորների թուում կան 20-25 Հայ երիտասարդներ ևս, որոնք Ս. Հօրից խնդրեցին որ գիշերն իրանց հիւր լինի, բայց Ս. Հայրն չկարողացաւ զիջանել,

սակայն դեռ հազիւ քառորդ փարսախաչափ հեռացած էինք, կառապանին անդգուշ վարմունքով ձիերը ճանապարհից շեղուելով մօտի խրամատում թաղեցին կառքն, ուր և ջարդուեց. վտանգից ազատուած անյուս մնացինք նոյն օրում շարունակել մեր ուղին, ուստի վերադառնալով շաքարի գործարանում նոյն գիշերն անցկացնելու ստիպուեցանք, Ս. Հայրը չլսելով Հայ երիտասարդների ձայնին, որ խնդրում էին գիշերել իրանց մօտին՝ պատահարը լսեցնել տուեց : Թէև ջարդուած կառքի մասին Բէլֆօնսը (հեռածայն) տեղեկութիւն հաղորդուեց Պօստի վարչութեան, բայց դրանով միայն չբաւականանալով պարտաւորուած էի գրիչս անձամբ Թեհրան գնալ և փութացնել՝ հարկ եղած նոր տնօրէնութիւնը : Լուսնկայ ցուրտ գիշեր էր, ժամի 11 ին սպասում եմ «Շահ-աբդիւլ-ազիմի» փակուած դռան առաջ դռսի կողմից, դռնասլանը կորած է և ոչ ոք կայ մեզ դուռն բացող, միևնոյն ժամունն դռան ներսի կողմում զուգադիպօրէն սպասում էր մեզ պատկանելիք կառքը, Դարպաս (դարպաս, դուռն) բացուեց և կառքը շառաչելով դուրս եկաւ, որի մէջ նստելով վերադարձս փութացուցի : Լաւ էի զգում զիս միևնոյն ճանապարհից թէ արևի լուսով և թէ լուսնի լուսով ճանապարհորդելու բազմ ունենալուս համար :

Նոյեմբերի 13 ին «Կէրիզակից» բաժանուելով շարունակում ենք դէպի հարաւն՝ անծայր, անձիր, լերի, մերի, անշէն և անմարդաբնակ անապատից, որի բորակով և աղի շողիքներով բորբոսնած մակերևութը թուում է ձիւնի թանձր խաւով ծածկուած, ուր ոչ ասուն և ոչ անասուն, ոչ թռչուն և ոչ մի հաւք կայ՝ այս է ահա՝ մեծ աղի աղի անապատի մի մասը : Երեկոյեան Դաշ կոչ-

ուած Պարսի կայարանում հասանք՝ որը «Կէրիզակից» 9 փարսախաչափ հեռի՝ դէպի հարաւ անապատում մի բարձրաւանդակի վերայ է. այստեղ գիշերեցինք և հետեւալ առաւօտեան ժամի 5 ին (Նոյ. 14 ին) շարունակելով գրեթէ նոյնանման անապատներից՝ ժամի 8 ին հեռուէց մեր ուշքը գրաւեց մի գեղաճիծաղ լճակ, որը կոչւում է «Սափայի լճակ», այս անապատ ծովում մի ջրային փոքրիկ կղզեակ, որը գոգցես անապատին միօրինակ չորութեան երևոյթը փոխելու համար է ստեղծուած իւր մեծութեամբ հաւասար է «Գուրի-կեօլ» ին որի մասին խօսուած է փւր տեղում : Այնտեղը՝ որտեղից լճակն ենք գիտում կոչւում է Բեշլի Նարեկլի-Շահ որը քիչ հեռի նըրանից մի բարձրաւանդակի վերայ սիրուն Պօստի կայարան է. այստեղից տեսարանը հիացնող է այնքան գրաւիչ, այնքան կախարդիչ է, որ ամեն բան գրել ուղողին պէս այս մասին ոչինչ կարող եմ գրել . . . : Պստ տնութեան մերձաբնակ Պարսիկների 8 տարի առաջ լճակին տեղն ևս մի անջրդի անապատ էր ներկայացնում : Լճակին արևմտեան եզերքից քերելով մեր կառքն անցկենում է աջ կողմի վերայ թողնով մի կոնքածե դաշտագետին՝ բարձրանալով լեռնանման բլուրների վերայ շրջուեցինք դէպի Դաշ գաշտը : Բարձրութեան ստորոտում «Դում»ի դաշտի վերջաւորութեան վերայ կայ Պօստի կայարան, որի առջնութեւր շինուած է մի հոյակապ գեղեցիկ Դարպաս, որ պատկանում է արգի Սար-ապահին և որ նորեքս է շինուած. «Բարվանսարայ»իս պէս Պարսկական շէն քաղաքներում անգամ հազիւ թէ գեղեցիկ շինութիւններ ճարուին. տարօրինակ երևոյթ էր մեզ համար, մի այսպիսի մեծածախ գեղեցկակերտ «Բարվանսարայ»ի անապատում լինելը . . . այստեղը կոչւում է Մանդարիա հեռի է «Դում»ից 4 փար-

նախաջափ, Կէսօրուան ժամի 3 ն է՝ տակաւին սպա-
սում ենք Մանգարիաում որտեղից դէպի «Ղոււմ» Նա-
յելիս մարդուս աչքերը ծակծկում են այնտեղ գրտ-
նուող ուխտատեղւոյն ոսկապատ գմբէթից անդրա-
դարձած արևի ոսկեծեծ ճառագայթները, որք կար-
ծում են ոսկեայ ասեղներ են սփռում «Ղումի» ըս-
պիտակախաւ դաշտին վերայ . . . : Երեկոյեան ուշ
ժամանակ լուսնկայով «Ղում» հասանք, անցկենա-
լով միշտ աղի շերտերի վերայից, առանց ուն է շէն
կամ գիւղ նկատելու : Թեհրանից մինչև Ղում 29
փարսախ հեռաւորութեան վերայ միայն մի գիւղ
տեսնուեցաւ, որը եթէ չեն նխաւում Հասաֆադ է
կոչւում Կերիսից 3-4 փարսախ հեռի դէպի հա-
րաւր : Ընթերցողը կարող է երևակայել դատարկու-
թիւնն, որի պատճառն է աղային կամ բորակային
Փօսֆօրիտով բաղադրութիւնն, որ ունի հողը և որի
պատճառաւ բնականաբար բուսականութիւնը լար-
մար սնունդ չգտնելով տեղի է տուել ամայութեան
գարգն եղող այլած, մրկած կոշկուռների :

ՄԻ ՕՐ ՂՈՒՄՈՒՄ

Ղումում կայ բաւականին ճաշակուոր մի հիւ-
րանոց, որը շինած է Անգլիական մի բնկերութիւն
և վարձու տուած, այստեղում անցկայրինք մեր ա-
ռաջին և երեկորդ գիշերները՝ հիւրանոցին վերնա-
թարկի ձեւերից մէկում, որի հանդէպ փոքր ինչ հեռի
քաղաքումս գտանուող ուխտատեղւոյն 6) ոսկեղէն
գմբէթը մի քանի նկարակերտ փայլուն մինարէթ-
ներով վեհութիւն է տալիս «Ղում» քաղաքին իւր
չքնաղ յօրինուածով :

6) Այստեղում է Իմամ-Բրդայի քոյր Մատումի գերեզ-
մանը ինչպէս նաև շատ Պարսիկ թաղաւորներ շիրմեր :

Քաղաքին միջից արևմուտքից դէպի արևելքն
ընթանում է համանուն գետն՝ որն միացած իւր
օժանդակներին հետ տասնեակ մղոններ դէպի ա-
րևելք կտրելով սև լերան «Խի-Խի» ստորոտում թաղ-
ւում է աւազների մէջ : «Ղում» գետը սկիզբն է
առնում Համադանի (Եկբատան) սարերից : Երկու
եզերաց վերայ շինուած են Ղում քաղաքի տները :

Ղումը մրգաբեր ծառերի մի անտառակ կարելի
է համարել, նշանաւոր են այստեղի նուռն ու թու-
զը : Ղումում Հայեր չկան բացի մի Հռովմէական
Հայ երիտասարդից, որը Անգլիական հեռագրչութեան
պաշտօնով այստեղն է բանտարկուած : Սոյն Պարոնը
Ն. Բ. Սրբազնութեանը ճաշկերպութի հրաւիրեց՝ Նոյ-
15 ին (Կիրակի երեկոյեան) :

Երիտասարդն իրան բնկերից ի զատ տանն ունէր
մի պառաւ կին մօր պաշտօն կատարող, որը Լուսա-
ւորչական էր՝ արգեօք մեր գաւանութեան պատկա-
նելուն համար էր, Ս. Առաջնորդին անակնկալ ներ-
կայութեան վերայ այլալաւ էր սրտի ուրախութիւնից
և սաստիկ զգածուելով հողոց էր հանում և արցուն-
քով իւր այտերն էր թրջում, օրհնում էր զԱստուած
և գոհաբանում զայն, որը մի Հայ Եպիսկոպոսի Ղու-
մումն էր առաջնորդած, որի ներկայութիւնը մի այս-
պիսի անժամ ու անպատարագ քաղաքում ամեն ինչ
էր իրան համար . . . : Ղումի ազգաբնակչութեան
մերձաւոր թիւն է 10-15,000 տուն, բնակիչները
խաղաղասէր և ըստ երևոյթին չքաւոր են՝ այստե-
ղումն են շինում քօլօզներ (Թաղսեայ գգակ) որը գոր-
ծածում են պարսկապատանում հասարակ դասակարգի
մարդիկ : Տները կաւակերտ և փոքր մասամբ միայն
աղիւսակերտ են, ունի կամարայարկ շուկայ անշուք
տեսակից, շուկան ճոխ է միայն տեղական բերքերով,
պտուղներով. Ղումն այս անապատային վայրենույ-

Թեան մէջ ձանձրալի միօրինակութիւն խանգարող մի ակնահաճօյ ուղատիս է ներկայացնում . . . : Թեհ-
լանից խճուղին մինչև այստեղ երկարում է :

ՂՈՒՄԻՅ ՄԵԿԼՈՒՄ ԵՆՔ

Մայիս. 16 ին առաւօտեան ժամի 7 ին ուղևո-
րութեան թեւից բռնելով կձկում ենք գէպի Ղումի-
հարաւային արեւմտակողմը, գետին եղերքով հոսան-
քըն ի վեր՝ մի փարոսիկից յետոյ ուղղւում ենք ուղղակի
հարաւակողմի արեւելքը՝ Կօրուայ հիւսիսային լեռ-
նաշղթաների մէջ ընկնող անբեր ու անբոյս հովիտ-
ներով ենք գնում աջ կողմում թողնելով Մահալաթի
հովիտը և ձախի վերայ՝ քարքարուտ, ժայռոտ տա-
րեր որոնք կարծես ամրան կիզիչ արևից սև եռտ են
դառել։ Խճուղիի գետին հոսանքն ի վեր շարունակելով
Հաջիբադ գիւղում օրն երեկոյացաւ Ղումից ցայտ
վայրը չորրորդ գիւղն է այս, աղքատութեան գրօշմով
կնքուած մի գիւղ է, շինուած բնդարձակ ամայութեան
վերայ։ Գիւղում գտանւող ամենակարևոր տանն ա-
ռաջնորդութեանք իջեանելու, այստեղ առիթ ներ-
կայանում է մի գաղափար տալու համար Պարսիկ
գիւղական տների մասին, ահա տանը սլաակերն ուր
գիշերեցինք։ Տունը դատարկուել էր բնակողներէից
ու իւր կահ կարասիներով մեր տրամադրութեանն
էր յանձնուած. բոլորը յատակագծով 3 մէթր երկայ-
նութիւն և նոյնքան լայնութիւն ու բարձրութիւն
ունեցող, ծիւից սևացած որմերով և ձուած և առաս-
տաղով ու կտուրով մի խրճիթ, մրգապահներ խուղի
չափ. յատակին կեդրոնումը շինուած է թոնիրը քուր-
սիով ծածկուած. քուրսին բեռնաւորուած հին կա-
պերտներով, հնացած գորգերով և կամ մի գրգլեակ
աղստոտ վերմակով. տան կահկարասեաց ամբողջու-

թիւնն են կազմում մի քանի մեծ ու փոքր պղնձեայ
թասեր, որք դրուած են լինում Բաբա-ճ. (տախտա-
կեայ պատառիկներ՝ որ հաստատուած են որմերի վերայ
մի հասակաչափ բարձր) միւս կողմում՝ որմի բաց-
ուածքում գորգերի և կապերտների մի գէգ, յատա-
կի վերայ փռուած են գորգեր և կապերտներ կամ
թաղիքներ՝ դուռը մի մէթրից պակաս բարձր և կէս
մէթրաչափ լայնութիւն ունեցող մի ծակ է, որը
ծածկուած է երկու կամ երեք անճոռնի նեղ տախ-
տակներով անվարպետօրէն միմեանց ազուցուած
դռնակով. ահա այս է Պարսիկ գիւղացու բնակարանն՝
ուր ծնում, ապրում և մեռնում է նա . . . : Արտա-
քուստ հողակերտ թումբերի շատ նման է, ձուած և
կտրակութեամբ բարձրանում է կտուրը։ Այս կողմի
գիւղերի բնակիչները շատ վայրենի և միանգամայն
ողորմելի արտայայտութիւններ ունին՝ քաղաքաց հետ
յարաբերութիւն չունենալուն համար։

Մենք գիւղացւոց աչքին թուում էինք չնաշ-
խարհիկ ճանապարհորդներ՝ այն պատճառաւ, որ ի-
րանց անապատ երկրից ուրիշ ուղևորների անցկենալը
չէին տեսել դժբաղդները։ Հետեւեալ առաւօտեան
ժամի 6 ին (Նոյ. 17 ին) թողլով իւր տեղը Հաջի-
աբադ գիւղին, հեռանում ենք արևելահարաւի ուղ-
ղութեամբ, կէս օրուան ժամանակ մտնում ենք մի
մեծ գիւղի մէջ որը «Դիլիթան» կամ «Դիլիջան»
է կոչուում, որի նեղ, ոլորուն փողոցներից դուրս
է կոչուում, որի նեղ, ոլորուն փողոցներից դուրս
գալով գնում ենք միւսնոյն ուղղութեամբ։ «Հաջի-
աբադից» 3-4 փարոսիով հեռի է «Դիլիջան» գիւ-
ղը, որ իւր կաւակերտ բրգաձև տներով բաւական
տարածութիւն է զրաւել Բաբաբադայ (թերևս Բա-
բաբայի) բաժնի անապատ դաշտում. այս գիւղում
կեանքը բաւական կենդանի և գործօն էր երևում,
գորգագործ կիները աշխուժութեամբ բարակ ձողե-

րի վերայ հինում և գործում էին յուսալից շար-
ժումներով գորգեր և կապերոններ : Մեզ տարօրի-
նակ թուաճող մի երևույթ էլ այս կողմերում այն
էր, որ այստեղ մարդիկ կանանց գործեր էին կատարում
և կանայք արանց, օրինակ կենն այն կողմը զբաղ-
ուած տղամարդի գործով, տղամարդն այս կողմն ա-
ղիկատով (առջկան) թելեր է մանում՝ զուլպաներ
է հիւսում և այլն : « Դիլիջանում » ծառեր գոյու-
թիւն չունին՝ զիւղացւոց հետաքրքրութիւնն ու
զարմանքը շատ մեծ էր արտաքույ կարգի ուղևոր-
ներին վերայ՝ խումբ խումբ չտեսնի նման վազվը-
ղում էին կառքի ետևից և առաջից . . . :

Մի փարսախաչափ հեռանալիս կանգնում ենք
ճանապարհին մօտին մի այլ զիւղի գիմաց՝ որ մի
քանի խուլներով փշտանի ծառերից ի զատ ոչինչ
ուներ : Այստեղ մի քանի Պարսիկ զիւղացիներ, որոնք
ծառերը կտրատելով էին զբաղուած, մօտենալով
կառքին չտես Բրդերի նման ապշած վերն ու վա-
րը նայում էին. գէմքի ողորմելի արտաշայտութեամբ
և ոչ Բրդերի պէս աւազակալին խորխտ երևույթով
նոքա երբ չափազանցեցին իրանց անախորժ հետա-
քրքրութիւնը՝ նեղանալով հարցրի թէ՛ ինչ էին
կամենում, մինը նոցանից մի ինչ որ պղնձեայ թաս
գօտուց հանելով աղաչում էր օղի ածել մի
փոքր՝ որպէս թէ իբրեւ դեղ, այս անունով խնդ-
րելուն համար չխնայուեցաւ իրան մի թաս լեցնելը,
նոքա առնելով հեռացան փոքր ինչ ինձ անհասկա-
նալի կատակներով, մէկ էլ տեսնում եմ իբրեւ դեղ
ստացած ալքոլին թասը դատարկուեց նոցանից մէկի
բիրտ կոկորդում. այս խաղից լստոյ երես առին և
վերադարձան կրկին խնդրելու, անդուրդալի երե-
ւույթին վերայ արդար զարույթս շարժուեց որով կը-
ծու յանդիմանութեամբ մերժեցի տալը : Բայց նո-

ցտ պնդեցեալութիւնը այն աստիճանի էր, որ յան-
դիմանութիւններն առ ոչինչ համարելով կրկին թա-
խանձում էին, սակայն կրկնակի խիստ յանդիմանու-
թիւններով հազիւ իրանց կծիկը ձեռքերնին դրած
հեռացրած եմ :

Միջագետքս լիշատակելով ուզում եմ հասկա-
ցնել, որ Պարսկաստանի տգէտ զիւղացիները՝ լինին
դոքա Պարսիկ, Բիւրտ, Լօռ և այլն. երբ երեսն առ-
նեն անպատճառ աստառն էլ են ուզում, որով հա-
մարձակուում են քաղաքավարութեան ցանկ սլա-
տառել, ուստի սոցա կամ պէտք է լաւ կրթութիւն
և կամ այն է պահել կոյր հնազանդութեան սահ-
մանում ուր՝ որ են արդէն, եթէ ոչ նոցա հետա-
ռնչանալ չի լինում երբէք : Կառքն ընթանում է
ամաշուլթեանց վերայով, գէս ու գէն միայն աչքի
ընկնում են աւերակ հողէ ամրոցներ և այլ շինու-
թիւնների հիմքեր. իրիկնագէմին Կօրուայ լեռան
հիւսիս արևմտեան շղթաներին հասնելով զնում ենք
մի նեղ ձորակով որի հողը աղի սպիտակ խաւով ծած-
կուած է՝ քիչ զնալով հանդիպեցինք մի կանաչ ե-
ղէզնուտի՝ որը բորբոսնած մակերեսին վերայ զուարթ
մի թփաստան է ներկայացնում ձորին երկայնութեամբ
զրեթէ փարսախաչափ տեղ, կտրելով միջոցը նախ-
քան արևի մասերը բարձրացանք Կօրուայ սարի ա-
րևմտահիւսիսի թիւին վերայ, ուր անմիջապէս աչքի
է ընկնում մի բերդագիւղ՝ Բաբա-Բէրս անունով :
Բերդագիւղի դարվազից (դարպաս) ներս մտնելով,
մուլթ, ոլորուն, նեղ և խորտու բորտ անցքերից լե-
տոյ՝ մի նեղկիկ լեզունից միայն լոյս ընդունող քա-
րայրի պէս սենեակում իջկանեցինք : Այստեղ զիւ-
ղացիները հաւաքուելով մեր զլիխն մեծ ու փոքր՝
աւելի վայրենի հետաքրքրութեամբ զննում էին մեզ՝
իրանց համար օտարոտի ուղևորներին և զարմացնում

մեզ իրանց չտես շարժումներով՝ անմիօրինակ և անճաշակ տարազներով : Բաբադ-թօրքի տեղը շենքերից հեռի «բախտյարիների բերան»՝ ինչպէս իրանք են կոչում և անապատային մի երկիր-զալի կէտի վերայ է շինուած, այս առթիւ գիւղին պաշտպանութեան համար բաւականին հաստատուն պարիսպ է քաշուած շուրջը, այնպիսի ձևով է գիւղը, որ արտաքուստ և ներքուստ մէկ տուն է ներկայացնում զանազան սենեակների բաժանուած. շատ նման է Հայաստանում գտանուող հին Վանքերի յատակագծին, որոնք մի պարսպով շրջապատուած իրանց միջում ունին միաբանական խցիկներ. նոյնպէս և գիւղս՝ ջուկ-ջուկ սենեակներում ապրող մի շրջապատում կազմում են մի ընտանիք : Բաբադ-թօրքի բնակիչներն ահով ու երկիր-զոյով են լիշում Բախթիարի աւազակաբազուց ցեղի անունը, սոցանից մինը ցոյց տալով գիւղին պարիսպներն ասում էր՝ «տեսնում էք գիւղի այս ձևն ու պարիսպներն, այս ամ. ն. Բախթիարի անՍտուուած ազգի երեսից է՝ այսքան աշխատաբով շինուել է և այսպիսի նեղ գրութեան մէջն ենք ապրում, խռովուէր, իրաւունքը կռփող և մարգաստպան ազգ է Բախթիարին . . . » Բաբադ-թօրքից առաւօտեան ժամի 8 ին (Նոյ. 18 ին) շարունակելով կծկել մեր ուղևորութեան թելը դէպի Մէյման՝ էլի արևելեան հարաւային ուղղութիւնով, գնում ենք մէկ արևելեան կողմից հեռաւորութեան վերայ միշտ աչքի առաջ ունենալով Կորուայ սարերին, հարաւային արևմտեան կողմից Նալի սարին, լառաջանում ենք բոլորովին անբնակ կատարեալ անապատից . . . անապատին լուռութիւնը խանդարող մի ծիտ անգամ չի գտանուում. շատ թէքիչ գնալուց լեւոյ հովիւներին հանգիստեցինք, որոնք ճանապարհին վերայ եղող ջրը-հորից գոյլերով ջուր քաշելով իրանց հօտի պապակն

էին շիջուցանում. բարի հովիւներ, ինչ անմեղ՝ ճիշդ իրանց գառնուկների պէս միամիտ ու քաղցր արտայայտութիւն էր կաթում իրանց դէմքից, սրտի յօժարութեամբ հաճեցան իրանց գոյլերով մեզ ջուր շնորհել և փոխարէն ստանալ մեծ ընծայ՝ խնձոր, նուռն և այլն. որոնց նման անապատ տեղ թանգագին բան չկար իրանց համար . . . : Կտրելով մեռած անապատի երկարութիւնը հասնում ենք իրիկնադէմին Մէյմանում, որը Նալի սարի հիւսիսային արևելեան ստորոտումն է, որի արևելակողմի դաշտավայրի վերայ է բարձրանում «Կիւրի տաղ» կամ «Կորուայ սար»ը ինչպէս վերը անուանեցի, Մէյման գիւղաքաղաքը իսկոյն փոխեց տալաւորութիւնն իս ներկայացնելով անապատին բոլորովին հակապատկերն եղող այգեւէտ և ծառազարդ մի փոքրիկ, սիրուն քաղաք (միայն բնականին համար կարող եմ այս բառերը շուայել) : Մէյմանի մասն են կազմում Վարչիւն և մերձակայ մի քանի գիւղեր, որք հարաւային կողմից երկարում են բաւական տեղ, Վարչիւնում կայ մի յորդաբուղի ջրի ակն, որի նման Պարսկաստանում հազուադիւտ է : Մէյմանում կան երկու մզկիթներ ձուռձև, նըկարէն երկնագոյն գմբէթներով շուք են տալիս այս անապատի փոքրիկ քաղաքին : Մէյմանում գիշերեցինք մի հալայի տանը որ բաւական քաղաքավար էր, սորա մի քանի կտոր գիրքերն որ գրուած էին պատուհանում, փոշիների թանձր խաւով ծածկուած էին՝ սրանից ճանաչեցինք ասպնջական մոլլայի ընթերցասիրութեան և գրասիրութեան չափը : Հետեւեալ առաւօտեան ժամի 7 ին (Նոյ. 19 ին) ուղևորուեցինք դէպի Մարջաբիւր՝ էլի կատարեալ անապատներից՝ ոչ ասուն և ոչ անասուն և ոչ այլ ինչ, որ կարող է ամայութեան գոյնը փոխել, վերջապէս լեւոստ թողնելով Նալի և Խաւարի լեռնագօտիներին և Կոր-

ուայ սարերի հարաւ-արեւելեան ճտից անցկենալով
գնում ենք «Մուրչախօրթ»ի դաշտից, հեռուից նը-
կատուեցին հազիւ ուրեմն հեռագրական ձողեր բա-
րակ ճիպտի հաստութեամբ, որոնք աւետում էին
մեզ՝ որ անապատային տաղտկալի երկւր ուղեորու-
թիւնից այլևս ազատուելու մօտ ենք: Իրիկնադէմին
Մուրչախօրթում հասնելով պօստի կայարանի վեր-
նայարկի սենեակում իջեանեցինք, որտեղից տարած-
ւում էին մեր աչքի առաջ «Մուրչախօրթ»ի դաշտն
և Կօրուայ սարի թեւերն արեւմտքից և արեւելքից:
«Մուրչախօրթ»ի և «Մէյման»ի հողերը պտղաբերու-
թեան կողմից միւսնոյն կազմութիւնն ունին զրեթէ,
ջուրն աղի է, իսկ օդը գոնէ կարճ միջոցում լաւ էր
թուում մեզ: «Մուրչախօրթ»ը բաւական տարածու-
թիւն է զբաւել իւր այգիներովն ու ծառաստաններո-
վը. այստեղ ճանապարհորդների համար կան բարձր-
աշէնքներ. մեր անձանթ անապատային գիծն այստեղ
միացաւ բանուկ ճանապարհին հետ, որը գալիս է
«Քաշան»ի և «Նաթանց»ի վերայով սկսած «Ղում»ից:
Մեր ընտրած գիծն էր՝ «Քաշան»ի և «Կօրուայ» լեռ-
նաշղթաների արեւմտեան կողմի սահաւաքնակ և կամ
ինչպէս այստեղերի համար սովորաբար գործածածս
բառով՝ անապատային վայրերը, այն պատճառաւ որ
կառքին աւելի լաւ ճանապարհներն այս կողմից էին:
«Մուրչախօրթ» գիւղին կենդանացնում են երթեւե-
կող ճանապարհորդների և կարաւանների աղմուկը,
բոթոթների ձայները: Գիւղին միջից անցկենում է
Անգլիական հեռագրաթելը, ձողերի ու թելերի վերայ
հսկող մի Անգլիացու ներկայութիւնը՝ երեւոյթը փո-
խում էր այստեղերին...: Մեր Ասպնջականը՝ Ս.
Առաջնորդին պատուել կամենալով 2 հատ սեխ մա-
տուցարանի վերայ դրած մատոյց նմա և արժէքին
կրկնապատիկը ստացաւ իբրեւ փոխընծայ:

Առաւօտեան ժամի 7 ին (Նոյ. 20 ին) Մուրչա-
խօրթից ճանապարհին շարունակելով էլի նոյն ուղ-
ղութեամբ և էլի ցամաք, անբեր և անապատային
վայրերից, այստեղերին կարելի է անուանել «Կօրուայ»
հարաւային արեւելեան բարձրաւանդակներ: Մուր-
չախօրթից 1-2 փարսախաչափ հեռացած հանդիպում
ենք մի գեղեցկակերտ, հարմարաւոր, որը Մեծն Շահ-
Աբասի մեծագործութեանց յուշարձաններից միւսն
է ինչպէս տեղեկանում ենք:

Մի փոքր աւելի յառաջ գնալիս բարձրանում
ենք Կիւրիսի սարաւանդում գտանուող թամբաձեւ
պարահոցին վերայ, ուստից տարածւում է մեր առաջ
Ասպահանի (ի հնումն Շօշ կամ Շուշան քաղաք) լայ-
նածաւալ լեռնադաշտը, միապաղաղ գորշագոյն մա-
կերեսով. այս պատմական երկրի մէն մի քարն ու
խիճը նախաՔրիստոսեան դարերի յիշատակներն էին
արթնացնում մեր մտքում, Արիական ազգի տիեզե-
րակալ և աշխարհաստան թագաւորների ուրուա-
կանները զոգցես մեր աչքի առաջ շրջում էին այս
պանծալի դաշտավայրում, որոց փառաց տունն էր...:
Գնում ենք դէպի Գեաղ՝ ճանապարհին միշտ աւերակ
շինութիւնների հետքեր թողնելով մեր ետեւից, ու-
րոնք ինչպէս իմացանք կրակապաշտ Պարսից ատրու-
շաններ են եղել երբեմն: Կէսօրուան հասանք
Գեաղում, որը մի բերդաւան է 3 փարսախ հեռի Աս-
պահանից դէպի հիւսիսային արեւմուտքը: Ինչ որ
ասուեցաւ «Ռաբադ-թօրք» գիւղի յատկազօծի մասին
նոյնը և այստեղ Գեաղի համար ասելը կրկնութիւն
կլինի, միայն տարբերութիւնը սրանումն է, որ վեր-
ջինս աւելի մեծ է որի համար բերդաւան անունը
տուի: Գեաղի հողը պտղաբերութեան նպաստող հիւ-
թերով պարարտ և բերրի է: Գեաղի ենթադրական
ազգաբնակչութեան թիւը հազար տանից աւել է:

— Նախքան մեր Գեաղում ժամանելն՝ անդ Համախմբուած էին Նոր-Ջուղայից ընդ առաջ եկողներին մի մասը, պատրաստելով Ս. Առաջնորդին համար տեղւոյն յայտնի քարվանսարայում սենեակ. այնտեղ ժամանելիս Ս. Հայրը յետ օրհնութեամբ ողջունելուց դիմաւորողներին առաջնորդուեց իրան համար յատկացուած սենեակում : Այցեկեց Ն. Բ. Սրբազնութեան բերդին տէրը (մի սարհանկ)՝ գնալուց յետոյ սեղանական ընտիր բերքն համարուող սեխից երկու հատ ընծայ ուղարկեց Ս. Հօրը : Նոր-Ջուղայից եկողներին թուում յայտնի էին «Առաջնորդական Խորհրդարան»ի Արժանապատիւ Անդամները Տ. Մկրտիչ քահանայ Պետրոսեան և Տ. Եսայի քահանայ Տ. Ս. Յովհաննեսեան, նաև Տ. Ռէթէոս և Տ. Բարսեղ քահանաներ : Այլքի էին ընկնում ծերունի և ալեհեր մօրուօք Գեաղի հայերն իրանց մեզ հետաքրքրական տարազովն և մանաւանդ Արաբական Մարշալներովը : Ս. Առաջնորդը գիմաւորողների հետ գիշերեց Գեաղում և հետևեալ Նոյ. 21 ին առաւօտեան 10 ին իւր շքախմբով սկսեց յառաջանալ դէպի Ասպահան և Նոր-Ջուղա :



ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՄՈՒՏՔ Ն. Բ. ԱՐԲԱՋԵՌԻԹԵԱՆ
Ի ՆՈՐ—ՋՈՒԼԱ

Նոյեմբերի 21 ին օդը պայծառ և գեղեցիկ էր՝ ոսկեգոյն արևը Ս. Առաջնորդին փառաւոր ընդունելութեան հանդիսին համար փայլում և շուք էր տալիս :

շաբաթ էր սուրբ օրուան ողջունելու օրը. ժամի 10 ին յամրընթաց շարժում ենք մեր ճանապարհորդութեան փոքր մասն ևս վերջացնելու համար և ազատուելու երկւոր, ձանձրալի ուղևորութեան ծանր բեռից : Որքան մօտենում ենք Ասպահանին՝ այնքան ստուարանում է ընդ առաջ եկողների թիւը, մինչև անգամ անչափահաս պատանիները բերկրութեամբ սրտի բաւական ճանապարհ եկել էին շուտով տեսնելու իրանց հոգևոր Հօրը և համբուրել մեծ փափաքով նրա Ս. աջը : Ս. Առաջնորդի կողքի ընթացքը միշտ ընդհատուում էր, մէկը միւսի ետևից եկող խմբերի պատճառով :

Քաղաքապետն և այլք «Եկեղանիներ» էին ուղարկած : Ասպահանին մօտենալիս Ս. Առաջնորդը ձի հեծաւ և շրջապատուած խուռն բազմութեամբ մտաւ Ասպահան քաղաքը : Ցաւում եմ, որ բաղդչունեցայ այստեղից հետևիլ Ս. Հօրը իմ կամքից անկախ պատճառներով : Ես որ սպասում էի տեսնել Ասպահանում փայլուն ու ճոխ շուկաներ, մաքուր փողոցներ ու տներ՝ անցկենում ենք նեղ, սաստիկ անկարգ փողոցներից, տների արտաքին տեսքը մի մշտնջենաւոր աւերակ քաղաքի տպաւորութիւն է թողնում վերաս. այժմ Թեհրանն ու Իսփահանը չեմ կարող բաղդատել գեղեցկութեան կողմից սրա հետ... վատ տպաւորութեան ներքոյ ինքզինքս գտայ Շահ-Մեյրան կոչուած հրապարակում, ուր համեմատաբար բաւական քաղաքավարի շինութիւններ են նրկատուում : փոքր մի սպասելուց յետոյ Հրապարակին մեծ դռնից երևաց Ս. Հայրը շքախմբովն ի միասին, որին հետևում էին և Պարսիկ ամբոխը վազվազելով և ցատքոտելով : Ցաւալ ընթանալով Զանդաբադ գետին (որը անջատում է Նոր-Ջուղան Ասպահանից) վրայի հոյակապ կամրջից անցկացած մտանք Նոր-Ջու-

դա, զնում ենք անճաշակ փողոցներից և անհրապույր շինութիւնների միջից. թէև Ասպահանին հետ համեմատած սրան՝ ճաշակի և մաքրութեան առաւելութիւնները շատ են : Փողոցներում խռնուած երկսեռ բազմութիւնը զգածեալ ականալիշ անհամբեր են շուտով տեսնել Ս. Զօրը : Ծերերն ուրախութիւնից դողդոջուն շարժումներով էին դիմաւորում, երիտասարդներն ու օրիորդները յուսապատար խնդութեամբ, մանուկներն անմեղ ուտոստումներով և ուրախութեան աղաղակներով : Ս. Ամենափրկչեան Վանուց բակում և դռներում սպիտակ հիւսիսներով պատատուած Հայուհիների մի մեծ բազմութիւն ականդէտ սպասում էր շնորհաբեր գալստեան Ս. Առաջնորդին, տեղաւանը սրտաշարժ էր, . . Նոր-Ջուղայի բոլոր Հայ սերունդի համախմբումն առանց սեռի և հասակի տարբերութեան՝ մեզ հետաքրքրող տարազներով մի ահագին բազմութիւնն, որ հեղեղունեց մեր առաջ յանկարծ՝ մեր ներքին աշխարհին վերայ յեղափոխումն յառաջ բերին. մի կողմից հազարաւոր Հայուհիներ իրանց սպիտակ սաւաններով փալլեցնում էին օրուան հանդիսի տեսարանը՝ միւս կողմից նոյնքան Հայկական կարմիր արախիներով մանուկներ ու պատանիներ, սօսիների վերայ շարուած երանգաւոր և հոգմից խշխշացող ու երերուն գրօշակների տակում ցնծութեան մի աշխարհ էին գարձրել՝ իրանց սիրեցեալ Առաջնորդ Զօր շնորհաբեր գալստեան առիթով : Ս. Ամենափրկչեան Վանուց արտաքին և ներքին դռների կամարները զարդարուած էին մշտադալար նոճիների տերեւներով, ծաղիկներով և գոյնզգոյն թղթեալ դրօշակներով, բոլոր եկեղեցիների զանգակները զիւ հնչումներով ողջունում էին «Բարի գալուստ»ը, Ս. Ամենափրկչեան Վանուց մօտենալիս աւելի ուժգին որոտում էին :

Ժողովրդի ուրախութիւնից իրարանցումն, զանգակների որոտը, «Կեդրոնական Ուսումնարանի» երկսեռ մանկանց սրտայնջ երգերն իրար խռնուած, շատ սրտառուչ և ուշադրաւ էին դարձնում Ս. Առաջնորդին փառաւոր ընդունելութեան հանդէսը : Ս. Հայրը Վանուց Տաճարում մտաւ, որի ետեւից բազմութիւնը ներս խուժեց, ինչպէս հասարակ է ասել՝ ասեղ ձգելու տեղ չկար, ժողովրդից շատերը ներս մտնել չկարողանալով բակում և գաւթում ստիպուեցին սպասել, շատերն ևս կտրանը բարձրանալով պատուհաններից էին նայում :

Ս. Հայրը հակիրճ խօսքերով ողջունեց ու օրհնեց ժողովրդին և աղօթքով արձակելուց յետոյ բարձրացաւ Առաջնորդարանում երգեցիկ մանկանց շարքերի միջով : Առաջնորդարանի դրան ճակատին մըշտականաչ եղևինների տերեւներից ու զանազան ծաղիկներից կազմուած սիրուն յաղթական կամարում խոշոր տառերով փալլում էր ճերմակ թուղթն, որի վերտաշութիւնը ժողովրդի սրտաբուլիս մաղթանքն էր ներկայացնում իւր Նորընտիր Առաջնորդին կենաց երկարութեան համար : Նա Առաջնորդարանում ընդունեց ամբողջ ժողովրդին և իրեն համար եղած անկեղծ ցոյցերի փոխարէն յայտնեց իւր խորին շնորհակալութիւնը. մինչև երեկոյեան ընդունելով մէն մի անհատին՝ գոհ և ուրախ սրտիւ յետ էր ուղարկում : Թէ ինչ էր զգում զրիս ալս հանդիսաւորութեան հանդէպ՝ այստեղ զայն ասելն անձահ գտնելով, միայն ընթերցողիս ընդ աղօտ ըմբռնել տալու համար կբաւէ ասել, որ Թէհրանից-Ասպահան ութօրեայ անապատային ուղևորութեան ընթացքում, որ բոլորովին Հայի երես տեսնելու մխիթարութիւնից զուրկ, հետեաբար խիստ կարօտ մի համարիւն եղբօր՝ մինչ այսպէս մատնուած տանջող երևակայու-

թեան, յանկարծ տեսարանը փոխվում է և ցանկալի պատկերներն իրական և անկեղծ գոյներով նկարվում են առջեւս . . . Բնչ կարող է լինել հոգեկան գրու-
թիւնս այն ամենին համար՝ որ ինձ թւում էին լի-
նել հեշտալի՝ ելագներ . . . ասում էի իւրովի՝
ԻՐԱՆԻ աշխարհի խորքերում ո՞վ երեւակայում էր
մի փոքրիկ Հայաստան և Հայկական հնաւանդ սո-
վորոյթների գանձարանն ու նրանց հաւատարիմ ա-
ւանդապահ և հարստ Հայրեար. այն էլ գերի
եկած մի ժողովրդի մնացորդ սերունդը պահպանած
լինի գոյութեան հետ և իւր Հօրենական սրբու-
թիւններն ամենայն խնամով. — Ա՛հ, Աստուած իմ,
բացադանջում եմ յարտասուս փղձկելով, քանի՜ գը-
թած, քանի՜ ողորմած ես Պու, որ Նրասխի ափից
խլած՝ Զահրէ-բու (կենդանի գետ) գետին եզրը տնկե-
լով աճեցրել ես խնամով դարերից ի վեր, և դեռ
խնամում ես նոցա արմատի վերայ բուսած բանաւոր
շառաւիղներին . . . :

ՆՈՅՆՄԵՐԵՐԻ 22-ն Ի ՆՈՐ-ՋՈՒՂԱ

Ս. Հօր շաբաթ օրուան ծանուցման համաձայն
Ֆիւրակէ (22 Նոյեմբերի) երբ գեռ արշալոյսն հա-
զիւ արձակած էր իւր վարդագոյն շողերը Նոր-Ջու-
ղայի Սօֆու սարի սեպաձև կատարին, Վանօրէից և
Եկեղեցեաց աղիւսակերտ ձուռձև կաթուղիկէների
խաչերին վերայ. Նոր-Ջուղայի կրօնասէր, ջերմեռանդ
և երկիւղած ժողովուրդն արդէն կանխած էր Ս.
Ամենափրկչեան Վանքում՝ նախքան կոչնակի և զան-
գակի հրաւերն. կարծում ես պատրաստուել էին
տօնել կրօնական մի մեծ հանգէս . . . : Ըստ սովո-
րութեան առաւօտեան ժամերգութիւնից յետոյ բա-

հանաներն Ս. Հօրն առաջնորդեցին Եկեղեցին և
սկսուեց Պատարագ. Եկեղեցական երգեցողութիւնը
մեր սպասածից առաւել ներդաշնակ և կանոնաւոր
գտանք՝ Պարսկաստանի այլ քաղաքաց հետ համեմա-
տած. արգարե Նոր-Ջուղան կարող է պարծիլ այս
կողմից 7) : «Հայր մեր»ի ժամանակ կարդացուեց
ՀՍՅՐԱՊԵՏՍԱԿԱՆ «Կոնդակ»ը ի լուր համայնից, որք
խճճուած էին Մայր Վանուց Տաճարում, Տաճարից
դուրս բախում և կտրների վերայ, բազմութիւնը յա-
թիւս կանգնած սրտի անձկանօք և խոնարհութեամբ
լսում էին, Հայաստանի սրտից, Արարատեան Մայր
Աթոռից իրենց հասած ս. պատգամներին . . . Ըն-
թերցումից յետոյ բեմին վերայ բարձրանալով Ս. Ա-
ռաջնորդը, սկսեց քարոզել ազդուօրէն, ժողովրդի
ոգևորութիւնն անսահման էր՝ զգում էր ինքզինքը
երջանկութեան կատարին հասած, Աւետարանի փր-
կարար հովանաւորութիւնը գոգցես ներգործում էր
զգալի կերպով սոյն ըոպէներում . . . Պատարագից
վերջ Ս. Հայրը քահանաների առաջնորդութեամբ
բարձրանալով Առաջնորդարանում հանգիստ արեց :
Ս. Ամենափրկչեան վանքը կենդանութիւն էր ստա-
ցել երթեկեղ ոգևորեալ բազմութեամբ. այսպէս
անցկացաւ և Նոյ. 23 ը. 24 ին կէսօրից յետոյ «Եկե-
ղ. Ուսումնարաններ»ի երկսեռ սաներն իրանց ուսու-

7) Եսայի Եպիսկոպոս Աստուածատրեանց իւր առաջնորդու-
թեան Բ. տարում (1892 թն) Սիւլիսայից բերել է տալիս Տ. Վա-
ղարոս՝ Հայկական Զայնագրութիւն իմացող քահանային, որի շը-
նորէիւ փոքր ժամանակում աշակերտողները վարժւում են ար-
հեստին մէջ. վերջիններս որքան որ մի որոշ դասակարգից անհա-
մակերել են նկատուում էր և նորաձեւութեանց հետեւողներ, բայց
միւս կողմից արհեստը գնահատողները քաջալերւում են, որով
ցարգ՝ եթէ ոչ բոլոր ժողովուրդը՝ գէթ նրա հասկացող մասը
ընտելացած է Հայկական հարազատ եղանակներին, որոնց պահ-
պանել են և պէտք է պահպանեն միայն Զայնանիւններն :

ցիւններով ներկայացան Ս. Հօրը պաշտօնական դահլիճում. մէկ կողմի վերայ կանգնեցան օրիորդներն և միւսին տղայք; որոց մօտին Ս. Կատարինեայ անապատի սեւագգեաց կոյսերն; որոնք զարմանքիս և հետաքրքրութեանս առարկայ էին իրենց ինձ տարօրինակ թուացող արեղայական փիլոնով ու վեղարովը, զարմանալի չէր ինձ այս հետաքրքրաշարժ անմօրուք արեղաների երևոյթից այլալիլ և աղշիլ . . . կոյս արեղաների չէի հանգիպած՝ բացի Տրփիսի Կուսաստանից և Երուսաղէմի Մայրապետանոցից; որոց կոյսերի արտաքին երևոյթ այնքան ուշադրաւ չէր եղել ինձ : Թէ՛ Նոր-Ջուղայի մատաղ սեւրունդն ինչպէս ողջունեց իւր Ս. Առաջնորդի շնորհաբեր գալուստը, այստեղ գրել աւելորդ չհամարեմ :

Առաջին նուագ օրիորդները սրտահան կակուղ ելեւէջներով; քնքոյշ սեւին լատուկ բարակ և սրտառուչ ձայնով երգեցին՝ «Արեք ո՞վ քոյրեր . . . » երգը. Տղայքը պատասխանեցին ներդաշնակ երգելով՝ «Օն անդըր մանկունք . . . » երգով. Յաջորդեց Արարատեան բարբառով պատրաստուած մի ճառով աշակերտներին մինը. — նորից օրիորդները սկսեցին սերաձայն աղու եղանակաւ՝ «Ջուարճացիք : . . . » երգը. — տղայք պատասխանեցին՝ «Քանի տարի որք մնացինք . . . » երգով. — սրանից լետոյ 12 տարեկան մի օրիորդ (Գոարիկ) համարձակ, ուրախ քայլերով և հրեշտակային անմեղ ժպիտներով կանգնեցաւ յանդիման Ս. Առաջնորդին՝ կանոնաւոր երերումներով և հրաշալի արտաբերութեամբ արտասանեց՝ «Թէ՛ իմն Հայրենեաց քնար սգաւոր . . . » յայտնի բանաստեղծութիւնը. շատ անգամ լսած էի բայց ոչ մի ժամանակ այնքան քաղցր չէր հնչած այն ականջիս, հոգւոյս ջղերին չէր դպած և վերջապէս ներքին դրութիւնս չէր ամբօխած, ինչպէս արեց այժմ քնքոյշ օրիորդը :

Օրիորդին յաջորդեցին իրան ընկեր օրիորդներ՝ «Ահա Հայր մեր վեհ . . . » երգով, որոց պատասխանեցին տղայք՝ «Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր . . . » երգովը. — Ս. Առաջնորդ հանդէսը փակեց աշակերտներին օրհնութիւն և քաջալերութիւն տալուց ըզկնի. — Ահա այսպէս Աստուծոյ նախախնամութեամբ լետ երկար և զթուարակիր ուղևորութեան Ն. Բ. Սրբազնութիւն Տ. Մաղաքիա Եպիսկոպոս Տէրունեանը ողջամբ ժամանեց իւր Առաջնորդական Գահին վերայ, ի Մայրավանս Ս. Ամենափրկչեան Նոր Զուղայի, և այսպէս յաջողութեամբ և փառօք վախճան տուեց իւր ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆը : Այժմ արդէն նա պարապում է վիճակային գործերով, Նոր Զուղայի Հայ Ժողովուրդն աղօթելով սպասում է տեսնել իրականացած իւր բոլոր յոյսերն և նկատումները յանձին Ս. Հօրն իւր ունեցած ժամանակակից աշխարհահայեցողութեան տեսակէտով, կը յուսան լինի Նա քաջ Հօտապետ անապահով անապատումս և որպէս հմուտ ղեկավար այե՞ծուփ ծովիս վերայ, ի կնիք ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆս Մաղթում եմ և ես խոնարհաբար, որ Աստուած լինի ձեռնտու և օգնական Ս. Հօրն իւր ամեն մի ձեռնարկութեանց մէջ, տան երկինք իրեն ոյժ և կարողութիւն գործել Տէրոջ այգում և պողաբեր անել ի փառս Հայաստան Եկեղեցւոյ . . . :



ՆՈՐ ԶՈՒՂԱ

ՆՈՐ — ԶՈՒՂԱ՝ Ասպահանի հարաւային կողմում՝ Զանգե-թու-ի գետի ափանց վերայ և Սօֆո-սարանունով՝ քարաժայռի հիւսիսակողման ստորոտումն է, զարգարուած պարտեզներով, ծառաստաններով

և այգիներով : Այն ծառերն են հովանաւորում Ն. Զուղալին, որք անդր-Քրիստոսեան դարերում Հայկական աստուածների պատգամներն էին հաղորդում իրենց տերւների գիւթական սօսաւիւնովն և որ այս պատճառով պաշտում էին ու իրենց մատաղ գոհերն էին լափում դիցապաշտ Հայերից . . . :

Ն. Զուղա հեռի է Ասպահանից կէս փարսախաչափ, որի հետ ունեցած յարաբերութիւնը հետաքննում են « Զանգա-րուդ » գետին վերայ կառուցուած աղիւսաշէն՝ հոյակապ կամուրջները, (սոյն գետի վերայ թռուով 9 կամուրջներ կան) : Զայէնդէ-րուտը 8) սկզբնաւորում է Լաւրիփաանի լեռնային սահմաններից, Ասպահանի և Նոր-Զուղալի միջով արեւմուտքից-արեւելքն է անցկենում, սփռելով երկրին վերայ իւր անհամար բարիքը. Ասպահանից տասնեակ փարսախ դէպի արեւելք ընթանալուց յետոյ կուլ է գրնում Գոլթի-խուէի (գուբ արեան) ծարաւուտ աւազներիւն. — Նոր-Զուղա բնութեան անգին բարիքներով օժտուած է. հողն արգաւանդ, ջուրն առատ և բարեհամ, օգն առողջարար, երկինքը պայծառ և սիրուն, տեսարանը՝ սրտաբաց. էլ սրանցից աւելին քնչ են պահանջում մարդիկ բնութիւնից : — Նոր Զուղալեցուց կրօնական հաստատութիւններն իրենց նախնեաց բարեպաշտութեան պանծալի կոթողները՝ տեսնողին հիացնում են. Նոր-Զուղան երբեմն 12,000 տուն Հայ և 24 Եկեղեցիներ է ունեցել իւր փառաւոր անցեալում այժմ 5-600 տուն Հայ և 12 Եկե-

8) Ըստ ոմանց ծագումն է Պարսկական Զայէնդէ (Ծնող, բըղ-խող) և Բուտ (Գետ) բառերի, բարդութիւնով (Զայէնդէ-րուտ) իմացում է « Ծնող, Բղխող » գետ :

Այսպէս կոչուելուն պատճառն էլ այն է՝ որ սկզբնաւորում է տեղերից մինչև սուգուելու տեղը՝ գետին տակից ջրեր են ծննդնում կամ բղխում :

ղեցիներ միայն ունի, զրկուած իւր նախկին նախանձելի վիճակից . . . բացի պատմութիւններից իրողութիւններին վկայ են հանդիսանում փուլ եկած կիսակործան տաճարներն և այլ հնութիւնների փրշուրները : Նոր-Զուղալի փառաւոր Եկեղեցիները չափազանցութիւն չէ ասել, որ գերազանցում են Տփլիսի և այլ տեղերի Հայկական տաճարներին. բոլորն էլ գրեթէ առանց բացառութեան ներքին որմերով ներկայացնում են գեղեցիկ նկարներ (կրածեփի վերայ). սրանցից առաջին տեղն է բռնում Ս. Ամենափրկչեան Վանուց տաճարն, որի ներքին շուքն ու փառաւորութիւնն անօրինակ է : Նախ որմերը (ներքին) հիւքից 1² մէթրաչափ բարձրութեամբ հին նկարէն ճենապակուց է, որմերի մնացեալ մասերը և տաճարին ամբողջ ծածկույթը ներկայացնում են Ս. գրոց խորհրդաւոր նկագներ՝ սկսեալ մարդկութեան նախածնողներից մինչև փրկագործութեան վերջին դարերը (նշանաւոր անցքեր միայն). կրածեփը ներկուած է իւզաներկով, որի վերայ ներկայանում են պատկերները, որոնց արանքները զարգարուած են ոսկեպաճոյճ ծաղկենկարներով, Եւրոպացի գիտնական ճանապարհորդները տեսնելիս առանց հիացումի չեն կարող զիտել Աստուծոյ բարձր անուան վայել փառաշուք այս տաճարիս, որ աշխարհիս յետամնաց մի անկիւնում կառուցուած է փոքրիկ քրիստոնեայ համայնքի ձեւքով և պաշտում այնտեղ Արարիչ տիեզերքի : Ափսոս որ պատկերահանը յայտնի չէ, նրկարներին ուշի ուշով դիտողը գործը չի վերագրում արեւելեան ճաշակի, « Պատմութիւն Նոր-Զուղայու » աւանդում է թէ « Յովհաննէս տիեզերալոյս կոչուած » մի Հայ վարդապետի գործ է, իսկ ժողովրդից շատերն աւանդում են թէ՛ նկարիչն է մի Բտալացի, որ ըստիս աւելի հաւանական ենթադրութիւն է,

քանզի նկարների վերայ փալում է Նտալական նկարչական հանճարին յատուկ գեղարուեստական ոգևորվ ներշնչուած մի րանաստեղծի վրձին, որ կենդանացրել է տաճարին որմերը :

Նոր-Ջուղայի գրեթէ իւրաքանչիւր Եկեղեցին ունի իրեն յարակից մի ալ Եկեղեցի, որ կոչուած է «ամարան Եկեղեցի» . — Այստեղի Հայ ժողովուրդն ասում են, որ «Նոր-Ջուղայեցւոց վերջին մնացորդներս շնորհիւ տեղույս փառաւոր տաճարներին ալսօր գոյութիւն ունենք, եթէ ոչ շուտով լքուած էր Նոր Ջուղան : Նախքան 1603-1605 թուականները թէսլէտե վաճառական Հայեր եղել են Ասպահանում, սակայն պատմութիւններից չունենք հաւաստիք թէ նոքա նշանակեալ գերեվարութեան թուականներից առաջ ունեցել են Եկեղեցի թէ ոչ :

Անկորուստ մնացած թուականները գրեթէ ամենքն էլ ցոյց են տալիս, որ գրանք շինուել են Փ. Գարուսի, կէս Գարուս ընթացքում գլուխ է եկել 24 տաճարների շինութեան գործը : Ոչ միայն Նոր-Ջուղայեցւոց Եկեղեցիները կրկին են՝ «ամարան» և «ձմերան» անուններով, ալ տներն էլ նոյնպիսի յարմարաւոր պայմաններով շինուած են : Նոր-Ջուղայեցիք հակամէտ են Բարույն, ծշմարտին և Գեղեցկին կողմը, սիրահար են գեղարուեստական նրմոյշների՝ ասածիս հեշտ կհամոզուի ընթերցողը, եթէ առիթ ունենայ այցելել Նոր-Ջուղայեցի մեծատան ապարանքին և աղքատի խրճիին, գրեթէ երկուքումն էլ հաւասարապէս պիտի տեսնէ կարգին կահաւորումն և զանազան նկարներով շքեղազարդուած վիճակ, թէև տների արտաքին տեսքը շատ վատ տպաւորութիւն են թողնում նորա վերայ իրենց տգեղութեամբ : Պակասում են Նոր-Ջուղայեցւոց այն ամենը, որ յատուկ են իւր Մայր Հայրենքում ապրող

համագգիներին, այն է՝ ժողովրդական բանաստեղծութիւններ, բանահիւսութիւններ, խաղեր, պարերգներ և այլն, որոնց ընդունակ որեւիցէ ժողովրդի միտքը՝ սուր, լիշողութիւնն արթննէ և հոգին ազնիւ կարող են լինել :

Նոր-Ջուղայեցիք գիտեն յարմարուիլ ժամանակակից պահանջներին, զարգիս ունեն շնորհիւ իրենց «Աղգային երկսեռ Ուսումնարանաց» և Կալիթայի «Մարգարեական ձեմարան»ի՝ Անգլիական պարկեշտ ու դրական սկզբունքներով դաստիարակուած կիրթ երիտասարդներ և երիտասարդուհիներ, որք ապագայ սերնդի կրթութեան գործի ղեկն իրենց ձեռքն առած՝ ըստ կարելւոյն ջանք և զոհողութիւն չեն խնայում տակաւ առ տակաւ յառաջադիմելու : Սակայն այստեղ չեմ կարող առանց տխրելու խոստովանել, որ Նոր Ջուղայեցի երիտասարդներից լինում են և այնպիսիներ ևս, որք ընդմիշտ լքանելով իրենց Հայրենիքը՝ գնում են դէպի Հնդկական երկիրներ և շտաբ քաղաքաւորութեան կորստաբեր հոսանքներից մղեղներէ պէս հոսում են ո՛ր գիտէ դէպի ուր . . . անտուգիւտ են այնպիսիներ՝ որք միտք են դրած լինել հաւատարիմ և օգտակար զաւակներ իրենց ազգին :





7569

0003549

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0003549

